Երկու պեղաշրջանների ընթացքում՝ բլրի գագաթի հարավային եզրին իրականացված աշխատանքները հնարավորություն տվեցին բացահայտելու այստեղ ի հայտ եկած վաղ և ուշ բրոնզեդարյան ճարտարապետական մնացորդների հարաբերությունը և հստակեցնել գտնված ուլունքների «գանձի» շերտագրական պատկանելությունը: Հուշարձանի այս, առավել խիստ հողմահարված հատվածում մշակութային շերտի ընդհանուր հզորությունը նվազագույնը 30սմ է, առավելագույնը՝ 162սմ: Պեղման առաջին տարում 10x10մ չափերով պեղավայրի (T02d) կրկնակի չափով ընդլայնումից հետո

	Քանակ	Քաշ
	13	55,27 գ (ընդհ.) 3,61 – 4,45 գ (նվազ. և առավ.)
	12	19,89 գ (ընդհ.) 0,57 – 2,87գ (նվազ. և առավ.)
	3	3,92 գ (ընդհ.) 1,02 – 1,49գ (նվազ. և առավ.)
	9	13,52 գ (ընդհ.) 0,92 – 2,85գ (նվազ. և առավ.)
	62	51,9 գ (ընդհ.) 0,51 – 1,45գ (նվազ. և առավ.)
	1	7,72գ



<sup>1</sup> Քաղկեդոնից և տալկից պատրաստված ուլունքները հետազոտվել և բնորոշվել են ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտի լաբորատորիաներում:




միայն պարզ դարձավ, որ շինությունների մնացորդները պատկանում են առնվազն երեք շինարարական փուլերի, որոնցից առաջին (ստորին) երկուսը վերաբերում են վաղ բրոնզի, իսկ երրորդը՝ ուշ բրոնզի դարերին: Ընդ որում, հիշյալ երեք փուլերից առաջինը ներկայացված էր քարերի մեկ շարք բարձրությամբ պահպանված կառույցի մի հատվածով, որտեղ պատին կից առկա էին հատակի մնացորդները՝ բաղկացած վաղ բրոնզեդարյան խեցեթեկորների համաչափ դասավորված շերտից: Նմանատիպ իրավիճակ մեզ հայտնի է Սոս Գյուլուկ հուշարձանի՝ Ա.Սագունայի կողմից ուշ էնեոլիթին վերագրվող VA շերտից (ըստ հեղինակի՝ մ.թ.ա. մոտ 3100թ.)<sup>1</sup>:

Վերը նշված կառույցն ակնհայտորեն ավերվել է (կամ ձևափոխվել) նոր շինարարական աշխատանքների արդյունքում, ինչը ներկայացված է տեղ-տեղ մինչև 60սմ բարձրությամբ պահպանված ուղղանկյուն (փոքր-ինչ սեղանաձև) կառույցի մնացորդներով: Վերջինս 7.7մ երկարությամբ և 2.90-3.65մ լայնությամբ մի շինություն է՝ շարված 30-37x18-27x12-17սմ չափի քարերով: Կառույցի հարավային հատվածում, որը եզերող պատը քիչ աղեղնաձև է, պահպանվել էր նաև պատերի ներքին մակերեսի՝ մինչև 4սմ հաստությամբ կավածեփը: Դեռևս այստեղ էլ ի հայտ է եկել խնդրո առարկա ուլունքների գանձը (աղ. III): Այն գտնվում էր 30սմ հզորության հողմահարված շերտի վերին հատվածում, որի մեջ ուլունքները սփռված էին 35-40սմ տրամագծով: Պեղումները «գանձի» միտումնավոր թաղման – թաքցնելու որևէ հետք ի հայտ չբերեցին: Մաղված հողի միջից գտնվեցին նաև մեկ մետաղե պարուրաձև հերակալ (աղ. II, 7), ուղղանկյուն բաժանարար և սարդիոնից պատրաստված սկավառա-կաձև 4 ուլունքներ, որոնց անմիջական առնչությունը վզնոցի հետ ակնհայտ չէ:

Դարկ է նշել, որ կառույցի այս հատվածները պարունակում էին անխառն, բացառապես վաղ բրոնզեդարյան խեցեղեն՝ ներկայացված ինչպես ռելիեֆ-ներձկված, այնպես էլ գծագարը թեկորների

<sup>1</sup> Sagona A., Sagona C., Excavations at Sos Hüyük, 1998-2000: Fifth Preliminary Report, *Ancient Near Eastern Studies*, 2000, vol. XXXVII, p. 60, Fig. 32-33.



■ - վաղ բրոնզեդարյան կառույցներ  
 + - վզնոցի գտնվելու վայրը



մնուչներով, ինչպես նաև ցուլի ամբողջական արձանիկ, սայլանիվի մոդել և այլն:

Նկարագրված ուլունքներն ունեն բազմաթիվ զուգահեռներ վաղ բրոնզեդարյան մի շարք հուշարձաններում:

Պարուրածն վերջավորություններով կախիկների ամենամոտ զուգահեռները հայտնի են Բերքաբերից (դամբ. թիվ 13)<sup>1</sup> և Կրաստանի Կորետի (Սաչխերե) հուշարձանից<sup>2</sup>: Վաղ բրոնզի դարում տարածված են եղել ճիշտ նույնատիպ գլխիկով շքասեղները, որոնց լավագույն օրինակը հայտնի է Գայտմազի հնավայրից. ընդ որում, հետազոտողներն այն թվագրում են մ.թ.ա. մոտ 2500թ.<sup>3</sup>: Հիշյալ կախիկ-ուլունքներն իրենց բազմաթիվ զուգահեռներն ունեն նաև Կառնուտ, Գեղարոտ և այլ հնավայրերի համաժամանակյա խեցեղենի զարդապատկերներում:

Ինչ վերաբերում է կաթիլածն ուլունքներին, ապա դրանց անմիջական զուգահեռները հայտնի են Արագածի դամբարանի նյութերում<sup>4</sup>: Նույնատիպ ոսկուց ուլունքներ հայտնի են Տրոյա II Գ-ին պատկանող գանձ A-ի («Պրիամոսի գանձը») նյութերում և թվագրվում են մ.թ.ա. 26-րդ դարի սահմաններում<sup>5</sup>:

Վաղ բրոնզի դարում քաղկեդոնի (կվարցի) լեռնային բյուրեղի օգտագործման առնչությամբ պետք է ասել, որ կուր-արաքսյան հուշարձաններում բազմաթիվ են այս նյութերից պատրաստված

<sup>1</sup> *Գասպարյան Ս.Ե.*, Բերքաբերի կուր-արաքսյան մշակույթի դամբարանադաշտը, *ԼՂԳ*, 1991, 6, աղ. IV, 9, էջ 121:

<sup>2</sup> *Кухтин Б.А.* Археологическая маршрутная экспедиция 1945 года в Юго-Осетию и Имеретию. Тбилиси, 1949, табл. LXVIII.

<sup>3</sup> Отчет Квемо-Картлиуской экспедиции (1965-1971гг.) (на груз. яз. с русским резюме). Тбилиси, 1975, с. 210, рис. 55, 8-9; Unterwegs zum Goldenen Vlies. Archäologische Funde aus Georgien. Hrsg. A. Miron, W. Orthmann. Saarbrücken, 1995, s. 222, kat. No.46.

<sup>4</sup> Ռ.Թորոսյանի, Լ.Պետրոսյանի պեղումներ, 1980թ. էԳԹ, No. 3965/6:

<sup>5</sup> *Пиотровский Ю.Ю.*, Периодизация ювелирных изделий в Циркумпонтийской провинции (энеолит-ранняя бронза). – В кн.: Шлман – Петербург – Троя. СПб. 1998, с. 82, илл. 23; *Korfmann M.*, Der "Schatz A" und seine Fundsituation. Bemerkungen zum historischen und chronologischen Umfeld des "Schatzfundhorizontes" in Troia. – Beiträge zur Vorderasiatischen Archäologie. W.Orthmann gewidmet. Hrsg. J.-W. Meyer, M.Noák, A. Pruß. Frankfurt am Main. 2001. ss. 212-235.

սկավառակածն ուլունքները (ինչպես օրինակ՝ Չազլի Բարզոնդ I - դամբ. 1<sup>1</sup>; Վելիքենտ - դամբ. 11<sup>2</sup>, Օզնի – մանկական արկղային թաղում<sup>3</sup>, Արսլանթեփե - «Արքայական» դամբարան<sup>4</sup> և այլն):

Կուր-արաքսյան մշակույթի այս յուրօրինակ գտածոն, անկասկած, մեծ հետաքրքրություն է ներկայացնում իբրև զարդարվեստի եզակի մնուչ՝ միաժամանակ աղբյուր հանդիսանալով նոր ուսումնասիրությունների և դատողությունների համար:

<sup>1</sup> *Ростунов В.А.*, Куро-аракские могильники Северной осетии. Погребальный обряд древнего и средневекового населения Северного Орджоникидзе. 1988, с. 23.

<sup>2</sup> *Gadzhiev M.G., Kohl Ph.L., Magomedov R.G., Stronach D., Gadzhiev Sh.M.*, Daghestan-American Archaeological Investigations in Daghestan, Russia 1997-99. *Eurasia Antiqua*. 2000, Band 6, p. 91.

<sup>3</sup> *Жоржикашвили А., Гогодзе Э.*, Памятнику Триалети эпохи ранней и средней бронзы (раскопки 1936-1940, 1947-1948гг.). Тбилиси. 1974, с. 36.

<sup>4</sup> *Frangipane M., Di Nocera G.M., Hauptmann A., Morbidelli P., Palmieri A., Sadori L., Schultz M. and Schmidt-Schultz T.*, New Symbols of a New Power in a "Royal" Tomb from 3000 BC Arslantepe, Malatya (Turkey). *Pak'orient*, 2001, vol. 27/2, p. 109.



Խանգադյան Է. (ՉԱԻ)

## ԼՃԱՇԵՆԻ ՎԻՇԱՊՈՇ

Հայկական լեռնաշխարհը բազմաթիվ հնագույն հուշարձանների կողքին պահպանել է քաղաքակրթության պատմության վաղ էջերի հետ կապվող յուրօրինակ պաշտամունքային կոթողներ՝ քարե հսկա ձկներ, որոնք անվանվում են վիշապներ: Վերջիններս հայտնաբերվել են Հայկական լեռնաշխարհի գրեթե ողջ տարածքում:

Հիմնականում նրանք գտնվել են լեռնային գոտիներում, ջրերով, բուսականությամբ, արոտատեղիներով հարուստ վայրերում, աղբյուրների ակունքներում, լճերի եզրերին: Վերջինիս լավագույն ապացույցը Գեղամա լեռներն են, Արագածը, Սևանա լճի Արտանիշի ծովախորշը, Ջավախքը և այլն:

Վիշապների հայտնաբերմամբ և ուսումնասիրությամբ զբաղվել են շատ գիտնականներ: Հատկապես մեծ ուշադրություն է նվիրվել Գեղամա լեռների, Արագածի վիշապներին, որոնց առաջին հայտնագործողներն ու ուսումնասիրողներն են Ն.Յ.Մառը, Յու.Ի.Ամիրնովը, Բ.Բ.Պիոտրովսկին, ավելի ուշ՝ Լ. Բարսեղյանը և տողերիս հեղինակը:

Գտնվել են երկու տիպի վիշապներ՝ ծուկ, ոչ շատ մեծ, կոպիտ մշակված մակերեսով, պարզունակ և կարող են վերագրվել մշակույթի զարգացման նեոլիթյան փուլին: Նման մի վիշապ ծուկ հայտնաբերվել է Աշտարակի շրջանի Ոսկեվազ գյուղի Ախթամիր բնակավայրի մոտ, Քասաղ գետի աջ ափին: Ավելորդ չէ նշել նաև, որ Ախթամիր բնակավայրի վերգետնյա նյութերում հայտնաբերվել են նեոլիթյան խեցեղենի բեկորներ: Նման վիշապներ հայտնաբերվել են Գեղամա լեռներում:

Չուկ վիշապների մյուս տեսակը արվեստի լավագույն նմուշների շարքին կարելի է դասել: Դրանք բնորոշվում է ձկան գլխին զգած՝ զոհաբերված ցլի պատկերով: Ամենայն հավանականությամբ հարա-

տել են բրոնզի դարաշրջանի մշակույթի վաղ փուլերում: Այս խմբին է պատկանում Լճաշենի վիշապը:

1980թ. Լճաշեն գյուղի դաշտում, ոռոգման նպատակով խողովակների տեղադրելիս գտնվել է մի մեծածավալ երկարավուն քար:


Մեկնելով հայտնաբերման վայրը, տեսանք, որ այն ձկնակերպ վիշապ է, բավականին լավ պահպանված (այժմ կանգնեցված է Մեծամորի թանգարանի մուտքի առջև, նկ. 1):

Վիշապն ամբողջական է, ունի մոտ 3.7մ երկարություն: Պատրաստված է ծակոտկեն բազալտից: Ստորին մասը նեղ է, գրեթե գլանաձև (տրամագիծը՝ 0.47մ): Դեպի վեր իրանը լայնանում է և զագաթի մոտ թեք կտրվում, ձկան գլխի ձև ստանում (տրամագիծը՝ 0.72մ):

Լճաշենի վիշապի գլխին զգած է զոհաբերված ցուլը կաշվով և վերջավորություններով: Հստակորեն պատկերված են ցլի պանջներն ու գլխի երկու կողմերում կամարածև իջնող, դեպի ներս թեքված ծայրերով նրբագեղ եղջյուրները: Բերանից հոսող ջուրը մի փոքր թեք է պատկերված և ունի մոտ 0.45մ երկարություն: Առջևի վերջավորությունների մի հատվածը պատկերած է վիշապաքարի կողային մակերեսների վրա: Ցլի մաշկը կոթողի զագաթով իջնում է մեջքի վրա և ավարտվում բազմազալար պարուրածև փաթույթ ունեցող պոչով (նկ. 2):



Նկ. 1



Նկ. 2



Տեղանքի ուսումնասիրությունից պարզվեց, որ վիշապը գտնվել է Լճաշեն գյուղից 2.5 կմ հարավ-արևմուտք, մի հնագույն դամբարանադաշտի տարածքում, որտեղ այժմ էլ պահպանված են կրոն-լեխներով շրջապատված ոչ մեծածավալ դամբարանաքմբեր:



Սկ. 3

Վիշապը ջրատար խողովակներ տեղադրելիս հայտնաբերվել է գետնի մակերեսից մոտ 1.5 մ խորության մեջ: Նրա մոտ հողի մեջ սփռված ոսկորները և խեցու բեկորը վկայքում են, որ վիշապի տակ թաղում է եղել: Եվ իրոք, գետնի մակերեսից մոտ 2.5 մ խորության մեջ բացվեց հիմնահողային մի դամբարան: Այն բավականաչափ վնասված էր ջրատար խողովակի համար տեղ փորելիս, սակայն պեղումից հետո բացված պատկերը ապացուցում է, որ դամբարանը հիմնականում թալանվել է ավերվել է ավելի վաղ ժամանակում:

Քառանկյունաձև հիմնահողային դամբարանն ուղղված էր հյուսիսից-հարավ (նկ. 3): Հանգուցյալի գանգը գտնվեց դամբարանի հյուսիսային կողմում վնասված վիճակում: Կմախքի ոսկորները ցաք ու ցրիվ էին արված: Գանգի մոտ պահպանվել էին միայն ողնաշարի

ողերի մի մասը և նրանց մոտ գործվածքի հետքերով կավի կտորներ (աղ. 1, 4):

Գանգի դիրքը հուշում է, որ հանգուցյալին պառկեցրել են ձախ կողքի, կծկված վիճակում: Գանգի տակ, քունքի մոտ գտնվեց բրոնզե ծամկալ (աղ. 1, 1), իսկ կմախքի, հավանաբար մեջքի կողմում, դրված էր մի մեծ, քայլող առամնավոր դրոշմիչով զարդանկարված կավաման (աղ. 1, 8), որի բեկորները գտնվեցին *in situ*: Կենտրոնում ընկած միջին մեծություն ունեցող անմշակ քարի մոտ, հողի մեջ, գտնվեցին գունազարդ և հասարակ խեցեղենի բեկորներ, բջջազարդ կավամանի մասեր, ոսկրե հերուն, սարդիոնե ուլունք (աղ. 1: 3, 5, 6 - 9):

Դամբարանի հարավ-արևմտյան մասում հայտնաբերվեց կողքի ընկած ամբողջական հասարակ, կոպիտ թաղարներ (նկ. 4): Դամբարանի տարածքում գտնվեցին նաև խոշոր և մանր եղջրավոր կենդանիների ոսկորներ:



Սկ. 4

Այսպիսով, դամբարանի գույքը կազմում են յոթ կավամանները, ոսկրե հերունը, բրոնզե ծամկալը և սարդիոնե ուլունքը (աղ. 1):

Անդրադառնալով դամբարանի կառուցվածքին, հարկ է նշել, որ հիշյալ դամբարանադաշտին բնորոշ են դամբարանաբլուրներ շրջապատված կրոնլեխներով: Բնականաբար պեղված դամբարանը բացառություն չի կարող կազմել, ուստի պատկանում է նույն խմբին:



Լճաշենի վիշապի դամբանաբլուրում հայտնաբերված նյութերը բազմաթիվ զուգահեռներ ունեն միջին բրոնզի զարգացած փուլի հուշարձաններում:

Գալարածև ոլորված բրոնզե ծամկալն իր զուգահեռներն ունի Յառիճի մ.թ.ա. XVIII-XVI դդ. թվագրվող № 65<sup>1</sup> և Վերին Նավերի մ.թ.ա. XVIII-XVI դդ. № 9 դամբարանի նյութերում:<sup>2</sup> Վերջինիս գունազարդ խեցեղենի սանրատամ շեղանկյունների գոտիների զարդանկարը նույնպես զուգահեռն ունի Լճաշենի վիշապի դամբարանի խեցեղենի հետ:<sup>3</sup>

Գալարածև ոլորված ոսկե ծամկալներ հայտնաբերվել են Թռեղքի միջին բրոնզի I խմբի՝ մ.թ.ա. XX-XVIII դդ. թվագրվող XIV դամբարանում:<sup>4</sup>

Վիշապի դամբանաբլուրում հայտնաբերված խեցեղենը բազմաթիվ զուգահեռներ ունի Յայաստանի միջին բրոնզի դարաշրջանի հուշարձաններում, հատկապես Արարատյան հարթավայրում՝ Ծիծեռնակաբերդում, Էջմիածնում, Գրամփայում: Բազմաշար զիգագների և սանրատամ շեղանկյունների զարդանկարով գունազարդ խեցեղեն հայտնաբերվել է Մեծամորի ամրոցում և դամբարաններում:

Մեծամորի կճումներից մեկի վրա համատեղված են զիգագ և սանրատամ շեղանկյունների գոտիները:<sup>5</sup> Ինչ վերաբերում է վիշապի դամբանաբլուրում հայտնաբերված բջջազարդ և հասարակ խեցեղենին, դրանք ամենուր ուղեկցում են վերոհիշյալ գունազարդին:

Սևանա լճի հյուսիս-արևմուտքում, ցամաքած տարածքում պեղված հիմնահողային № 6 դամբանաբլուրում հայտնաբերված խեցեղենի մեծ մասը զարդարված է սանրատամ շեղանկյուններով: Լճաշենի № 6 դամբանաբլուրն ուշագրավ է նաև նրանով, որ նրա արևե-

<sup>1</sup> Т.Хачатрян, Древняя культура Ширака, Ереван, 1975, с. 116, рис. 71, с. 118.

<sup>2</sup> Գ.Արեշյան, Դ.Սիմոնյան, Գ.Ասրգսյան, Գ.Քոչարյան, Դ.Օհանյան, Յայագիտական կենտրոնի 1977-1979 թթ. դաշտային հնագիտական աշխատանքները, Բանբեր Երևանի Յամալսարանի, 1979, № 2, Երևան, էջ 215, նկ. 3:

<sup>3</sup> Նույն տեղում էջ 215, տախտ. II, 1:

<sup>4</sup> Э. М. Гогодзе, Периодизация и генезис курганной культуры Тrialeti, Тбилиси, 1979, с. 13-104, табл. 21, 32.


<sup>5</sup> Emma Khanzadian, Metsamor 2, La Necropol I, գում. աղ. 1.

յան եզրի երկու անկյուններում դրված էին զոհաբերված ցլերի գանգերն ու վերջավորությունները, կաշվով ու պոչով հանդերձ:<sup>1</sup>

Անշուշտ, երկու դեպքում էլ մենք գործ ունենք հանգուցյալին երկինք համբարծվելու ծեսի հետ: Այսպիսով, Լճաշենի վիշապը հանդես է գալիս, որպես համբարծող:<sup>2</sup>

Ամփոփելով հարկ է նշել, որ Լճաշենի վիշապի դամբանաբլուրում հայտնաբերված նյութերի զուգահեռները հնարավորություն են ընձեռում այն թվագրելու մ.թ.ա. XVI-XIV դդ.:

Աղյուսակ 1



<sup>1</sup> Է.Վ.Խանզադյան, Լճաշենի № 6 կուրգանը: Տեղեկագիր, թիվ 2, 1960, նկ. 1:

<sup>2</sup> Ատրպետ. Վիշապազանց պաշտամունքը, Բազմավեպ, № 7-8, 1931, Կենստիկ, Ս.Ղազար, էջ 31:



Պետրոսյան Լ.  
Ենզիբարյան Ն. (ՀԱԻ)

## ԱՂԱՎԱՏԱՆ ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏԻ 2003 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ (նախնական հաղորդում)

Դամբարանադաշտը գտնվում է Աղավնատուն գյուղից (Արմավիրի մարզ) հյուսիս-արևմուտք և ընդգրկում է մոտ 100հա տարածք:<sup>1</sup> Պեղումների առաջին տարում այստեղ բացվել են 15 դամբարան (Ն.Պետրոսյան, 2003 թ. 92-96): Երկրորդ տարում պեղված դամբարանների թիվը 33 է (№ 16-48): Տարածքում դամբարանները տեղաբաշխված են անկանոն և հիմնականում գտնվում են թեթևության վրա, որի պատճառով քարահողային լիցքը և կրոնլեխաշարերը պահպանվել են մասնակիորեն: Որոշ դամբարանների կենտրոնում պահպանվել է միջին մեծության քարերից կազմված կույտ: Կրոնլեխները շարված են փոքր ու միջին մեծության քարերով, բացառությամբ № 24 դամբարանի, որի քարերը ուղղահայաց կանգնեցված են: Քարահողային լիցքերի բարձրությունները տատանվում են 0.2-1.0մ սահմաններում: Դամբարանախցերը, որոնք հիմնականում ուղղված են հյուսիս-հարավ կամ արևելք-արևմուտք, ծածկված էին մեկից չորս սալերով կամ խոշոր քարաբեկորներով: Խցերը հիմնականում ունեն ուղղանկյան տեսք, մի մասն էլ հարմարեցված է ժայռի ճեղքերին, բացի № 37 դամբարանից, որ վերգետնյա թաղում է (խցերի չափերն են 2.4-1.0մ երկարություն 1.4-0.8մ լայնություն, 1.2-0.5մ խորություն):

<sup>1</sup> Պեղումները կատարվում են Ամերիկյան Գֆոնելեր հիմնադրամի Հայաստանյան մասնաճյուղի միջոցներով (տնօրեն Բ.Գասպարյան):

Դամբարանախցերի պատերը շարված են մեկից չորս շարք խոշոր կամ միջին մեծության քարով, որոշ դեպքերում որպես պատ է օգտագործվել ժայռը (դամբ. № 21, 26, 27, 40): Իսկ հատակ ծառայող տուֆի շերտի անհարթությունները փակվել են հողով և մանր քարերով: Ի տարբերություն 2002 թվականի, պեղումների ժամանակ հայտնաբերվել են մարդկային (դամբ. № 37, 48 ) և կենդանական (դամբ. № 35, 42) ոսկորների մնացորդներ: Առաջին տարում պեղած դամբարանները վերաբերում էին ուշ բրոնզի շրջափուլին:

2003 թվականին պեղումները ընդլայնեցին դամբարանադաշտում կատարված թաղումների ժամանակագրությունը: Հայտնաբերված նյութերը հիմնականում խեցանոթներ են, փոքր թիվ են կազմում մետաղե զարդերը (մատանիներ, ականջօղեր, ապարանջան): Հետաքրքիր են սարդիոնից, բրոնզից, ծարիրից, մածուկից տարատեսակ ուլունքները, հատկապես № 38 դամբարանից հայտնաբերվածները<sup>1</sup>:

*Դամբարան 20* (կոորդինատներ N 40° 14' 37.0", E 044° 13' 46.0", բարձրությունը 974մ): Կրոնլեխի (տրամագիծը 7.0մ, քարահողային լիցքի բարձրությունը 1.0մ) կենտրոնում, երկու սալով ծածկված հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք ուղղված դամբարանախցին (1.8x0.93x0.7մ) հյուսիսային պատ էր ծառայում ժայռը: Արևմտյան պատին ուղղահայաց իրար մոտ դրված էին գունազարդ (աղ. II նկ. 2) և հասարակ, բաց վարդագույն խոհանոցային կճուճներ (աղ. II նկ.4): Գունազարդ կճուճը պատկանում է միջին բրոնզի կարմիրբերդյան մշակույթին և հայտնի է Կարմիր-բերդ, Հառիճ, Մեծամոր, Վերին-Նավեր և այլ հուշարձաններից:

*Դամբարան 17* (կոորդինատներ N 40° 14' 36.5", E 044° 13' 46.2", բարձրությունը 977մ): Որպես կրոնլեխի սահման օգտագործված ժայռի դիրքի պատճառով, կրոնլեխը օվալաձև է (տրամագիծը 5.3-4.4մ): Դամբարանախցից (2.23x1.4x0.6մ) հայտնաբերվեցին ամբողջական և բեկորային չորս խեցանոթ՝ սև, փայլեցված մակերեսով, ուսին թեք գծանախշերից կազմված գոտիով սափոր (աղ. III, նկ. 10), երկթեք իրանով սև փոքր սափոր (աղ. III, նկ. 6), վարդագույն, խոշորահատիկ ավազախառ կավից ձեռածեփ թասի կես (աղ. III, նկ.

<sup>1</sup> Նյութերի մի մասը գտնվում է մշակման ընթացքի մեջ:



9) և երկփող պատվանդանի բեկոր (աղ. III, նկ.7): Հայտնաբերվել են բրոնզե երկու օղ-մատանիներ (աղ. III, նկ. 2,3) և օբսիդիանից գործիք (աղ. III, նկ. 4):

**Ղամբարան 19** (կոորդինատներ N 40° 14' 35.8", E 044° 13' 47.0", բարձրությունը 972մ): Կրոնլեխի տրամագիծը 3.8մ, հյուսիս-հարավ ուղղված դամբանախցի (1.5x1.1x0.95մ) պատերը շարված են ուղղահայաց դրված քարերով, իսկ որպես հարավ-արևմտյան պատ օգտագործվել է ժայռը: Կենտրոնում դրված էին սև, փայլեցման հետքերով սափոր (աղ. III, նկ. 8) և ուսին սեպերից կազմված գոտիով մոխրագույն կճուճ (աղ. III, նկ.5): Անոթների շրջակայքից հավաքված ուլունքները հիմնականում պատրաստված են մածուկից. մի քանի օրինակ սարդիոնից և երկուսը՝ բրոնզից (աղ. III նկ. 1):

**Ղամբարան 22** (աղ. I) (կոորդինատներ N 40° 14' 38.5", E 044° 13' 49.1", բարձրությունը 980մ): Այս դամբարանից հայտնաբերվել են սև, քայքայված մակերեսով (աղ. IV նկ.5) և սև, տափակ, ուղղանկյունաձև կանթով, հարթ շուրթով կճուճ, որի իրանի վերին մասը հարդարված է խորադիր, լայն ակոսով արված նախշով (աղ. IV նկ.2):

**Ղամբարան 29** (կոորդինատներ N 40° 14' 37.4", E 044° 13' 40.1", բարձրությունը 973մ): Երկու խոշոր քարաբեկորներով ծածկված, արևելք-արևմուտք ուղղված դամբանախցում (1.7x0.9x0.8մ), սալերից 10սմ ցած հայտնաբերվեց վաղ բրոնզեդարյան գնդաձև կանթ (աղ. IV, նկ. 4): Արևելյան պատի դիմաց դրված էին երեք սև փայլեցված, ուռուցիկ հատակներով խեցանոթներ՝ երկու կճուճ (աղ. IV, նկ. 3, 6) և սափոր (աղ. IV, նկ. 7): Հայտնաբերվեցին ծարիրից սկավառակաձև և ոսպածև, սարդիոնից, ապակուց, մածուկից կտրտված և գլանաձև ուլունքներ (աղ. IV նկ.1):

Ներկայացված ուշ բրոնզեդարյան դամբարանների նյութերից սեպաձև նախշերով կճուճի զուգահեռներն առկա են Արթիկի առաջին և երկրորդ խմբի դամբարաններում, Լոռի բերդի, Շիրակավանի, Աղավնաձորի, Ղնձկուտի դամբարանադաշտերից և Աղավնատան № 7 դամբարանից (Տ.Պապուկյան, 1979, սուր. № 9. 63, 64, 83, 124, 155, 158; 242, 252, 271, 285, 301, 337, 380, 415, 465, 474, 635; Տ.Դեղձյան, 1981, տաբլ. XIV; Թորոսյան, և ուրիշներ, 2002, աղ. XXVIII/10-12; XXXII/20, Լ.Քոչարյան, 1985, տախտակ III/2; Տ.Եսայան, 1976, տաբլ. 95/7, 96/2; Ա.Սարգսյան, 2003, ս. 94 տաբլ. 2/1):

Հայտնի են նաև Վրաստանում՝ Գաղթեկելից, Գրմա-Գելից, Բեշտաշենից, Սցխեթից (Ք.Սալաթյան, 1979, տաբլ. XXII/6, XXIV/11, XXVIII/20; Դ.Կորիձե, 1953, տաբլ. VII, VIII, X; Բ.Կոբաքչյան, 1941, ս. 60, 67):

Հետաքրքիր է № 22 դամբարանի հարթ շուրթով կճուճը: Նման անոթները բնորոշ են ուշ բրոնզի և վաղ երկաթի համալիրներին՝ Լոռի-բերդ, Մեծամոր, Շիրակավան, Չեչմանիս և այլն: Բայց այս անոթի վրա ուշագրավը եզակի զարդանախշն է, որի նախատիպ կարող են հանդիսանալ միջին բրոնզի դարաշրջանի կետանախշ օրինակները, ինչպիսիք առկա են Վերին Նավերի, Քարաշամբի, Լճաշեն 223 դամբ., Գրմա-Գելիի, Խանլարի դամբարանադաշտերի նյութերում (Ա.Սիմոնյան, 1990, ս3/1, Ա. Գեորգյան, 1992, տաբլ. XLIX/3; Դ. Կորիձե, 1953, ս/8; Կ. Գումբել, 1948, ս/11):

Ուշ բրոնզեդարյան հետաքրքիր խեցեղենայիններից են երկփող պատվանդանները: № 17 դամբարանից հայտնաբերված գլանաձև միջամասով պատվանդանի բեկորի ամբողջական օրինակները հայտնի են Կարմիր-բերդից և Երևանից (Գ.Արշալույսյան, 1971, ս/11; Տ. Եսայան 1969, տաբլ. 29/2, 33/7):

№ 29 դամբարանից հայտնաբերված սկավառակաձև ծարիրե ուռուցիկ բրոնզե օրինակները հայտնի են Արթիկի, Շիրակավանի, իսկ ոսկին Լճաշենի և Մեծամորի ուշ բրոնզեդարյան դամբարաններից (Տ.Պապուկյան, 1979, սուր. 238, 404, 541; Ռ.Թորոսյան, և ուրիշներ 2002, XVI/10, XXXII/18; Ա. Մնացականյան, 1957, ս. 151, ս. 11): Իսկ Էլառի երկաթեդարյան № 17 դամբարանի սկավառակաձև և ոսպածև ուլունքները հանդես են գալիս միասին (Տ.Խանզադյան, 1977, աղ. XXXVIII/1, նկ. 144):

Ներկայացված ուշ բրոնզեդարյան դամբարաններից հայտնաբերված մյուս իրերը տիպական են և տարածված համաժամանակյա հուշարձաններում:

Ղամբարաններից վերջինը, որը բնորոշում է 2003 թվականի պեղված դամբարանների ժամանակագրության վերին սահմանը № 45 դամբարան է:

**Ղամբարան 45** (կոորդինատներ N 40° 14' 39.4", E 044° 13' 42.7", բարձրությունը 986մ): Բարձր դիրքի պատճառով հողը և մանր քարերը լվացվել էին և քարարկղային դամբանախցի (1.8x1.1x0.6մ)



պատերը բացվել էին: Խցի կենտրոնում դրված էր սև, փայլեցված մակերեսով կճուճ (աղ. II նկ. 3), իսկ արևելյան պատի մոտ՝ երկաթե դանակ (աղ. II նկ. 1): Կճուճը բնորոշ է վաղ երկաթեդարյան համալիրներին Մեծամոր, Շիրակավան, Օշական, Լճաշենի II դամբարադաշտ,<sup>1</sup> Մաստարա<sup>2</sup> (*E Khanzadian*, 1995, pl. 85/7, 99/4; *Ռ. Թորոսյան*, և ուրիշներ, 2002, աղ. XLVI/9; *Ս. Եսայան, Ա. Կալանտարյան*, 1988, տաբլ. ХСХI/1, 12): Իսկ երկաթե ուղիղ դանակը հայտնի է Չայրավանքից, Արթիկի երրորդ խմբի դամբարաններից և համաժամանակյա այլ հուշարձաններից (*Տ. Խաչատրյան*, 1957, с. 96, p. 2; *Տ. Խաչատրյան*, 1975, p 151):

Այսպիսով, Աղավնատան դամբարանադաշտի 2003թ. պեղումներով ընդլայնվեց կատարված թաղումների ժամանակագրությունը՝ մ.թ.ա XVIII դ. II կեսից մինչև IX դ. մ.թ.ա:

#### Չրականություն

1. *Լ. Քիչազով*, Աղավնածորից և Չորադրյուրից հայտնաբերված նորահայտ իրեր, ԼՅԳ, № 4, 1985:
2. *Ս. Ղևերյան*, Հնագիտական հետազոտություններ Տաշիր-Չորագետում, Երևան, 2001:
3. *Ռ. Թորոսյան, Օ. Խնկիկյան, Լ. Պետրոսյան*, Հին Շիրակավան, 2002:
4. *Է. Խանգաղյան*, Էլառ-Դարանի, Երևան, 1979:
5. *Գ. Արեշյան*, Материалы из раскопок кармирбердского могильника в музее Грузии, Բանբեր Երևանի համալսարանի, 1970, № 1.
6. *Ա. Գեվորյան*, Раскопки Карашамбского некрополя (предварительное сообщение), Հնագիտական աշխատանքները Չայաստանի նորակառույցներում, Երևան, 1992:
7. *Կ. Գումմель*, Некоторые памятники раннебронзовой эпохи Азербайджана, КСИИМК, XX, М-Л, 1948, с. 15-28.
8. *Ս. Դեվեճյան*, Лори-Берд I, Երևան, 1981.
9. *Ս. Եսայան*, Երևան (археологический очерк), Երևան, 1969.
10. *Ս. Եսայան*, Древняя культура племен северо-восточной Армении, Երևան, 1976.

<sup>1</sup> Դամբարան N1, պեղումները Լ. Պետրոսյանի:



<sup>2</sup> Դամբարաններ N5, 18, 19, 26 պեղումները Պ. Ավետիսյանի:

11. *Ս. Եսայան, Ա. Կալանտարյան*, Ошакан I, Երևան, 1988.
12. *Դ. Կորիձե*, Памятник поздне-бронзовой эпохи из Тбилиси, Вестник гос. Музея Грузии XVII—Б, Тбилиси, 1953, 127-155.
13. *Բ. Կուֆտին*, Археологические раскопки в Триалети I, Тбилиси, 1941.
14. *Ա. Մնացականյան*, Раскопки курганов на побережье оз. Севан в 1956г, СА, 1957, № 2.
15. *Ա. Պետրոսյան*, Предварительные результаты раскопок Ахавнатунского могильника в 2002г, сб. Археология, этнология и фольклористика Кавказа, Երևան, 2003.
16. *Կ. Սիլվեստրի*, Восточная Грузия в конце бронзового века, Тбилиси, 1979.
17. *Ա. Սիմոնյան*, Новая трактовка социокультурной общности эпохи средней бронзы Армении, ИФЖ, 1990, № 2, с. 188-208.
18. *Տ. Խաչատրյան*, Раскопки в Айриванке, Известия общественных наук, 1957, № 12, с. 95-101.
19. *Տ. Խաչատրյան*, Древняя культура Шурака, Երևան, 1975.
20. *Տ. Խաչատրյան*, Артикский некрополь, Երևան, 1979.
21. *Է. Khanzadian*, Metsamor 2, La Necropole, № 1, Paris, 1995.






Աղյուսակ I





Դամբարան N22: Քառակազիծ  
0 0.5 1 1.5 2m

Աղյուսակ II









Մեխթյան 4. (ՀԱԻ, ԷԹ)

ԱԳԱՐԱԿԻ ՄԻՋԻՆԲՐՈՆՁԵԴԱՐՅԱՆ ԽԵՑԵՂԵՆԻ  
ԲՆՈՒԹԱԳՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՁ

Ագարակի I-IV տեղամասերի խաթարված շերտերից, 2001-2002 թթ. հայտնաբերված խեցեղենի կազմում առկա են նաև միջին բրոնզի (ՄԲ) տարբեր փուլերին բնորոշ կավանոթների օրինակներ (հիմնականում գունազարդ): Նշվածներն առավելապես փաստագրվել են I հարթակի հյուսիս-արևմտյան և արևմտյան հատվածներում (I-III տեղամասեր՝ I<sub>11</sub>, L 9-10, M 9, N 9): Այդ տեղամասերում միջին բրոնզի անխաթար շերտեր կամ շինարարական հորիզոններ դեռևս չեն արձանագրվել: Հատկանշական է, որ ՄԲ խեցանոթների հիմնական զանգվածը պարունակող I<sub>11</sub> և N 9 քառակուսիներում, հաշվառված բեկորների թվի մեջ դրանք համապատասխանաբար կազմում են 0,06 և 0,88 տոկոսը: Այս հանգամանքը թույլ է տալիս ասելու, որ բնակատեղիի վերոհիշյալ հատվածները խնդրո առարկա ժամանակաշրջանում կառուցապատված չեն եղել (ամենայն հավանականությամբ ՄԲ շերտերը դեռևս չպեղված հատվածներում են) կամ չպահպանված ՄԲ շերտերն այս մասում աննշան հզորություն են ունեցել:

Հայտնաբերված մոնուշների ձևաբանական առանձնահատկություններն ու զարդաբանությունը ցույց են տալիս, որ Ագարակում ունենք միջին բրոնզի խեցեղենի թռեղք-վանածորյան (ԹՎ), կարմիրբերդյան (ԿԲ), սևան-արցախյան (ՍԱ) և կարմիրվանքյան (ԿՎ) տիպաբանական կազմերին բնորոշ օրինակներ: Այս հանգամանքը նկատի ունենալով քննարկվող նյութը ստորաբաժանել ենք 4 խմբերի: Խեցու կավազանգվածում քարավազի մանրահատիկների բնու-

թագրության «Musell»-ի սանդղակի համաձայն խեցեղենի ԿՎ խումբը ներկայացված է 1, ԹՎ խումբը՝ 3, ԿԲ խումբը՝ 5, ՍԱ խումբը՝ 2 տարբերակներով (հավելված 1):

հավելված 1

մանրահատ. / տիպ. կազմ	շատ խոշոր 1,0-2,0մմ	խոշոր 1/2-1,0մմ	միջին 1/4-1/2մմ	մանր 1/8-1/4մմ	շատ մանր 1/16-1/8մմ	ընդամենը
Թռեղք-վանածոր	-	2	6+(1 սև)	2+(1 սև)	-	10+(2 սև)
Սևան-արցախ	-	-	1	1	-	2
Կարմիր վանք	-	-	-	3	-	3
Կարմիր բերդ	2	3	7	6	1	19
ընդամենը	2	5	14+(1 սև)	12+(1 սև)	1	34+(2 սև)

Նույն սանդղակի համաձայն, ըստ խեցու արտաքին մակերևույթի և աստառի գունային երանգների, ԹՎ խեցատների պարագայում արձանագրվում են 11, ՍԱ խմբում 2, ԿԲ խմբում՝ 9 և ԿՎ խմբում՝ 3 գունային երանգների համադրություններ (հավելված 2):

Կարմիրբերդյան տեսականին ներկայացված է հիմնականում կիսազնդած և երկթեք իրաններով, «կանգնած շուրթով» քրեղանների բեկորներով և ուռուցիկ իրանով, գլանաձև վզով կճուճի բեկորներով: Խեցեղենի վրա առկա են կարմիրբերդյան զարդանոտիվների գրեթե բոլոր տարրերը՝ վզից իրանի անցման հատվածում, ողջ իրանը պատող կամ իրանի կենտրոնական հատվածով անցնող միաշար և բազմաշար զիգզագներ, կարմիրբերդյան անոթների իրանները զարդարող հիմնական զարդագոտու տարրեր կազմող ցանցազարդեր և ալիքազարդերի ու կախված պարույրների համադրությամբ զարդամոտիվներ: Քրեղանների բեկորներից մեկի վրա պահպանվել է խաչվող, բազմաշար գծերով և զազաթներով իրար հանդիպակած



եռանկյունիների պատկերով զարդամոտիվ: Խեցեղենի մի քանի օրինակներ ներկայացված են ուսի վերին հատվածում արված հորիզոնական բազմաթիվ գծերով, ինչը բնորոշ է սևան-արցախյան գունազարդ խեցեղենին:

Չավելված 2

խեցու արտաքինի և աստառի գույնը	ԹՎ	ՍԱ	ԿԲ	ԿՎ	Ընդամ.
1. Կարմիր – կարմիր	1	1	3	–	5
2. Կարմիր - բաց կարմիր	1	–	5	–	6
3. Կարմիր – վարդագույն	1	–	–	–	1
4. Կարմիր - թույլ կարմիր	–	–	1	–	1
5. Կարմիր-կարմրադեղնավուն	2	–	3	1	6
6. Կարմիր –դեղնակարմրավուն	–	–	1	1	2
7. Կարմիր – կարմրադարչնագույն	–	–	1	–	1
8. Կարմիր-բաց դարչնագույն	–	–	2	–	2
9. Կարմիր-դարչնագույն	–	1	–	–	1
10. Բաց կարմիր –կարմիր	–	–	–	1	1
11. Բաց կարմիր – բաց կարմիր	1	–	2	–	3
12. Բաց կարմիր – կարմրադեղնավուն	–	–	1	–	1
13. Դեղնակարմրավուն – կարմրադեղնավուն	1	–	–	–	1
14. Դեղնակարմրավ. –բաց դեղնադարչնագույն	1	–	–	–	1
15. Դեղնակարմրավուն –բաց դարչնագույն	1	–	–	–	1
16. Դեղնակարմրավուն - դեղնադարչնագույն	1	–	–	–	1
17. Գորշ-դարչնագույն –գորշ-դարչնագույն	1	–	–	–	1
18. Մուգ գորշ – մուգ գորշ	1	–	–	–	1
Ընդամենը	12	2	19	3	36

Թռեղք-վանածորյան տիպաբանական կազմի նմուշները ներկայացված են կիսագնդաձև կամ շրջված կոնի տեսքով քրեղաններով և հիդրաների ու կճուճների տարբեր մասերի բեկորներով: Քրեղանները հիմնականում զարդարված են համակենտրոն կիսաշրջանների

զարդաշրջայով, իսկ խոշոր անոթների բեկորների վրա պահպանվել են, ալիքներով ներգծված շևրոնների, շուրթից դեպի ուսն իջնող ուղղահայաց գծերի զարդամոտիվները: Դեղնակարմրավուն մակերևույթով կճուճներից մեկի իրանը զարդարված է խազագծերով ներգծված, գազաքները ցած ուղղված եռանկյունիներով: Գորշ մակերևույթով անոթներից մեկը հարդարված է կետազարդ զարդագոտիով և դրանից իջնող՝ կետիկներով ներգծված եռանկյունիներով, իսկ մյուսի վրա նկատելի է մեանդրաձև կետազարդի հատված:

Ազարակի խեցեղենի կազմում կարմիրվանքյան մշակույթին բնորոշ զարդամոտիվներով երեք կճուճի բեկորներից մեկը վզի հիմքում ունի ակոս գոտի, ուսը հարդարված է ցանցազարդ գոտիով: Բեկորներից մյուսը զարդարված է սպիտակ ներկով արված, ներգծված եռանկյունիների և սև գծազարդերի համադրությամբ: Կճուճի երրորդ բեկորը ուսի ստորին կետում ունի կաթնագույն հիմնագույն, վերին հատվածում հստակ երևում են պահպանված հորիզոնական սև գծերը:

Չարդագոտիների առանձնահատկություններից ելնելով թռեղք-վանածորյան տիպաբանական կազմին վերագրելի խեցանոթները կարելի է բաժանել երեք ժամանակագրական խմբերի. խազագծերով ներգծված եռանկյունիներով անոթի զուգահեռները հայտնի են Բ. Կուֆտինի պեղած Թռեղքի «ժողկման շրջանի» առաջին և երկրորդ խմբի դամբարանաբլուրներից (3, տաճ. LXXXV; 2, տաճ. 18<sup>14</sup>, 20<sup>21,23</sup>, 21<sup>8</sup>): Գունազարդ մոտիվներով և կետազարդ մեանդրաձև մոտիվով անոթների զուգահեռները տեսանելի են Թռեղքի II և III խմբերի և դրանց հետ գույքով նույնականացող բազմաթիվ համալիրներում՝ Վանաձոր, Էջմիածին, Արուճ, Ավան, Էլառ և այլն (5, տաճ. II; 4, սու. 42,43; 2, տաճ. 31<sup>13</sup>): Սև կետազարդ եռանկյունիներով հարդարված անոթի զուգահեռները հայտնի են Հառիճի №67 դամբարանից, Շիրակավանի միջինբրոնզեդարյան շերտից (7, սու. 70; 1, աղ. IX):


Կարմիրբերդյան խեցեղենի նմուշների զուգահեռները բազմաթիվ են՝ Արարատյան դաշտի, Սևանի ավազանի, Շիրակի տարածքում պեղված դամբարաններում և շերտերում (5, սու. 15-17; 7, սու. 54; 6, սու. 2<sup>1-4</sup>):



Կարմիրվանքյան միագույն և բազմագույն ազարակյան օրինակները շաղկապվում են ինչպես Հայաստանի տարածքից հայտնի մնուլների (Արուճ) այնպես էլ Նախիջևանի, Վան և Ուրմիա լճերի շրջաններում գտնվող հուշարձանների նյութերի հետ (8, աղ. 29,30; 9, աղ. 66,76) :


#### Գրականություն

1. *Թորոսյան Ռ. Ս., Խնկիկյան Օ. Ս., Պետրոսյան Լ. Ա.*, Հին Շիրակավան (1977-1981 թթ. պեղումների արդյունքները), Երևան, 2002:
2. *Гогодзе Э. М.*, Периодизация и генезис курганной культуры Триалети. Тбилиси, 1972, На груз. языке.
3. *Кусфтин Б. А.*, Археологические раскопки в Триалети I, Опыт периодизации памятников, Тбилиси, 1941.
4. *Кушнарёва К. Х.*, Южный Кавказ в IX-II тыс. до н.э., Санкт-Петербург, 1993.
5. *Мартirosян А. А.*, Армения в эпоху бронзы и раннего железа, Ереван, 1964.
6. *Симонян А. Е.*, Новая трактовка социокультурной общности эпохи средней бронзы Армении (по данным погребения N 12 могильника Верин Навер), ИФЖ, 1990, 1, с. 188-208.
7. *Хачатрян Т. С.*, Древняя культура Ширака, III-I тыс. до н.э., Ереван, 1975.
8. *Belli O., Bachaliev V.*, Middle and Late Bronze Age Painted pottery Culture in the Nakhichevan Region, Istanbul, 2001.
9. *Özfiat A.*, Doğu Anadolu, Yayla Kültürleri (M.Ö. II. Binyıl), Istanbul, 2001.



Ազարակից հայտնաբերված թռեղվանաձորյան մշակույթի խեցեղենի մնուլներ





Ազարակից հայտնաբերված Կարմիրվանքյան (1-3),  
Սևանարցախյան (4, 19), Կարմիրբերդյան (5-18) և  
Թռեղքվանաձորյան (20) մշակույթների խեցեղենի նմուշներ

Бадалян Р. (ИАЭ),  
Аветисян П. (ИАЭ)

Смит А. (Чикагский университет),

### СВЯТИЛИЩЕ ПОЗДНЕГО БРОНЗОВОГО ВЕКА ГЕХАРОТА.

Армяно-американская экспедиция, действующая в рамках совместного проекта ArAGATS (Archaeology and Geography of Ancient Transcaucasian Societies), продолжила работы на памятниках Цахкаовитской равнины.

Проведенные экспедицией исследования<sup>1</sup> показали, что археологические памятники оконтуривают равнину на севере, востоке, юге, располагаясь на абсолютной высоте 2100-2350м, в основном в пределах прямой видимости, причем поселения Арагаца приурочены к местам разгрузки поверхностных вод и вод родников, стекающих по троговым долинам северного склона массива, а памятники Памбакского хребта – к основным коммуникациям, проходящим по Памбакскому и Спутакскому перевалам.

<sup>1</sup> *Avetisyan P., Badalyan R., Smith A.* Preliminary Report on the 1998 Archaeological Investigations of Project ArAGATS in the Tsakahovit Plain, Armenia. – Studi Micenei ed Egeo-Anatolici, XLII/1, 2000, 19-59; *Badalyan R., Smith A., Avetisyan P.* The Emergence of Sociopolitical Complexity in Southern Caucasia: A Interim Report on the Research of Project ArAGATS. – Archaeology in the Borderlands. Investigations in Caucasia and beyond. Los Angeles, 2003, 144-166; *Smith A., Badalyan R., Avetisyan P., Zardaryan M.* Early Complex Societies in Southern Caucasia: A Preliminary Report on the 2002 Investigations by Project ArAGATS on the Tsakahovit Plain, Republic of Armenia. – American Journal of Archaeology, 108, 2004, 1-41.



В заселении Цахкаовитской равнины зафиксирована определенная цикличность. Первые документированные памятники области принадлежат раннему бронзовому веку и представлены куро-аракскими материалами Цахкаовита, Арагац-берда, Гехарота. Следов обитания в среднем бронзовом веке в Цахкаовитской долине не зафиксировано. В самом начале поздней бронзы происходит одновременное заселение Хнаберда, Цахкаовита, Арагац-берда, Гехарота (возможно, также его форпостов – сателлитов системы г. Цилкар), Бердидоша. Памятники раннего железа достоверно представлены лишь могильником Манташ на юго-восточном краю равнины. Жизнь в Цахкаовитской равнине возрождается с рубежа VIII/VII вв. до н.э.

Наличные данные свидетельствуют, что наиболее интенсивным периодом жизни в Цахкаовитской равнине был поздний бронзовый век. Памятники этого времени представлены как поселениями, окружающими крепости небольшой площади (Хнаберд – 1,56га, Цахкаовит – 0,59га, Гехарот – 0,36га) и сторожевыми пунктами гехаротской (памбак – цилкарской) системы Топкар, Ашот Еркат, Полоз сар, так и могильниками, максимальная концентрация которых (примерно 5000 погребений, образующих 162 группы на площади около 30 кв. км) зафиксирована на северном склоне Арагаца между Хнабердом и Цахкаовитом.

Широкомасштабные раскопки Цахкаовита и Гехарота выявили в культурных слоях позднего бронзового века объекты, отражающие интенсивное и драматическое течение жизни обитателей этих поселений. В первую очередь речь идет о постройке, очевидно, святилище, частично открытой в 2003г. на западной террасе Гехарота (раскоп Т-02).

Постройка представляет собой каменное сооружение, возведенное на искусственной террасе, вырубленной в скальном массиве холма, с весьма специфичным интерьером (табл. I,1) и набором артефактов.

Святилище было основано, очевидно, в конце XVв. до н.э. В конце XIV – первой половине XIIIвв. до н.э. оно погибло в пожаре. Всю его внутреннюю площадь покрывает слой угля и фрагмен-

тов обугленных балок перекрытия, мощностью до 20см. Этот слой перекрывает залегающее на полу – выровненной скальной поверхности – исключительно богатое скопление фрагментированных керамических сосудов (по предварительным подсчетам, около 40, в том числе 12 крупных тарных), среди которых имеются образцы, характерные для переходного от средней к поздней бронзе периода и I этапа поздней бронзы. В их числе следует выделить карас объемом около 360 литров, орнаментированный в типичном для севан-арцахской керамики стиле (табл. I, 2). Безусловно, сосуды такого размера, наряду со своей очевидной тарной функцией, играли важную роль в оформлении интерьера. Значительная часть их фрагментов деформирована от воздействия сильного огня. От скоплений угля и золы при реконструкции (см. далее) был расчищен лишь центральный элемент интерьера постройки – округлый (диаметр 1,5 – 1,7м) глинобитный бассейн-алтарь, от воздействия огня прокаленный насквозь. На его восточном краю вертикально установлена каменная стела. Найденные в алтаре курьельницы (табл. II,1-2) также имеют аналогии в комплексах конца средней бронзы – раннего этапа поздней бронзы (в частности, погребение 43 Трели<sup>1</sup>).

С этим керамическим комплексом ассоциируется специфический набор артефактов, включающий, в частности, пару глиняных подставок – “идолов” (табл. II,3-4), каменную подвеску (табл. III,6), 55 сердоликовых бус, костяные орудия и украшения (табл. III,6-10), большое количество распиленных рогов оленя и астрагалов крупного рогатого скота с насечками, бронзовые булаву (табл. III,4) и браслет (табл. III,3). Особо следует отметить атрибуты бронзолитейного производства – среднюю часть трехстворчатой формочки из аргиллита (вес 210г) для отливки украшений (табл. III,1) и тигель (табл. III,2).


<sup>1</sup> Тбилиси. Археологические памятники I. Тбилиси, 1978, рис.19 (на груз. яз. с рус. рез).



В полу святилища вырублены несколько бессистемно расположенных ям, большая из которых имеет диаметр 1 м и глубину 64 см.

Следы пожара отчетливо зафиксированы также в поздне-бронзовом слое Цахкаовита на северной террасе. Синхронность и масштабность явления позволяют предположить некий локальный военно-политический эпизод, имевший место в XIV - XIII в. до н.э. в Цахкаовитской равнине.

Сразу после пожара гехаротское святилище было наспех восстановлено. Реконструкция заключалась в постройке параллельно прежним, на небольшом расстоянии от них, новых восточной и южной стен, за счет чего площадь святилища сократилась до 6,5x5,6 м, причем новые стены возведены на слое угля и керамики. Ряд сравнительно мелких камней, уложенных параллельно восточной стене, возможно, отделяет алтарную, сакральную часть святилища от остальной части комплекса и, скорее всего, также принадлежит периоду реконструкции. Немногочисленная керамика, связанная с фрагментарно сохранившимся перекрывающим слоем пожара полом, в основном относится ко II и III этапам поздней бронзы. Однако после реконструкции святилище функционировало лишь короткое время в диапазоне второй половины/конца XIII – первой половины XII вв. до н.э. и прекратило свое существование (было заброшено или вновь погибло в пожаре) одновременно с поселением в целом и синхронными памятниками Цахкаовитской равнины. Прекращение жизни на памятниках Цахкаовитской равнины в конце бронзового века, примерно в середине XII в. до н.э., очевидно, является отражением процессов регионального масштаба.



2



3



Таблица II.





Таблица III.





Линдси И.  
Калифорнийский университет (США)

ЮЖНАЯ ЧАСТЬ НИЖНЕГО КВАРТАЛА  
ЦАХКАОВИТСКОГО ПОСЕЛЕНИЯ  
В ПОЗДНЕМ БРОНЗОВОМ ВЕКЕ  
(предварительные результаты раскопок 2003 г.)<sup>1</sup>

До сих пор исследования памятников позднего бронзового века (ПБВ) на Южном Кавказе были сфокусированы преимущественно на монументальных крепостях и погребальных комплексах; изучение же неукрепленных поселений велось отнюдь не столь интенсивно<sup>2</sup>. Настоящая работа представляет предварительные результаты, полученные в течение первого сезона стратифицированных раскопок "Нижнего поселения", расположенного у подножия циклопической крепости Цахкаовита позднего бронзового века. Целью данного проекта является обеспечение фундамента для развернутого исследования, не ограниченного периодом ПБВ, и далее восполнение значительного информативного пробела относительно данного периода, отмеченного рядом исследователей-кавказоведов<sup>3</sup>. Понимание экономической организации нижнего квартала Цахкаовитской крепости необходимо для концептуализации широкомасштабных

<sup>1</sup> Автор выражает благодарность National Science Foundation (Grant #0327043), Fulbright U.S. Student Program и Wenner-Gren Foundation for Anthropological Research за щедрую финансовую поддержку данного проекта, а также М. Зардарян и Р. Бадалян за помощь в переводе и редактировании текста.

<sup>2</sup> *Мартirosян А.А.* Город Тейшебаини. Ереван, 1961.

<sup>3</sup> *Црбзjան Գ.Ե.* Հնագիտության զարգացումը Սոփեոսական Հայաստանում. *Բանբեր Երևանի Համալսարանի*, 3, 1987, էջ 111, 116, *Փիլիպաուրի Կ.Ն.* Восточная Грузия в конце бронзового века. Тбилиси, 1979, с. 9.

политических и экологических процессов, протекавших на Цахкаовитской равнине и за ее пределами<sup>1</sup>.

Цахкаовитская равнина, одна из многочисленных плодородных межгорных котловин Южного Кавказа, площадью 190 кв. км, расположена между северным подножием горы Арагац (4090м) и Памбакским хребтом. Цахкаовитская крепость и поселение занимают площадь в 39.6га на паразитическом вулканическом конусе и вокруг него, у северного подножия Арагацского массива близ современного с.Цахкаовит.

Система укрепленных поселений и примыкающих к ним могильников, окружающих Цахкаовитскую равнину, впервые привлекла внимание археологов еще в конце XIXв. Позже памятники области стали объектами более или менее систематического исследования<sup>2</sup>.

Однако до последнего времени на территории Цахкаовитской равнины раскопки велись лишь на могильнике периода ПБВ около Гехарота<sup>3</sup>. В 1998г. исследования на равнине были возобновлены в рамках проекта "ArAGATS"; на протяжении ряда сезонов они проходили в виде "сурвея"-систематического поиска, картографирования и обмеров памятников, а далее были продолжены уже ныне протекающими раскопками Цахкаовитской и Гехаротской крепостей<sup>4</sup>.

<sup>1</sup> *Schwartz G.M., Falconer S.E.* Eds. Archaeological Views from the Countryside: Village Communities in Early Complex Societies. Washington, D.C., 1994.

<sup>2</sup> *Аджан А.А., Гюзальян Л.Т., Пиотровский Б.Б.* Циклопические крепости Закавказья. Сообщения ГАИМК 1/2, 1932, стр. 61-64., *Թորանյանի Թ. Լյուբեր հայ ծարսարիւթերայի փտմութայի*, 1, Երևան, 1942.

<sup>3</sup> *Мартirosян А.А.* Армения в эпоху бронзы и раннего железа. Ереван, 1964, с. 89-93.

<sup>4</sup> *Avetisyan P.S., Badalyan R.S., Smith A.T.* Preliminary Report on the 1998 Archaeological Investigations of Project ArAGATS in the Tsakahovit Plain, Armenia. *Studi Micenei ed Egeo-Anatolici* XLII, 2000, pp. 19-59; *Badalyan R. Smith, A.T. Avetisyan P.S.* The Emergence of Socio-Political Complexity in Southern Caucasia: An Interim Report on the Research of Project ArAGATS, in *Archaeology in the Borderlands: Investigations in Caucasia and Beyond*, Los Angeles, 2003, pp. 144-166; *Smith A.T., Badalyan R., Avetisyan P., Zardaryan M.* Early Complex Societies in Southern Caucasia: A Preliminary



Примерно 11га площади поселения в Цахкаовите были нанесены на карту, включая сохранившиеся на поверхности архитектурные остатки как на цитадели, так и на склонах и подножии холма, указывающие на неоднократное заселение памятника. До сих пор единственным объектом раскопок (1998г.) на площади поселения являлся блок помещений ервандидского периода на юго-западном основании холма. Раскопки, начатые в Южном нижнем квартале Цахкаовитской крепости в 2003г., имели целью, во-первых, обеспечить более полное и целостное понимание экономической системы жизни крепостей в рамках периода ПБВ, во-вторых, расширить типологию неэлитарной архитектуры ПБВ, и, наконец, проследить воздействие, оказываемое властью цитадели на нижнее поселение, находящееся в ареале крепости.

В Южном нижнем квартале (ЮНК-1) Цахкаовита было открыто три раскопа на нижнем южном склоне холма, где на поверхности ясно видны контуры архитектурных конструкций. Непосредственной целью шурфов была быстрая оценка наличия и целостности культурных отложений ПБВ. Настоящее сообщение, в силу ограниченности допустимого объема, сфокусировано на архитектурном и артефактуальном материале из ЮНК-1, где был выявлен наиболее мощный и ясный слой, оставленный в период заселения в ПБВ.

В раскопе ЮНК-1 площадью 11х13м была открыта стена шириной 2м, двухлицевой кладки из трех-четырёх рядов крупных грубо околотых базальтовых глыб (рис. 1). Стена пересекает раскоп в целом с запада на восток и далее поворачивает на север, оконтуривая большую комнату с полом, выложенным каменными плитами. Второй, более возвышенный каменный пол с каменным бассейном открыт в северо-западном углу комнаты. Там, где каменный пол отсутствовал, комната была раскопана до грунта – плотного пласта желтой глины, на котором был уложен пол.




Рис. 1. План и западный профиль ЮНК 1

К югу от описанной стены есть окруженное ею более скромное строение с полом из утрамбованной глины, с большим числом черт, которые позволяют предположить его жилое назначение. Образцы глиняного пола были собраны с интервалом в 50см для пылецевого анализа, результаты которого должны сказать нам: 1. было ли строение перекрыто крышей или нет, судя по гомогенности или гетерогенности распределения пылицы; 2. был ли каменный инструментарий, выявленный на полу, предназ-



начен для переработки сельскохозяйственной продукции и; 3. было ли строение сезонным или постоянным.

Кроме того, в желтом глинистом грунте, ниже пола, были вырыты две ямы глубиной 1м, обрамленные утрамбованной глиной. Ямы в основном лишены каких-либо артефактов, хотя образцы почвы могут предоставить ботанические остатки.

Радиоуглеродные даты из раскопок ЮНК показывают, что поселение было заселено в течение второй половины второго тысячелетия, одновременно с цитаделью крепости (таблица 1). Принадлежность поселения к ПБВ опирается на частоту ПБ фрагментов, найденных в ходе раскопок, включая реставрируемый сосуд, открытый *in situ* на глиняном полу в северо-западном углу комнаты.

Lab #	Provenance	Date BP	Cal BC (1σ)	Cal BC (2σ)
AA56988	SLT1 Loc 33	2453±34	760-410	770-400
AA56982	SLT1 Loc 46	3012±35	1370-1130	1390-1290
AA56987	SLT1 Loc 60	3102±41	1430-1310	1490-1250
AA56983	SLT1 Loc 64	2981±34	1290-1120	1380-1050
AA56984	SLT1 Loc 65	2861±36	1110-930	1190-910
AA56985	SLT2 Loc 10	3008±35	1370-1130	1390-1120
AA56986	SLT3 Loc 13	3058±35	1390-1260	1420-1210

Таблица 1. <sup>14</sup>C даты из Южного нижнего квартала (калиброваны по OxCal v. 3.9)

Диапазон форм "лчашен-мецаморских" сосудов, представленных в материалах раскопок, включает небольшие чаши, миски, сосуды с ручками и небольшие тарные сосуды открытых и закрытых (*карасы*) форм. Почти все сосуды имеют гладкую, типично лощеную или полированную, поверхность, и украшены такими элементами, как рельефный витой узор, врезные линии или нанесенный лощением декор (рис. 2, 3). Крупные тарные и производственные сосуды, какие были найдены на западной террасе Цахкаовита, не обнаружены в ЮНК<sup>1</sup>.

<sup>1</sup> Badalyan, Smith, Avetisyan. The Emergence of Socio-Political Complexity in Southern Caucasia..., p.165.




Рис. 2. Керамика ПБВ, ЮНК 1-3






Рисунок 3: Керамика ШБВ и ШБ/РЖВ, ЮНК 1-3

В дополнение к изобилию керамических фрагментов из раскопа ЮНК было найдено также большое количество костей и терочных плит и курантов. Фаунистический материал, исследованный Б.Монахан, представлен преимущественно остатками мелкого и крупного рогатого скота. Когда исследование фаунистических остатков будет закончено, представляется полезным сравнение его результатов с данными, полученными из цитадели, с целью определения вариаций и различий социально-экономического порядка в доступе к пищевым ресурсам.

Двенадцать сравнительно маленьких (около 12см в диаметре) ступок из туфа и базальта были найдены в ЮНК 1 и 2, также как и восемь больших базальтовых курантов. Маленький размер ступок предполагает домашний масштаб производства.

После завершения первого сезона работ на нижнем поселении Цахкаовита складывается предварительное впечатление, что раскоп содержит два функционально отдельных помещения, разделенных широкой, двухметровой оборонительной стеной, которая очевидно служила предварительной линией обороны для цитадели. Северное помещение прямо ассоциируется со стеной, которая формирует часть конструкции помещения. Интенсивность конструкции, включая бассейны и обширные выложенные каменными плитами полы, аналогичные открытым на цитадели, позволяет предположить, что помещение, возможно, содержит некоторые элементы, характерные для аппарата крепости.

Радиоуглеродные даты из северного и южного помещений статистически одинаковы, так что в данный момент трудно оценить, как они сочленяются в смысле последовательности возведения конструкции. Южная половина ЮНК 1 указывает на гораздо меньшие вложения в отношении архитектурных разработок, что вместе с археологическим материалом приводит к ныне действующей рабочей гипотезе, по которой эта секция поселения является по своей природе домашней. На основании только одного угла скромного, "домашнего" помещения, открытого в ЮНК 1, еще слишком рано выдвигать архитектурную ти-



пологию для неэлитарных структур поселений ПБВ. Дальнейшие заключения будут возможны лишь после завершения нескольких направлений аналитических исследований, ныне находящихся в процессе. В дополнение к пыльцевым анализам и исследованию фауны, образцы керамики из раскопок и глины из сырьевых источников Цахкаовита, Лори и Ширака будут подвергнуты петрографическому изучению и анализам нейтронной активации. Эти данные будут использованы для сравнения распределения керамических источников между поселением и цитаделью как способ определения, был ли дифференцированный доступ к региональным рынкам и коммуникациям политическим и экономическим принципом в Цахкаовитской равнине.

Начальный сезон исследований на поселении ЮНК выявил, что конструкции ПБВ не ограничиваются крепостными сооружениями и могильниками. Огромное количество погребений ПБВ, зафиксированных и раскопанных в течение последнего века предполагает существование многочисленного населения, связанного (все еще не ясно, каким именно образом) с политическими, идеологическими и экономическими институтами, сосредоточенными в циклопических крепостях.

Provenance	EBA	MBA	LBA & LBA/EIA	Urtian—Achaemenid	Achaemenid—Hellenistic
SLT1 Topsoil	5	0	545	107	320
sub-topsoil	7	0	1452	375	492
n=3303	0.4%	0.0%	60.4%	14.6%	24.5%
SLT2 Topsoil	0	0	33	1	35
sub-topsoil	0	0	30	26	3
n=128	0.0%	0.0%	49.2%	21.1%	29.7%
SLT3 Topsoil	3	0	274	18	126
sub-topsoil	1	1	208	0	47
n=678	0.6%	0.2%	71.1%	2.7%	25.5%

Сводка керамики из ЮНК 1-3

Դևեջյան Ս. (ՀԱԻ)

## ՀԱՅԱՍՏԱՆ-ԱՌԱՋԱԿՈՐ ԱՍԻԱ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՓՈԽԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ըստ Լոռի Բերդի պեղածո իրերի)

1975թ. Լոռի Բերդի դամբարանադաշտում պեղվեց № 15 ուշ բրոնզեդարյան դամբարանը: Այն հյուսիս-արևելքից հարավ-արևմուտք ուղղված հիմնահողային, ուղղանկյունաձև խուց է, ծածկված՝ ընդլայնական, մեկը մյուսի նկատմամբ բարձր ու ցածր դիրք ունեցող չորս սալերով (դամբարանի չափերը՝ 5.6x1.8x2մ): Հայտնաբերվեց եղջերուների բրոնզե արձանախումբ, սակր, երկճանկ կեռ, դանակ-քերիչ, պղնձե կաթսա, քարե հավանգ և ծեծիչ, քանկարծեք զարդեր և այլն: Խեցեղենը սև է, փայլանախշված և դաջազարդ: Առանձնահատուկ է սև-մոխրագույն անփայլ կավանոթը, ամբողջովին ծածկված՝ խորադիր, երկրաչափական զարդերով: Սև փայլեցրած, գլանաձև վզով, դուրս ճկված շուրթով կճուճի ուսին, որ զարդարված է քայլող դրոշմիչով կատարված ոլորանախշերի գեղեցիկ շղթայով, բերանքսիվայր դրված էր բրոնզե մի անոթ՝ «կախկալ»:<sup>1</sup> Կճուճն իր զուգահեռներն ունի Լճաշենի III դամբարանաբլրում, Թբիլիսիում<sup>2</sup> և այլուր, թվագրվում է ուշ բրոնզի վաղ փուլով՝ մ.թ.ա. XV դար:

<sup>1</sup> Մետաղյա փոքրածավալ անոթները, հնագիտական զրականության մեջ ընդունված է անվանել «սիտուլա» (situle): Այս անոթը Լոռի Բերդի տարեց գյուղացիներն անվանեցին «կախկալ», որը ոչ միայն հայեցի բառ է, այլև ճգրիտ բնորոշում է առարկան: Ուստի հարմար գտանք օգտագործել այդ բառը:

<sup>2</sup> Թբիլիսի, Археологические памятники, I, Тбилиси, 1978, с. 84, табл. 43.





Նկ. 1

Կախկալը ձվածն է, սրացող նստուկով, հատած շուրթով՝ պատրաստված մեկ կտոր բրոնզե քիթեղից, բարձրությունը՝ 17սմ: Այն կախված է երեք շղթաներից, որոնք վերևում միանում են մեկ լայն օղակով (Նկ. 1): Շղթաները սկիզբ են առնում անոթի պատերից՝ շուրթի մոտ, երկուական դարձաբևեռներով ամրացած քիթեղներից, որոնք կտրված են թևատարած թռչունների ձևով: Սրանց ոճավորված գլուխները ներկայացնում են երկարավուն, փոքր օղակներ, որոնց միանում են շղթաները:

Նման կախկալներ Հայաստանում հայտնաբերվել են Արթիկի № 410

դամբարանից (մ.թ.ա. XII-XIդդ.)<sup>1</sup> և Մեծամորի II դամբարանաբլրից:<sup>2</sup> Անդրկովկասի այլ վայրերում, այդպիսիք մեզ հայտնի չեն:

Այս երեք նմուշներն իրենց նմանությամբ հանդերձ, ունեն առանձնահատկություններ: Արթիկի կախկալի իրանը փոքր-ինչ լայն է, օղակները թռչնածն չեն, շղթաները բացակայում են, որոնք գուցե ժամանակին եղել են: Բոլոր դեպքերում, անոթն օգտագործվել է կախված վիճակում:

Մեծամորի կախկալի նստուկը կլորավուն է, շղթաները չորսն են, որոնք վերջում միանում են մեկ կիսագնդաձև կոճակի միջոցով: Յուրաքանչյուր շղթայի միջին մասերից ամրացած են մեկական ցանցկեն բոժոժներ: Շղթաներն ուղղակի զոդված են կախկալի ներսը նայող թռչնածն քանդակների գլխիկներին:

Մեծամորի նմուշը հայտնաբերվել է ուշ բրոնզի վաղ փուլի խեցեղենի հետ, այդ թվում՝ պաշտամունքային, զարդարված՝ եղջերվի

ու այծերի պատկերներով, կարմիր գույնի սվաստիկաներով: Է.Վ. Խանգադյանը դամբարանը թվագրում է մ.թ.ա. XVդ. վերջ - XIVդ. սկիզբ և ելնելով հիշյալ պաշտամունքային իրերից դամբարանը համարում է քրմի, իսկ շղթաներից կախված կախկալը՝ բուրվառ, որն իր ժամանակին, քուրմն օգտագործել է ծիսական արարողություններ կատարելու համար:

Լոռի Բերդի կախկալը, չենք կարող բուրվառ անվանել կամ կրակի հետ կապված առարկա ներսի՝ սրացող մասում, իջեցրած, 7սմ տրամագիծ ունեցող սկավառակաձև, բարակ, մշակված տախտակի պատճառով, որը վերացնում էր հատակի սրությունը: Դա չի բացառում, սակայն, առարկայի ծիսական բնույթը:

Հատկանշական է, որ երկուստեք՝ Մեծամորի և Լոռի Բերդի դամբարաններում, դրանք հայտնաբերվել են եղջերվի պաշտամունքի ժառանգի վկայող ծիսական առարկաների հետ: Մեկ դեպքում կենդանին պատկերված է կավե «բուրանոթի» վրա, մյուս դեպքում՝ քանդակի տեսքով: Կարելի է նկատել, որ երկու դամբարաններում էլ ծիսական առարկաները կապ ունեն արևի պաշտամունքի հետ, քանի որ ինչպես սվաստիկան, այնպես էլ թռչունն ու եղջերուն խորհրդանշում և մարմնավորում են արևի աստվածությունը:


Հարկ է նշել, որ շրջանառության մեջ եղած հնագիտական սովորական արտեֆակտներից տարբերվող Լոռի բերդի այս նմուշը, անմիջապես հիշեցնում է մ.թ.ա. I հազ. I կեսին, Առաջավոր Ասիայում տարածված թռչնի բացված թևերով բրոնզե անոթների կանթերը, որոնք կրում են նաև թռչունների, կենդանիների, մարդկանց իրանների (կիսանդրիների) ծավալային քանդակներ: Պետք էր ենթադրել, որ գործ ունենք վերջիններիս նախատիպի հետ, սակայն ժամանակի և տարածության մեջ այդ կապը դեռևս տեսանելի չէ: Տարիներ անց, Լոռի Բերդի կախկալի ճիշտ նմանակը մեզ հաջողվեց տեսնել Լուվրի թանգարանի Արևելքի բաժնում (AO 27072) հայտնաբերված 1974թ. ժան Մարգերոնի կողմից, Սիրիայում, Եփրատի ափին՝ Մեսքենե-Էմարում: «Situle»-ը թվագրված էր ուշ բրոնզի վերջով՝ մոտ մ.թ.ա. 1300-1150թթ. (Նկ. 2):

<sup>1</sup> Т.С.Хачатрян, Древняя культура Ширака, Ер., 1975, с. 219, рис. 130.

<sup>2</sup> E.Khanzadian, Metsamor 2, Paris, 1995, p. 42-47, fig. 16.



Մեսքենե-Էմարի 1982թ. Փարիզի ցուցահանդեսի կապակցությամբ, Լուվրի ֆունդապահող և արշավախմբի մասնակից՝ Դոմինիկ Բեյերը նկարագրում է «բավականին բացառիկ իրը՝ սիտուլան»:



Նկ. 2

Թռչնի սխեմատիկ ուրվագծով թիթեղ՝ ամրացված անոթի պատին, նաև ամանի ձևն իսկ, նա բնորոշի համարում տվյալ ժամանակաշրջանի համար, ավելացնելով, թե կարծես այն նախատիպն է մ.թ.ա. I հազարամյակի ասորեստանյան որոշ օրինակների:<sup>1</sup>

Լոռի Բերդի կախկալի ավելի վաղ թվագրությունը (մ.թ.ա. XVդ.), Էմարի օրինակն է, վերջինիս «բացառիկ» և «բնորոշ չլինելը իր ժամանակի համար», թույլ են տալիս մտածել այս տիպի անոթների Հայաստանյան ժազման և արտահանման մասին դեպի Սիրիա-Միջագետք: Էմարի օրինակը կարող էր հասնել Սիրիա առևտրի կամ փոխանակության միջոցով, ինչպես սիրիական շատ իրեր, նույն ճանապարհով և նույն ժամանակ հասել են Անդրկովկաս և Հայաստան, այդ թվում, միտանիական գլանաձև կնիքները:

Ինչ վերաբերում է «ասորեստանյան օրինակներին», ապա այս ուշ նմուշները, տարբերվում են իրենց նախատիպերից՝ թռչնաթևերի և ծավալային քանդակների զուգորդությամբ:

Դրանք ոչ միայն տարածված էին Ասորեստանում, այլև շատ բնորոշ են ուրարտական արվեստին: Բրոնզե մեծ, պաշտամունքային կաթսաների շուրթերին, թռչնի բացված թևերի վրա կարելի է

տեսնել ցլերի գլուխներ, տղամարդու և կանացի կիսանդրներ: Նման կանթերով կաթսաներ հայտնաբերվել են նաև Վանի թագավորությունից շատ հեռու՝ Փոքր Ասիայի կենտրոնական մասերում (Գորդիոն, մ.թ.ա. VIII դ. կես), Հունաստան և Իտալիա:<sup>1</sup> Ըստ Բ.Բ. Պիտտոլսկու, եթե առաջ այս կաթսաները վերագրվում էին միջերկրածովյան արվեստին, ապա այժմ, ընդունված է դրանց առաջավորապիական ծագման մասին տեսակետը: Նա այս քանդակների մեջ տեսնում է ոճական առանձնահատկություններ և գտնում, որ դրանք ծագել են տարբեր կենտրոններից:<sup>2</sup>

Արվեստի նմանօրինակ դրսևորումները հատուկ են նաև իրանական աշխարհին: Լուրիստանից գտնված բրոնզե, ծորանով անոթի վրա՝ մարդկային անդրով և թռչնի թևերով կերպարանքը Բ.Բ. Պիտտոլսկին իրավամբ կապում է հիշյալ կաթսաների կանթերի հետ:<sup>3</sup> Մարական ծագում ունեցող բրոնզե մի դույլ էլ թռչնաձև կանթով, հայտնաբերվել է հյուսիս-արևմտյան Իրանից (մ.թ.ա. X-VIIIդդ.)<sup>4</sup> (նկ. 3):

Բազեի քանդակով ոսկե մի նմուշ, կապույտ շաղախով ընդելուզված, գտնվել է Շոշի դամբարանում (մոտ մ.թ.ա. II հազարամյակի կես), որը է.Պորադան համարում է եգիպտական ազդեցության «chanplevé» (հնձած դաշտ) ոճի աշխատանք (նկ. 4): Նա համեմատում է այն Հասանլուի թռչնի քանդակով կանթի հետ (մ.թ.ա. IXդ.): Երկու դեպքում էլ թռչունների մագիլները տեղադրված են իրանի առաջ, կարծես թռչելու պատրաստ: Վերջինն օժտված է նաև բարձր, ալիքաձև բռնակով (նկ. 5):<sup>5</sup>

Հասանլուի կանթն իր զուգահեռն է գտնում Լոռի Բերդի № 59 դամբարանի բրոնզե կիսազնդած թասում կամ կաթսայիկում (նկ. 6): Հասանլուի կանթի բարձրադիր բռնակը երեք «ալիք» ունի, Լոռի Բերդինը՝ չորս (դրանք ավելի շուտ կամարիկներ են, պատրաստված, կարծես թասը մատներով ավելի հարմար բռնելու համար: Բռնակներից մեկը թերի է, այժմ՝ վերականգնված): Հասանլուի թռչնի գլուխը կախված է, վիզը հաստ, ոտքերը՝ մկանուտ: Լոռի Բերդի

<sup>1</sup> Б.Б.Питтловский, Искusstво Урарту, А., 1962, с. 56-62.

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 63-64.

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 64.

<sup>4</sup> Houshang Mahboubian, Art of Ancient Iran, London, p. 242, p. 315.

<sup>5</sup> E.Porada, Alt-Iran, Baden-Baden, 1962, p. 46-47.





Սկ. 3



Սկ. 4



Սկ. 5



Սկ. 6

թռչունը նրբագեղ է, բարձր և երկար վզով, թևերի լայն բացվածքով և արածայր կտուցով: Գլուխն արտահայտված է սխեմատիկ, ոտքերը, որոնք ավելի շուտ նման են մարդկային (կանացի) թևերի, հանգչում են բարձր կրծքի վրա: Քանդակը թեև թռչնածև է, սակայն թողնում է կին-թռչն՝ սիրիցի տպավորություն:

№ 59 դամբարանը պատկանում է Լոռի Բերդի երկաթի լայն տարածման փուլի միջին չափի դամբարանների թվին (4.1x3.5x2.2 և 2.3մ): Հիմնահողային է, հյուսիս-արևելք հարավ-արևմուտք կողմնորոշմամբ: Այստեղ թաղվել են չորս ամբողջական ձիեր, իրենց բրոնզե սանձերով և շքեղ ձիահանդերձանքով, ննջեցյալը ենթարկվել է դիակիզման: Թասը գտնվում էր հատակին դրված կավի մեծ սկուտեղի վրա, կողքից՝ նրան հպված էր բրոնզե լայն թիթեղից պատրաստված օղակածև մի իր՝ ամենայն հավանականությամբ, թասի կոնածև կափարիչի ստորին՝ մետաղական մասը: Վերին մասը, հավանաբար, պատրաստված է եղել փայտից, որի փտած մնացորդները լցվել էին թասի մեջ: Այստեղ առկա էին նաև իշխանության խորհրդանշաններ՝ բրոնզե ընդելուզված մականի գլուխ և այլ իրեր: Դամբարանը, որ հավանաբար քրմի է, թվագրվում է մ.թ.ա. IX դ. վերջով և VIII դարով: Կաթսային օգտագործվել է ծիսական արարողությունների ժամանակ, այն իր տեսակի մեջ առայժմ միակն է Գարավային կովկասում:

Ուրարտական պաշտամունքային կաթսաների վրա գետեղված կանացի թևավոր ֆիգուրները Բ.Բ. Պիտրովսկին համարում է արևի հետ կապված աստվածություններ կամ արևի աստծո կինը՝ Տուշպուեան:<sup>1</sup>

Լոռի Բերդի կաթսայի թռչունը, հավանաբար, նույնպես կապվում է արևի պաշտամունքի հետ:

Ելնելով առկա փաստական նյութերի ընձեռած հնարավորություններից, կարելի է եզրակացնել, որ մ.թ.ա. II հազարամյակի կեսերից Արևելյան Հայաստանում գործածվող թռչնածև կանթերով բրոնզե ծիսական անոթները հասել են Կենտրոնական Միջագետք, գուցե նաև առաջավորասիական այլ երկրներ: Պահպանելով իրենց պաշտամունքային ծիսական բնույթը, ժամանակի ընթացքում, դրանք

<sup>1</sup> Б.Б.Питровская, нշվ. աշխ., էջ 57-58:



կատարելագործվել են՝ թևերի վրա կրելով նաև ծավալային զանազան քանդակներ: Դրանցից է Լոռի Բերդի № 59 դամբարանի պաշտամունքային կաթսան՝ առաջավորասիական արվեստին բնորոշ մի նմուշ, որը փոխանակային առևտրի միջոցով, որպես ռազմավար կամ անձնական իր, հասել է Արևելյան Հայաստան, այնտեղ, որտեղ շուրջ կես հազարամյակ առաջ ծագել էր իր նախատիպը:

Կաթսայիկը կարող էր բերված լինել Վանա և Ուրմիա լճերի շրջակայքից կամ Մանա - Մարաստան - Լուրիստան ուղղությամբ գտնվող երկրներից, քանի որ այնուամենայնիվ, կանթի կառուցվածքում առավել ցայտուն է իրանական տարրը:

Մ.թ.ա. VIII-VI դդ., հիշյալ երկրներից, տարբեր ճանապարհներով կամ պատճառներով (հիմնականում ռազմական) Լոռի Բերդ ներմուծվել են նյութական մշակույթի բազմաթիվ ու բազմազան առարկաներ, որոնք դամբարաններում ուղեկցվում են ձիերի թաղումներով: Դրանք հատկապես առատ են մ.թ.ա. VII-VI դդ. թվագրվող դամբարաններում: Թռչնականթ թասը կարելի է համարել այդ շրջանում ներմուծված ամենավաղ իրերից մեկը:

Գնունի Ա., Խաչատրյան Գ.,  
Հնայական Ա., Սիմոնյան Հ. (ՄԺԳՀԿ)

## ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ԿԵՐԵՆԻ ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Քաշաթաղի շրջանի Կերեն գյուղը գտնվում է Կապանից 8 կմ հարավ-արևելք, Կապան-Կովսական մայրուղու աջ կողմում, Ողջի գետի աջ ափին: Ժամանակակից գյուղի տեղադրման վայրն ամենայն հավանականությամբ իսկանդերներին է Ստեփանոս Օրբելյանի կողմից հիշատակված Սյունիք աշխարհի Կովսական գավառի Կերեն գյուղին (Ա. Հակոբյան):







2003թ. այստեղ հայտնաբերվել են բրոնզե դաշույններ, զարդեր, գրահի մասեր, խեցանոթների բեկորներ, որոնք հանձնվել են Բերձորի երկրագիտական թանգարան:

Հնավայրը գտնվում է գյուղից շուրջ 0,5 կմ հարավ-արևմուտք: Դամբարանադաշտը ձգվում է մոտ 800 մ ջրբաժանի երկայնքով, տարածվելով նաև ճանապարհի աջ և ձախ կողմերում աճող երիտասարդ անտառում, զբաղեցնելով նաև հարևան բլրի գագաթը: Նշված ջրբաժանից 100-150 մ արևմուտք տարածվում է ևս մեկ զուգահեռ ջրբաժան, որտեղ նույնպես առկա են դամբարաններ: Ջրբաժանի հարավային հատվածում պահպանվել են բնակատեղիի հետքեր:

Եվս մեկ հնավայր տեղադրված է գյուղից 1 կմ արևելք՝ Ողջի գետի ձախ ափին, հյուսիսից մոտեցող ձորակի աջ լանջին: Նշմարվում են կացարանների հետքեր և քարարկղներ:

Տարածքը ներկայացված է կրաքարային և այն ծածկող փոքր հզորության կավային նստվածքներով: Տեղ տեղ բուսական ծածկույթը նստած է ուղղակի կրաքարային շերտի վրա: Ձորակներում առկա են փոքր հզորության գետային նստվածքներ, որոնք ծածկում են կրաքարային շերտերը: Գետի ձախ ափն ունի նույն նկարագիրը այն







տարբերությամբ, որ այստեղ կրաքարը խիստ փոփոխված է տեղ-տեղ բյուրեղացված արագոնիտիզացիայի հետևանքով:

2004թ. Քաշաթաղի շրջանի վարչակազմի պատվերով Մշակութային ժառանգություն գ/հ կենտրոնի արշավախումբը (հնագետ Ա. Գնունի, երկրաբան Գ. Խաչատրյան, գեոդեզիստ Կ. Մկրտչյան) ուսումնասիրեց գյուղի մերձակայքում տեղադրված հնագիտական հուշարձանները:

Ուսումնասիրության ժամանակ պարզ դարձավ, որ առաջին ջրբաժանում գտնվող բազմաթիվ դամբարաններ արդեն ավերված են: Խումբն ուսումնասիրեց դրանցից 13-ը: Դրանք տարբեր ուղղվածություն ունեցող քարարկներ են (աղ. 2, 14, 15): Պահպանված կառույցների երկարությունը 140-ից 240սմ է, լայնությունը՝ 50-ից 90սմ: Որոշ դամբարաններ ծածկված են սալերով: Դամբարանների մեծամասնությունը զուրկ է պահպանված արտաքին նշաններից, սակայն տարածքում նշմարվում են մի քանի դամբարանաբլուրների հետքեր: Մասնավորապես հարկ է նշել բլրի գագաթին տեղադրված քարահողային լիցքով դամբարանաբլուրը: Առաջին և երկրորդ ջրբաժանների դամբարանային կառույցները շարված են գերազանցապես տեղական կրաքարից, իսկ գետի ձախ ափին տեղադրված դամբարանները և կառույցները՝ գլաքարերից (հիմնականում՝ բազալտ):

Որոշ դամբարաններից հայտնաբերված է մարդաբանական նյութ: Թիվ 23, 20, 31 դամբարաններում հայտնաբերված են մեկական մնջեցյալի մնացորդներ, իսկ թիվ 34-ում՝ երկու (25-38 տ. կին և 35-40 տ. տղամարդ) (որոշումը՝ Ռ. Մկրտչյանի):

Դամբարանների հետազոտման ժամանակ գտնված և բնակչությունից հավաքված խեցեղենը ներկայացված է մի քանի խմբերով (աղ. 1, 2):

Ա) *Սափորներ*. կարմիր, դեղնավուն և սև, լայն հատակով, գնդաձև կամ ձգվող իրանով, նեղ լայնացող կամ գլանաձև վզով: Այս խմբի անոթների վրա երբեմն հանդիպում են իրանի վրա թեք տեղադրված փոքր աղեղնաձև, ինչպես նաև իրանը և շուրթը միացնող՝ հատույթում կլոր կամ բազմանկյուն կանթեր: Առանձին ենթախումբ են կազմում ուռուցիկ իրանով կճուճները գնդիկաձև (մեկ դեպքում խուլ՝ 34 դամբարան) կամ ոլորված կանթերով անոթները:

Բ) *Թաղարներ*. մոխրագույն, կրեմագույն կամ կարմիր: Լայն հատակով և թեք շուրթով: Աչքի է ընկնում անհամաչափ մեծ աղեղնաձև կանթով թաղարը:

Գ.) *Թասեր և քրեղաններ*. սև և կարմիր պրոֆիլավորված իրանի վերին հատվածով, հաճախ ելուստներով: Այս խմբում առանձնանում են լայն հատակով ուղղահայաց իրանով հորիզոնական ուղղանկյուն կենտրոնական անցքերով բռնակներով (թիվ 23 դամբարան) անոթները:

Դ.) *Փոքրիկ անոթների* ձևերը հիմնականում համապատասխանաբար կրկնում են մեծ անոթների ձևերը (թաղարներ, սափորներ):

Ե.) *Գավաթները* երկուսն են. սև փայլեցված բաժակ նեղացող իրանով հորիզոնական փողրակներով և փոքրիկ գավաթ-խնկաման:

Զ.) Գնդաձև իրանով օխրայագույն *կարաս*:

Է.) *Հալոցներ*:

Կերեմի խեցեղենում հանդես են գալիս հետևյալ կենդանակերպ տարրերը: Նախ դա անոթի իրանն օղակող օծի ռելիեֆ պատկերն է, որի պոչն ու գլուխը տեղադրված են սափորի բռնակին (31 դամբարան, աղ. 25): Ի հայտ են եկել նաև խոյակերպ (23 դամբարան), ցլագլուխ, թռչնակերպ բռնակներ:

Առավել հաճախ հանդիպող այլ զարդամոտիվներից են ռելիեֆ ելուստները, իրանին փորագրված գծերով կամ կետերով պատկերված եռանկյունիները, կենաց ծառի պատկերները: Առանձնապես պետք է նշել մոխրագույն սափորին պատկերված թեք խաչերը, կատարված կրկնակի փորագրված գծերով:

Կերեմի խեցեղենի ամենամոտ զուգահեռները Սյունիքի, մասնավորապես Կապանի հուշարձաններում են (Շիկահող), սակայն բազմաթիվ զուգահեռներ դիտարկվում են այլ հուշարձաններում (Կարմիր-բլուրի նախաուրարտական բնակատեղի, Թեյշեբախնի, Լոռի Բերդ, Էլառ, Մցխեթ, Միմզեչաուր, Յասիթ-թեփե, և այլն):

Սպառազինությունը ներկայացված է երկու կոթառավոր դաշույններով, որոնցից մեկը զարդարված է կենաց ծառի պատկերով: Հայտնաբերված են նաև զրահի բեկորներ:

Բրոնզե զարդերը ներկայացված են օղերով, լարից պատրաստված, մասիվ, ծալված ծայրերով ոլորված ապարանջաններով, մեկ ծալված ծայրով ոլորված մանյակով, կախիկով, մատանիով:



Դամբարանադաշտից հայտնաբերված են նաև բրոնզե ասեղներ (31 և 34 դամբարաններ) և երկաթյա իրի (հավանաբար նետասլաքի) բեկորներ:

Մետաղյա առարկաներն իրենց բազմաթիվ զուգահեռներն ունեն Չադրուբուն, Կալաքենտուն, Մինգեչաուրուն, Թեփե Սիալկի դամբարանադաշտուն և այլ հնավայրերուն:

Դամբարանադաշտից հայտնաբերված են նաև ուլունքներ սերդոլիկից, փիրուզից, կորալից, կախիկներ (առաջին ջրբաժանի թիվ 27, երկրորդ ջրբաժանի 1 դամբարաններ): Արժանահիշատակ են պատայից պատրաստած կետազարդ ուղղանկյուն և տակառածն ուլունքները (19 դամբարան):

Վերոնշյալ նյութերի քննությունը թույլ է տալիս Կերենի դամբարանադաշտը նախապես թվագրել մ.թ.ա. VIII-IV դդ.:

Պետրոսյան Ա. (ՀԱԻ)

## ՈՒՐԱՐՏՈՒԻ ԻՇԽՈՂ ՏԱՐԻ ԾԱԳՄԱՆ ՇՈՒՐՋ

Ուրարտական դիցարանի երրորդ՝ արևի աստծու անունն էր Տիււնի, որը պիտի փոխառված լիներ խեթերենին մոտ մի լեզվից, հմմտ. խեթ. *šiu-* (*šiuuni*, *šiuanni*, *šiuana-*) «աստված», հնում՝ «արևի աստված», հմմտ. *šiuatt-* «ցերեկ» < \**dyeu-*, լուսավոր երկնքի աստծու հնդեվրոպական անունից: խեթերենում արևի աստվածը հանդես է գալիս *lštanu-* անունով (< *šap.*), և ուրարտական դիցանունը կարող էր փոխառվել ոչ թե խեթերենից, այլ մերձավոր մի բարբառից<sup>1</sup>:

Շիվինիի պաշտամունքի կենտրոնն էր Վան-Տուշպան և կարծիք կա, որ Վանի շրջանը կարող էր լինել խեթական ցեղերի այն հին բնօրրանը, որտեղից նրանք հետագայում տեղաշարժվել են արևմուտք<sup>2</sup>: Հայկական անվանաբանության մեջ Տիււնի-ի հետ համադրելի են *սիւ-/սեւ-* հիմքով տեղանունները (*š-*ով հաղորդվել է *s-* հնչյունը, իսկ հայերենում *եւ* և *իւ* երկբարբառները հերթագայում են): Սրանցից է Սևան ամրոցը Վանից 33 կմ արևելք՝ վանեցիների հավատալիքներում արևը մի հրեղեն պատանի է, որը ծագում է արևելյան լեռներից<sup>3</sup>: Սևան անունով մյուս ամրոցը գտնվում էր Գեղամա լճի նույնանուն կղզու վրա. հետագայում այդ անունը անցել է լճին: Սևանա լիճը գտնվում էր *Սիւնիք/Սեւնիք* նահանգում, որի անունն

<sup>1</sup> *I.M.Diakonoff*. Hurrisch und urartäisch. München 1971, S. 81. *И.М. Дьяконов*. О некоторых направлениях в урартском языкознании и новых урартских текстах. Древний Восток 5. Ереван, 1988, с. 172. Վ. Իվանովը ուրարտական դիցանունը փոխառված է համարում նախագրային խեթերենից, տես *В.В.Иванов*. Анатолийские языки. Древние языки Малой Азии. М. 1980, с. 131, 136:

<sup>2</sup> *В.В.Иванов*. Анатолийские языки, с. 136; *Т.В.Гамкрелидзе* и *В.В. Иванов*. Индоевропейский язык и индоевропейцы. Тбилиси 1984, с. 896.

<sup>3</sup> *Ա.Հարությունյան*. Հայ առաքելաբանություն. Բյուրեք 2000, էջ 44-45:



անբաժանելի է թվում Սևանից<sup>1</sup> (այս անվանումների հարաբերության համար հմմտ. խեթ. *šiuṇi*, *šiuanni* ձևերը): Հատկանշական է, որ Սյունիքն է *արև/արեգ* արմատով տեղանունների և անձնանունների առավել խիտ կենտրոնացման շրջանը (հմմտ. Արեգունի, Արևիք, Արևեաց տուն, Արևիս, Արևաբուլ, Արևիկ տեղանունները, Արև անձնանունը ևն): Սևանա լճի էնդեմիկ ծուկը կոչվում է *իշխան*: Վերջին մանրամասն քննության համաձայն, այս բառի արմատն անատոլիական է (խեթ. *išha-*, *ešha-* «տեր, իշխան»)<sup>2</sup>: Սևանա լճի արևելյան ափի, այսինքն՝ հետագա Արցախ կամ Փոքր Սյունիք նահանգի տարածքի երկրներից էր *Pirua-ini*-ն: *Pirua*-ն խեթալուսական «ծիավոր աստվածն» էր:

Ուրարտուն երկրի ասորեստանյան անվանաձևն է, որին ուրարտական տեքստերում փոխարինում է *Bia(i)ni* ձևը (կարդա *V(y)ânele*)<sup>3</sup>, հմմտ. Տուշպայի հետագա Վան անվանումը: Բիայնիլի-Վանի հիմքի հետ է կապվում և Վայոց ձորը Սյունիքում<sup>4</sup>: Վերջինս սահմանակից էր Արցախի Վայկունիք գավառին, որը նույնպես պիտի կապվի սեպագիր *bia-* (*vya-/va-*) ցեղանվան հետ (*իկ* և *ուհի* ածանցներով): Ուշբաբելոնյան ավանդություն Ուրարտուն կոչվում է *Uraštu*, հմմտ. Վան-Տոսպի շրջանի Ռշտունիք անվանումը: Ռշտունիները Սյունյաց տան մի հատվածն էին (Խորենացի Բ.ը), որը կարող է արտացոլել Ռշտունիքի և Սյունիքի հին բնակչության հին էթնիկական կապերը: Ըստ Ի.Դյակոնովի, ուրարտացիների ցեղանունն էր *surā*<sup>5</sup>: Ուրեմն, սեպագիր *bia-*ն (*vya-/va-*) կարող էր ներկայացնել

<sup>1</sup> *Ղ.Ալիշան*. Միսական. Վենետիկ 1893, էջ 6:

<sup>2</sup> *Լ.Չովիաննիսյան*. Հայերենի իրանական փոխառությունները. Երևան 1990, էջ 224-225.

<sup>3</sup> *Մ.Ա.Хачикян*. Хурритский и урартский языки. Т. 2, Ереван 1985, с. 38, 134: Ըստ Ի.Դյակոնովի, այդ տերմինով են կոչվել ուրարտական արքայի բոլոր հպատակները, անկախ ծագումից, տես *И.М.Дьяконов*. Жертвоприношения в Теушебауни (УКН 448). Кавказско-ближневосточный сборник. Тбилиси 1988, с. 60.

<sup>4</sup> *Г.А.Капанцян*. Историко-лингвистические работы. Ереван 1975, с. 129-130.

<sup>5</sup> *И.М.Дьяконов*. Жертвоприношения в Теушебауни, с. 59-60. *И.М. Diakonoff*. First Evidence of the Proto-Armenian Language in Eastern Anatolia. *Annal of Armenian Linguistics*. V. 13 (1992), p. 53.

Վանի շրջանի հին՝ նախաուրարտական բնակիչների ցեղանունը:

Ուրարտուի կենտրոնական տարածքներում և հատկապես Վանի շրջանում՝ Ուրարտուի սրտում, ողջ մ.թ.ա. II հազարամյակի ընթացքում բնակավայրերի հնագիտական վկայություններ չեն արձանագրվում (կան միայն գերեզմանատեղիներ): Այս տարածքները, մինչև մ.թ.ա. IX դ. բնութագրվում են նստակյաց բնակչության համարյա իսպառ բացակայությամբ: Ենթադրվում է, որ տեղի բնակիչների նշանակալի մասը եղել են վրանաբնակ քոչվորներ, որոնք սեզոնային տեղաշարժեր են կատարել իրենց անասունների հետ. իշխող վերնախավի մի մասը ապրել է փոքր ամրոցներում, մյուսը՝ վարել կիսաքոչվորական կյանք<sup>1</sup>: Հնարավոր է, որ մ.թ.ա. երկրորդ հազարամյակի սկզբից մինչև մ.թ.ա. IXդ., ոչ միայն Վանի շրջանում, այլև ողջ տարածաշրջանում գերակշռող է եղել կիսաքոչվորական կենսակերպը<sup>2</sup> (եթե դա իրոք այդպես է, ապա այդ շրջանները տարբերվել են ներկայիս Հայաստանի տարածքներից): Տուշպան մայրաքաղաք է դարձել Սարգուրի I-ի ժամանակ (շուրջ 835-824 մ.թ.ա.), իսկ Վանի շրջանը վերաբնակեցվել է մեծաքանակ գերիներով նույնիսկ Ուրարտուի պատմության վերջին փուլում<sup>3</sup>:

<sup>1</sup> *V. Sevin*. The Origins of the Urartians in the Light of the Van/Karagündüz Excavations. *Anatolian Studies*, 1999, p. 163. *Սույնի* The Early Iron Age in the Van Region. *Archaeology in the Borderlands*. Los Angeles, 2003, p. 196. *Սույնի* Pastoral Tribes and Early Settlements of the Van Region. *Ancient Near Eastern Studies. Supplement 12. A View From the Highlands*. *Archaeological Studies in Honour of Charles Burney*. Peeters 2004, p. 188. տես նաև *P. Zimansky*. *Archaeological Inquires into Ethno-Linguistic Diversity in Urartu*, p. 18, 24.

<sup>2</sup> *J. Yakar*. *Ethnoarchaeology of Anatolia. Rural Socio-Economy in the Bronze and Iron Ages*. Tel Aviv, 2000, p. 413 ff. հղվում է ըստ Զ. Քյորոզլու հոդվածի ինտերնետային տարբերակի, նույն եզրակացությամբ, տես *К.Көроғұлу*. The Transition from Bronze Age to Iron Age in Eastern Anatolia. *Identifying Changes: The Transition from Bronze to Iron Ages in Anatolia and its Neighbouring Regions*. *Proceedings of the International Workshop (Istanbul, November 8-9, 2002)*. Istanbul 2003.

<sup>3</sup> Այդ քաղաքակառուցության մի ցուցադրական օրինակ է Վանից քիչ հյուսիս Ռուսախինիլի (Այանիս) քաղաքի կառուցումը Ռուսա II-ի կողմից (մ.թ.ա. 685-645), որը բնակեցվել է «թշնամի երկրներից»՝ լեռնաշխարհի էթնիկապես տարրասեռ ծայրամասերից և Ասորեստանից տեղափոխված մարդկանցով, տես *M. Salvini*. *The Inscriptions of Ayanis (Rusahinili Eiduri-kai)*. *Ayanis I. Ten Years Excavations at Rusahinili Eiduri-kai*. Roma:



Ըստ մի կարծիքի, Ուրարտուն նշանակալի չափով բնակեցված է եղել «ուրարտացիներով» (ուրարտերեն լեզվի կրողներով) և ազգակից ցեղերով<sup>1</sup>: Բայց և վաղուց շեշտվել է, որ «ուրարտացիները» չեն կազմել երկրի բնակչության մեծամասնությունը<sup>2</sup>: Վերջին համակողմանի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ կայսրությունը, կրոնը, գիրը և պետության մյուս ատրիբուտներ ստեղծողները, հավանաբար, եղել են չափազանց փոքրաթիվ՝ ուրարտերեն խոսող մի հանրույթ կազմել է կայսրության կորիզը, իսկ հիմնական բնակչությունը բաղկացած է եղել այլ տարրերից<sup>3</sup>: Ուրարտու անվանումը կապում են ավելի հին Ուրուատրի երկրի հետ, որը գտնվել է Նիբուր լեռան (ներկայումս Ջուդի դաղ) շրջանում: Ուրարտուի իշխող դինաստիան էլ, կարծում են, ծագում էր Արդինիից (Մուծածիր): Այս երկու երկրներն էլ գտնվում են Հայկական լեռնաշխարհի ծայր հարավում, բուն Ուրարտուի տարածքներից դուրս: Ուրարտական դիցարանի առաջին երկու աստվածները՝ Խալդիի և Թեյշեբայի կենտրոնները գտնվում էին համապատասխանաբար Արդինիում և Կումենուում (Ջուդի դաղի շրջանում): Հնագույն խեթական դիցարանը գլխավորում էր արևի աստվածը, մինչդեռ Ուրարտուում Շիվինին գերագույն եռյակի երրորդ աստվածն էր: Պետք է կարծել, որ Շիվինին մեծ աստվածն էր Վան-Բիայնիլի բնիկների, որոնց տիրել էին հարավային՝ Արդինիից և Կումենուից եկած նվաճողները:

Խալդիով առաջնորդվող ուրարտական դիցարանը ստեղծվել է Իշպուինի արքայի քաղաքական կամքով<sup>4</sup> և իր ինքնատիպ եռամաս կառույցով չափազանց նման է հնդեվրոպականներին<sup>5</sup>: Ուրարտա-

<sup>1</sup> *И.М.Дьяконов*. Предыстория армянского народа. Ереван 1968, с. 17:

<sup>2</sup> *Б.Б.Пиотровский*. Ванское царство. М. 1959, с. 121.

<sup>3</sup> *P.Zimansky*. Urartian Material Culture as State Assemblage: An Anomaly in the Archaeology of Empire. Bulletin of American School of Research 299-300 (1995). տես նաև *Մույնի*՝ Archaeological Inquiries into Ethno-Linguistic Diversity in Urartu. *P.Zimansky, E.C.Stone*. Recent Excavations at Urartian Fortress of Ayanis. Archaeology in the Borderlands. Investigations in Caucasia and Beyond. Los Angeles 2003.

<sup>4</sup> *M.Salvini*. La formation de l'état urartéen. Hethitica 8 (1987), p. 405. *Մույնի*՝ Le panthéon de l'Urartu et le fondement de l'état. Studi epigrafici e linguistici sul Vicino oriente antico 6 (1989), p. 83, 85.

<sup>5</sup> *Ա.Պետրոսյան*. Ուրարտական գլխավոր աստվածների եռյակը և պետության իշխող վերնախավի ծագման խնդիրը. ՊԲՀ, 2002, № 2:

կան արքայատոհմի որոշ անուններ պարզորոշ զուգահեռներ ունեն բալկանյան անվանաբանության մեջ<sup>1</sup>: Բալկանյան կապերով հնդեվրոպական էթնիկ տարրը Հայկական լեռնաշխարհում ի հայտ է գալիս մ.թ.ա. XIII դ.: Ասորեստանյան աղբյուրները հիշում են 20000 մուշքերի և 4000 կաշկ-ապիշլուների որոնք նվաճել էին Ալզի և Կադմուխի երկրները<sup>2</sup>: Պատմական Ծոփքի տարածքից հայտնաբերվում է մեծ քանակությամբ անդրկովկասյան տիպի խեցեղեն, որը բացատրվում է այդ ցեղերի ներխուժմամբ<sup>3</sup>: Մուշքեր են կոչվել նաև մ.թ.ա. VIII-VII դդ. Փոքր Ասիայում իրենց պետությունը ստեղծած փռյուզացիները: Սեպագիր *mušku/i* ցեղանվան հետ նույնական է պոնտական *մուսք* ցեղանունը (սեպագրում օ-ն հաղորդվել է ու-ով, ս-ն շ-ով): Հնարավոր է, որ մուսքերը նույնական էին խալդայների<sup>4</sup>, որոնց ցեղանվանումը պարզորոշ համադրելի է Խալդի դիցանվանը: Ներխուժողները կարող էին եկած լինել Հայկական լեռնաշխարհի հյուսիսարևմուտքից<sup>5</sup> (որտեղ և մուսքերի ու խալդայների երկիրն էր):

Եղած փաստերի հիման վրա հնարավոր է ձևակերպել հետևյալ վարկածը: Մինչև մ.թ.ա. առաջին հազարամյակի սկիզբը Վանի շրջանից մինչև Սյունիք, Սևան և ավելի արևելք, գոնե մասամբ բնակեցված է եղել խեթերին մոտ լեզվով խոսող բնակչությամբ, որոնց ցեղանունն է պահպանվել Biainili-Վան, Վայոց ձոր և Վայկունիք ձևերում: Մ.թ.ա. XII դ. «թրակա-փռյուզական» ծագման մեկ կամ մի քանի ցեղ, ներխուժելով Հայկական լեռնաշխարհի

<sup>1</sup> Minua-ն ուղղակի նույնական է հունական ավանդական Μινύας անվանը (արգոնավորողների նախահայրը). Argiști-ի համար հմտ. 'Αργηστής «սպիտակ, փայլուն» և 'Αργεστής «Արագ», իբրև քանու մակդիր. Rusa-ն չի կարող ուրարտական լինել, քանի որ ուրարտերենում բառը չի կարող սկսվել r-ով: Ուրարտական անունների մի շարք արևմտյան զուգահեռներ (ոչ բոլորն ընդունելի) առաջարկել են Պ.Կրեյմերը և Ռ.Այլերը, տես *K.F.Lehmann-Haupt*. Armenien einst und jetzt. B. 2, H. 2. Berlin, Leipzig, 1931, S. 902-903.

<sup>2</sup> Ассиро-вавилонские источники по истории Урарту (пер., ред. *И. М. Дьяконова*). Вестник древней истории. 1951, № 2, №№ 10, 11, 12, 13.

<sup>3</sup> St'ın հատկապես *V.Sevin*. The Early Iron Age in the Elazig Region and the Problem of the Mushkians. Anatolian Studies XLI (1991), p. 96-97:

<sup>4</sup> *И.М.Дьяконов*. Предыстория армянского народа, с. 218. *Մույնի*՝ Малая Азия и Армения около 600 г. до н.э. и походы вавилонских царей. Вестник древней истории, 1981, № 2, с. 58:

<sup>5</sup> Այս հարցերի շուրջը տես *Ա.Քոսյան*. Մ.թ.ա. XII դարի մերձավորարևելյան ճգնաժամը և հայկական լեռնաշխարհը, էջ 105-107, 162 հտմ., 175-176:



հյուսիսային շրջաններից, գրավել են լեռնաշխարհի հարավային, խուռա-ուրարտական բնակչությանը որոշ տարածքներ: Նոր եկած ռազմաշունչ այդ տարրն իշխող դիրք է գրավել տեղի հին բնակչության նկատմամբ: Նրանց և տեղաբնիկների՝ ուրարտերենի կրողների հարաբերությունը կարող է պատկերացվել այնպես, ինչպես եղել է արիացիների և խուռիների հարաբերությունը Միտաննիում կամ սկանդինավցիների և սլավոնների հարաբերությունը Հին Ռուսիայում: Մ.թ.ա. IXդ. այդ եկվորներից ծագող վերնախավով առաջնորդվող ուրարտալեզու մի զանգված գաղթելով հյուսիս, իր կենտրոնն է դարձնում Վանի շրջանը և շուտով իր իշխանությունը տարածում ողջ Հայկական լեռնաշխարհի վրա:

*Հմայակյան Ս., Հակոբյան Հ., Սանամյան Հ.,  
Միմոնյան Հ., Տիրացյան Ն. (ՀԱԻ)  
Բիշոնե Ռ., Պարմեջիանի Ն. (Հռոմ)*

### ՍԵՎԱՆԻ ԱՎԱԶԱՆՈՒՄ 2000-2003 թթ. ԿԱՏԱՐՎԱԾ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Շրջիկ արշավախումբը այս տարիների ընթացքում ուսումնասիրություններ է կատարել հիմնականում Գեղարքունիքի մարզի Վարդենիսի, Մարտունու և Գավառի ենթաշրջաններում: Հետազոտվել են 66 տարաբնույթ հուշարձաններ և հուշարձանախմբեր: Ամրոցները՝ ինչպես օրինակ Առվույտի դաշտ ուրարտական ամրոցը, Իլիկավանքը, Յունլուխը, Կոտուլի բերդը չափազարվել են: Եզրտվել են այդ հուշարձանների թվագրության հետ կապած շատ հարցեր: Մասնորապես Կուր-արաքսյան մշակութային շերտեր են դիտարկվել Քռա, Պողոսի ավերակներ, Բերդի դար, Ջաղացի դար ամրոցներում: Հաստատագրվել է Միջին բրոնզեդարյան (Սևանյան) դամբարանների առկայությունը Քռա ամրոցի շրջակայքում, VII-V դարերի դամբարաններ Վարդենիս քաղաքի տարածքում և Սառնաղբյուր գյուղում և այլն: Բացի այս, հայտնաբերվել են երկու անհայտ, ոչ մեծ 30x40մ չափերի ամրոցներ՝ «Սուրբ Ստեփանոս» և «Ագարակ», մեկ հին ճանապարհ, որը հավանաբար կապել է «Առվույտի դաշտը» «Խալդիի քաղաքի» հետ: Գավառում գտնվել է խաչքարի վերածված՝ հսկայական ֆալոսաձև կոթող, Մարտունիում՝ արաբատա արձանագրությանը XVI-XVIIդդ. թվագրվող քանդակազարդ տապանաքար: Հայտնաբերվել են նաև արտաշիսյան 4 սահմանաքարեր, ընդ որում դրանցից մեկը՝ Կարճաղբյուր գյուղում գտնվողը, հայտնաբերվել է Ի. Կարապետյանի դիտողությունների հիման վրա, երկու «վար-



դենիկյանները» հայտնաբերվել են Ն.Չազեյանի, և մեկը՝ Սարուխան գյուղում գտնվողը՝ Ս. Գնայակյանի կողմից:

2001թ. շարունակվել են Այրք հնավայրի հետախուզական երկու փոսորակների պեղումները. մեկը՝ պարսպին կից, մյուսը՝ ամրոցին հարող բազմաթիվ քարայրերից մեկում (N1): Արդյունքում ճշգրտվել են Այրք ամրոցի գոյատևման սահմանները՝ մ.թ.ա. VIII - մ.թ. XVIIIդդ: Ավելի ուշ, ամրոցի վրա ձևավորվել է մի գյուղ, որը այժմ էլ գոյություն ունի: XIII դարում Դոկիյանների օրոք ամրոցի տարածքում հիմնվել են երկու՝ Ս. Գևորգ և Ս. Աստվածածին եկեղեցիները, խաչքարառատ գերեզմաններով: Արձանագիր խաչքարերից հնագույնը 1046թ. է, ամենանորը՝ 1666թ.:

Ուսումնասիրված քարայրն օգտագործվել է դեռևս ուրարտական ժամանակաշրջանում, ավելի ուշ վերածվել է թերևս աղոթատեղիի, քանի որ այստեղ հայտնաբերվեց խաչքարի բազալտե հիմնասալ:

Այսպիսով, արշավախմբին իր գործունեության 10 տարում (1994-2003թթ.) հաջողվել է ուսումնասիրել 137 հուշարձանախումբ:

2002թ Չոռում ույս տեսավ արշավախմբի 7 տարիների գործունեությունը ամփոփող հաշվետվությունը, որտեղ ներկայացված են Մարտունիի, Վարդենիսի ենթագավառներում գտնող հուշարձաններից 82-ը:

*Тер-Мартirosов Ф. (ИАЭ)*

## РАСКОПКИ НА СЕВЕРНОМ СКЛОНЕ КРЕПОСТИ ЭРЕБУНИ

С 1998г. Эребуни́йская экспедиция возобновила археологические исследования на холме Арин-Берд. В 1999-2004гг. на северном склоне была вскрыта вся толща культурных напластований. На глубине 1-1,5м расположены культурные слои разных эпох. Общая толщина культурного слоя равняется приблизительно 4 метра. Раскоп располагается на расстоянии 40м от оборонительных каменных стен на вершине холма и на 20м ниже их. Длина раскопа поперек склона 10м, и 18м по склону вдоль новооткрытой стены.

В нижней части раскопа открыт материк – глиняные слои красноватого цвета. Хотя наиболее древний период жизни на холме относится к эпохе палеолита, культурный слой этого времени пока не открыт. Обнаруженный на материковой почве самый нижний культурный слой равен 20-30см. Слой характеризуется наличием большого числа остатков костного материала и фрагментов керамики черного черепка с врезным или вдавленным орнаментом в виде поясков, волнистых линий и цепи черточек. Материал этот характерен для эпохи железа, однако следует отметить, что керамика этого типа продолжает бытование и в более позднее время. Хорошо датированные фрагменты керамики эпохи раннего железа вышли из слоя насыпной земли в 2003г. Наиболее вероятно, что нижний слой образовался в результате сброса мусора в период бытования на вершине холма поселения эпохи железа.



Культурный слой урартского периода имеет наибольшую толщину в 220 см. Слой имеет несколько прослоек. В нижней части раскопа перекрывая первый слой идет слой из глины и мелкой гальки. Слой глины и гальки имеет в верхней части толщину в 30 см, а в нижней части раскопа, у слоя с костями и с керамикой черного черепка, а также у материковой поверхности ссужается и сходит на нет. В верхней части раскопа под слоем глины и гальки открыт хорошо утрамбованный пол из глины, толщиной в 25 см. В основании пола заложены небольшие куски битого камня в смеси с глиной. Поверх него положена мелкая галька также в смеси с глиной. В промежутке между слоем глины и полом найдена керамика, хорошо датируемая урартским временем.

Поверх этих слоев идет слой пепла и мелкого угля, насыщенный остатками разнообразного археологического материала и обломков строений, в том числе и обломками сырцового кирпича и фрагментов обмазки стен. Этот слой также хорошо датируется урартской керамикой красного полированного ангоба с клеймами.

Таким образом, можно говорить о двух этапах жизни в урартский период. Первый урартский этап связан с глинобитным полом. Пол этот служил основанием для жилых и хозяйственных комплексов населения жившего за пределами крепостных строений, на начальном этапе существования крепости Эребуни, где на склонах создавались террасы шириной до 25-30 метров с высотой перепада до 6 м.

В раскопе к полу относится мастерская художника. О наличии здесь мастерской свидетельствуют: а) куски комков краски: кристаллического кобальта, охры красной и желтой и кусков мела; б) найденная насыль мелкого промытого песка, леса; в) насыпанная здесь комками чистая глина; г) громадное количество костей животных, вываренных для получения клея. Здесь же были найдены фрагменты покрытия из глины со следами краски. Очень интересны фрагменты обнаруженной здесь красноангобированной керамики с процарапанным

рисунком. Интересен и необычен рисунок головы быка переданный схематично предельной лаконичностью линий при наличии экспрессии в развороте головы в фас. Выделяется обломок с сохранившейся частью выгравированного изображения рогов оленя. Найден также фрагмент сосуда с процарапанным рисунком пятиконечной звезды размещенной между двумя трехступенчатых выступов. Данный рисунок свидетельствует об обращении к божеству и, возможно, был принесен в дар богу. Судя по материалам, в том числе находке рога из бронзы от небольшой статуэтки, возможно, в мастерской работали мастера различных профессий.

Мастерская открытое частично, представляет большое сооружение шириной более чем 4 м и 10 м в длину. Особый интерес представляет находка здесь скола камня с иероглифической пометкой - 2 теруси, сделанной аккуратно на хорошо выровненной поверхности камня мягкой породы, вероятно, ферзита. Следов размещения перед ним других знаков не прослеживается, кроме сбитой ямочки, которая, возможно, означала 1 *акарки*.

В слое найдена и другая уникальная находка - глиняная булла с антропоморфным изображением бога. Само изображение датируется урартским периодом и является оттиском печати, какого-то соседнего с Урарту государства.

Слой пепла связан с периодом разрушения. Исходя из ситуации прослеживания значительного слоя угля и пепла на сравнительно широком участке - 10 метров, можно говорить о военной причине возникновения пожара и разрушения. Время этого разрушения относится к периоду до сооружения второй крепостной стены на склоне холма. То есть наиболее вероятно к периоду непосредственно после правления царя Аргишти 1.

Учитывая относительную датировку конца первого этапа жизни памятника, следует отметить, что раскрытая картина пожара и разрушения, впервые наглядно свидетельствует о том, что борьба племен с урартским государством шла с переменными успехами той или иной стороны.



Найденный материал позволяет заострить внимание на бытующем принципе деления керамики по ангобу – красноангобированная урартская, керамика черного черепка местная. Среди многочисленных фрагментов керамических сосудов красного ангоба и черного черепка, есть образцы темно-красноангобированных, с прекрасно полированной поверхностью, и образцы с штампами мастерских. Важно наличие большого количества клейм, как на керамике красноангобированной, так и на керамике черного черепка, хорошего качества. Из них наиболее интересен рисунок клейма – крылатый грифон с головкой лани без рогов или коня крылатого. Найден фрагмент красноангобированного сосуда формы, не встреченной ранее в публикациях по урартской керамике. Важно отметить также общность форм для красноангобированных и сосудов черного черепка. При наличии большого фрагментов черного черепка для больших по размеру сосудов, среди них почти полностью отсутствуют фрагменты сосудов мелких размеров. Это позволяет говорить, что все население использовало красноангобированные миски, кубки и другие формы сосудов мелких размеров. Говоря о локальной керамике урартского периода, к ней следует относить не просто керамику черного черепка, но и имеющую орнамент, выполненный в традициях эпохи железа.

Из бронзовых вещей интересны находки трех фибул из бронзы со спинкой дугообразной формы. Найдена бронзовая пластины в виде зубчатой шаубы, возможно головки от иглы – застежки, а также браслет.

Второй этап урартского времени связывается со временем сооружения второй крепостной стены на склоне холма. Стена эта отсутствует на существующих планах крепости. Стена расчищена на длину в 15 м. Она сложена из огромных грубо тесанных туфовых блоков доходящих размерами до 1 м в длину и 80 см в высоту. Ширина стены 2,4 метра. Внутренняя часть стены между двумя панцирями из каменных блоков сложена из крупных булыжников, мелкой гальки и глиняного раствора. Перед

возведением стены был настлан нивелирующий слой глины. Для укрепления склона, был настлан слой из глины и мелкой гальки. В тоже время, нижние камни стены стоят не на одной горизонтальной площадке, а поставлены по ступенькам вырытым в земле. Для еще большего укрепления стены в земле, на высоте 1,5 метра от нижнего ряда камней фундамента стены на 1,5 м в ширину от края каменной стены, был создан утрамбованный глиняный настил с вкраплением крупного песка. Стена имеет контрофорсы, выступающие на 60 см. Расстояние между контрофорсами 520 см. Угловой контрофорс имеет длину в 305 см, на среднем отрезке стены длина контрофорса равна 205 см. Стена не имеет смежного угла. Наиболее вероятно, что это начало защитного прохода в виде коридора между двумя стенами, который защищал вход в крепость с северной стороны, где в древности спускалась дорога к речке текущей у подножья холма.

Очень интересна находка фрагмента расписной керамики от лепного сосуда. Роспись нанесена красной краской по коричневой поверхности черепка. Ближайшая аналогия к ней эта керамика из Каппадокии, найдена в Армении впервые. Большой интерес представляет керамика не типичная для урартских памятниках, и насколько нам известно, пока не публиковавшаяся в отчетах о раскопках урартских памятников, условно обозначенная нами как импортная. Керамика эта имеет светло-зеленоватый черепок с наружной и внутренней сторон. Такой черепок присущ керамике ново-ассирийского времени из северных регионов Месопотамии. Новинкой является керамика тонкого черепка коричневатая, без лощения и керамика тонкого черепка коричневатая, с лощением, а также керамика беловатого черепка с темной подложкой. Они могут свидетельствовать о контактах Урарту с Малой Азией.

Культурный слой ахеменидского периода имеет наибольшую мощность в 100 см на вертикальной поверхности среза, выделяясь двумя пластами верхним и нижним ярко-коричневой ровной глины с внутренней более светлой прослойкой. На боко-



вых плоскостях разреза толщина слоя резко уменьшается в нижней точке до 15 см. К этому слою относится стена, открытая в 2003 г, в верхней части раскопа, на отдалении 4 метров от новооткрытой оборонительной стены. Высота стены 80 см, длина открытой части 450 см. Она на 150 см возвышается над каменным основанием фортификационной стены. Стена сложена из колотых камней удлиненных по форме средних размеров.

Под стеной идет слой с пеплом и углями и урартским материалом. В нижней части урартского слоя, как уже указывалось, четко прослеживается глина красноватого цвета, побывавшая в огне.


Материал ахеменидского периода, хотя значительно уступает по количеству и разнообразию урартскому, тем не менее, представляет значительный интерес. Культурный пласт насыщен фрагментами керамики. Для большинства керамики красного цвета характерно, сохранение форм урартской керамики, но поверхность сосудов при этом не ангобируется, а покрывается краской. Характерно при этом появление более темно окрашенных поясков на венчиках сосудов. Наряду с ними распространяются новые формы сосудов, в основном они представлены фиалами коричневого черепка. Сохраняется керамика черного черепка, с врезанным орнаментом традиционным для эпохи железа.

Особый интерес представляет находка здесь фрагмента буллы овальной формы с сохранившимся частично двумя изображениями. На одном вдавленном изображении видны ноги человека в длинном одеянии, стоящего над хвостом скорпиона. Другой оттиск на этой же булле показывает ноги человека сделавшего шаг вперед. Из обнаруженных предметов из металла интересно свинцовое ядро для пращи весом в 10 г. Оно найдено вместе с серьгами из бронзы. Найденная в этом слое железная черешковая стрела имеет вытянутую лепестковую форму сравнительно больших размеров и овальна в сечении. К этому времени, относятся и типологически другие две стрелы. Они пред-

ставляют собой образцы бронзовых двухперых стрел с центральной жилой и шипом на короткой втулке.

Очень интересна находка фрагмента мраморной статуи. Он представляет полукруглый выступ с вдавлениями, вероятно это фрагмент изображения волос. Не исключено, что этот фрагмент относится к эллинистическому времени, так как манера обработки мрамора углубленными точками, редка для классического времени.

Таким образом ахеменидские и более поздние сооружения представлены не двумя или тремя сооружениями, а зданиями, возведенными на всей территории памятника, при использовании более древних урартских конструкций. Новое археологическое исследование показывает, что изучение урартского периода не завершено и требуются дальнейшие работы для построения картины жизни памятника в прошлом.





*Քալանթարյան Ի. (ՀԱԻ)*

**ԱԳԱՐԱԿԻ ՆՈՐԱՅԱՅՏ ԺԱՅՈՎՓՈՐ ԴԱՄԲԱՐԱՆԸ**

Ագարակի պատմամշակութային արգելոցի 2004 թ. դաշտային հետազոտությունների ընթացքում, առաջին հարթակի հարավային եզրին (IV տեղամաս, O<sub>6</sub> քառակուսի) բացվեց հատակագծային ինքնատիպ լուծումներով վիմափոր մի դամբարան:

Դամբարանը կառուցվել է առաջին հարթակի հարավային ճակատի կենտրոնական ժայռախորշում: Այս հատվածում ժայռը մշակված, հարթեցված է, ինչի շնորհիվ ժայռախորշի դիմաց ձևավորվել է երկաստիճան հարթակ-հրապարակ: Բացված հատվածները ցույց են տալիս, որ ստորին հրապարակի ողջ մակերևույթը նույնպես մշակված է: Առկա են փոսիկներ, ակոս-առվակներ: Յուսիս-արևմտյան հատվածում հրապարակի վրա նստած որմնաժայռի «հիմքը» այնպես է մշակվել, որ այն, մեկ աստիճան բարձր եռանկյունաձև ելուստով, սահմանազատվում է հրապարակի ընդհանուր մակերևույթից: Դամբարանի նախամուտքը փորվել է այս ելուստի ծայրին:

Դամբարանը կազմված է նախամուտքից, մուտքից և մեկ սրահից: Դամբարանի հարավում գտնվող, հատակագծում քառակուսի «հորան-նախամուտքի» (1,2x1,2մ) բարձրությունը հյուսիսում՝ ժայռի հիմքի տակ 1,87մ է, հարավում՝ 1,65մ: Բարձրության նման տատանումը կապված է հրապարակի թեք մակերևույթի հետ: Չորանի հյուսիսային եզրի վերևում, որմնաժայռի մեջ արված կտրվածքները վկայում են, որ նախամուտքը ծածկված է եղել հարթ սալով (չի պահպանվել): Նախամուտքի հյուսիսային պատի մեջ, անմիջապես հատակից բացվեց դեպի թաղման սրահը տանող մուտքը (չափերն են. բացվածքի լայնությունը՝ վերևում՝ 0,52մ, միջին մասում՝ 0,54մ, հատակին՝ 0,56մ, բարձրությունը՝ 0,85մ է, երկարությունը՝ 0,87մ): Մուտքի պատերի վերից վար իջնող ելուստները ցույց են տալիս, որ

բացվածքը զննվել է քարերով: Նախամուտքում գտնված ուղղանկյուն խնամքով մշակված մակերևույթով տուֆաքարն ակներևաբար մտքը փակող քարերից մեկն է (չափերն են. 0,55x0,59x0,47մ): Այն հարթությունն ունեցող նախամուտքի և մուտքի հատակները սրահի հատակից բարձր են 0,42մ:


Կամարածև առաստաղով դամբանասրահը հատակագծում ուղղանկյուն է, երկայնական առանցքով ուղղված հարավից հյուսիս (չափերն են. 2,15x3,5x1,85մ): Սրահի երեք պատերն օժտված են մեծ և փոքր որմնախորշերով, իսկ հյուսիսային պատին կից ունի, հատակի մեջ փորված ավազան:

Սրահի արևելյան և արևմտյան պատերին, մուտքի երկու կողմերում, հարավային պատից մոտ 0,36մ հեռավորության վրա արված են երկու քառակուսի խորշեր՝ հատակներին թասածև փորվածքներով: Սրանց հաջորդում են ուղղանկյուն, մեծ խորշերը: Արևմտյան պատի փոքր՝ 0,55x0,5x0,38մ չափերի խորշը հատակից բարձր է 0,75մ: Չատակին արված փոսիկի տրամագիծը՝ 0,27մ է: Դրանից 25սմ հեռավորության վրա դեպի հյուսիս, հատակից մոտ 0,58մ բարձրության վրա փորված է մեծ խորշը (չափերն են. 1,88x 0,72x0,55մ): Արևելյան պատի փոքր՝ 0,48x0,48x0,34մ չափերի խորշը հատակից բարձր է 0,7մ: Սրանից մոտ 0,28մ հյուսիս, հատակից 0,48մ բարձր ընկած է մեծ խորշը, որը դիմացի պատին եղածի հայելային կրկնությունն է (չափերն են՝ 1,85x0,7x0,55մ): Մուտքին դիմահայաց, հյուսիսային կարճ պատի որմնախորշերի դասավորությունը տարբերվում է նախորդներից: Այստեղ փոքր որմնախորշը գտնվում է մեծի վերևում: Վերջինս հատակից բարձր է 0,48մ և ունի 1,5x0,62x0,7մ չափեր: Մեծ խորշի կենտրոնից մոտ 0,2մ վերև փորված է փոքր՝ 0,3x0,3x0,25մ չափերի խորշը: Սրա հատակը հարթ է՝ զուրկ թասածև փորվածքից: Յուսիսային պատին կից, հատակի մեջ փորված 1,7x0,80x0,45մ չափերի ավազանն ավարտվում է հատակից մոտ 9սմ բարձրացող և 0,28մ լայնք ունեցող եզրաթմբով, որը նույնպես օժտված է 0,27մ տրամագիծ ունեցող 8 փորվածքներով:


Ցավոք դամբարանը թալանված էր և նյութեր չէր պարունակում: Նախամուտքի և դամբանասրահի մաղված հողալիցքից հայտնաբերվեցին տարբեր դարաշրջանների խեցանոթների բեկորներ, ոսկրի մանր բեկորներ: Այս պարագաններում, դամբարանի մշակութա-



Աղ. 1



ԿՏՐՎԱՍՕՐ Բ-Բ




ԳՍՏԱԿԱԳԻՑ


Մ 1:25

Ազարակ: Վիճակի որմնաբարձ:


Աղ. 2



ԿՏՐՎԱՍՕՐ Ա-Ա



ԿՏՐՎԱՍՕՐ Դ-Դ



ԿՏՐՎԱՍՕՐ Գ-Գ Մ 1:25

Ազարակ: Վիճակի որմնաբարձ:



ժամանակագրական պատկանելության հարցի լուծմանը նպաստում են շերտագրական դիտարկումներն ու կառույցի տիպաբանական աղբյուրները: Դամբարանի նախամուտքից 3,5մ արևելք, ժայռի մակերևույթին բացվել է ուրարտական կնիքով կարասային թաղում, որի վրա հետագայում պատ է շարվել: Կարասային թաղումը ավելի ուշ չէ, քան մ.թ.ա. VI դարը: Սրա հարևանությամբ, ժայռի մակերևույթին պահպանվել էր լավ մշակված քարերից շարված կառույցի մնացորդ (մշակման բոլոր մանրամասներով կրկնում են դամբարանի մուտքը խցանող քարին), որի վրայի 0,4մ հզորության հողաշերտի վրա բացվեց կարասային թաղում: Ուղեկցող գույքը թույլ է տալիս թաղումը ժամանակագրել մ.թ.ա. III-IV դ. շրջանակներում: Նշված տվյալներից ելնելով, մշակված հարթակ-հրապարակի և վերոհիշյալ կառույցի մնացորդների թվագրության վերին սահմանը կարելի է ընդունել մ.թ.ա. VI դարը:

Դամբարանն իր հատակագծային հորինվածքով և ներքին հարդարման մանրամասներով ակնհայտորեն կրկնում է Վանի թագավորության շրջանի վիմափոր և քարաշար բազմաթիվ դամբարանների հատկանիշները: Դյուսիս-հարավ ուղղվածությամբ, գրեթե նույն չափերի միաստիպ՝ երեք պատերին խորշերով վիմափոր դամբարան ունենք Վանա ժայռի վրա (*Պուտրովսկի, 1959, с. 213, рис. 67*): Ազարակի դամբարանի անմիջական զուգահեռները տեսանելի են Բ. Օգյունի և Է. Բիլջիքի կողմից Արծկեում (Ադիլջևազ) պեղված ժայռափոր դամբարաններում: Վերջիններս կամարածև առաստաղով, երեք պատերին որմնախորշերով մեկ սրահանոց թաղման կառույցներ են, որոնք ունեն հորանածև նախամուտքեր: Այստեղ նույնպես սրահների հատակն ավելի ցածր են, քան մուտքինը (*Oguz, Bilgic, 1973, p. 14*): Նույն մանրամասներն ունեն վերջերս Ալթին թեփեում պեղված 33 ժայռափոր դամբարանների մեծ մասը: Սրանք նույնպես ուղղանկյուն հատակագծով, մեծ և փոքր խորշերով մեկ սրահանոց դամբարաններ են: Հատկանշական է, որ այստեղ ևս դամբարանների նախամուտքերը հորանածև են: Նմանություն ենք տեսնում նաև այն բանում, որ սրահները գտնվում են մուտքից ցածր դիրքում (*Sevin, Özfirat, 2001, p. 180-181*): Հատակագծային լուծումներով Ազարակի դամբարանը բազմաթիվ ընդհանրություններ ունի նաև Ալթին թեփեի N2 ու Երևանի քարաշար ուրարտական դամբարանների հետ (*Özgül, 1961, p. 67; Есаян, Биягов, Амаякян, Канециян, 1992, с. 5*):

Փոքր վիմախորշերի հատակներին արված թասածև փորվածքները նույնպես բնորոշ են ուրարտական դամբարաններին: Այդպիսիք արձանագրվել են Կայալի դերեում, Ալթին թեփեում, Պալուլում, Խորխորյան «Մեծ քարայրում», Երևանի կոլումբարիում, Սիրինլի կալեում և այլուր (*Burney, 1966, p. 106; Özgül, 1961, p. 67; Sevin, Özfirat, 2001, p. 180; Köroğlu, 1996, p. 106; Մելրոնյան, 1995, էջ 14; Есаян, Биягов, Амаякян, Канециян 1992, с. 19; Çilingiroğlu, 1997, p. 37*):

Ազարակի դամբարանի առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ հյուսիսային պատի տակ ունի հատակի մեջ փորված ավազան-սարկոֆագ: Ուղղանկյունածև, քարի մեջ փորված սարկոֆագներ հայտնի են Ալթին թեփեի N 3 դամբարանում (*Özgül, 1961, p. 68-69*), Վանի ժայռի վրա, «Իչկալա» կոչված դամբարանի 2-րդ սրահի 3-րդ սենյակի հյուսիսարևելյան պատին կից թողնվել է ուղղանկյուն թմբիկ, որի մեջ կանոնավոր փորվածք կա (*Պուտրովսկի, 1959, с. 211-213, рис. 62*): Ազարակի սարկոֆագի ամենամոտ զուգահեռը Կայալի դերեում է, որը նույնպես փորված է հատակին (*Burney, 1966, p. 103-104*): Հատկանշական է, որ Թոփրախ կալեում բացվել է ստորգետնյա կառույց, որն ունի հատակի մեջ փորված ուղղանկյուն ավազան (*Պուտրովսկի, 1959, с. 218*):

Բերված դիտարկումները թույլ են տալիս Ազարակի ժայռափոր դամբարանը վերագրել Վանի թագավորության շրջանին, թվագրելով այն մ.թ.ա. VIII-VI դդ. սահմաններում:

#### Գրականություն

1. Մելրոնյան, 1995 - Մ. Մելրոնյան, Ուրարտական ժայռափոր դամբարանները, ԳԳԳ, 16, պրակ III, Երևան:
2. Есаян, Биягов, Амаякян, Канециян, 1992 - С. А. Есаян, Л. Н. Биягов, С. Г. Амаякян, А. Г. Канециян, Биайнская гробница в Ереване, АПА, 15, Ереван.
3. Պուտրովսկի, 1959 - Б. Б. Пуотровский, Ванское царство, Москва.
4. Burney, 1966 - С. А. Burney. A First Season Of Excavations At The Urartian Citadel Of Kayalidere, Anatolian Studies, Vol. XVI.



5. *Çilingiroğlu, 1997* - Altan Çilingiroğlu, Urartu Krallığı Tarihi ve Sanatı, İzmir.
6. *Köroğlu, 1996* - Kemalettin Köroğlu, Urartu Krallığı Döneminde Elazığ (Alzi) ve Çevresi, Arkeoloji ve Sanat Yayınları, İstanbul.
7. *Ogun, Bilgic, 1973* - B.Ogun, E.Bilgic, Recent archaeological Research in Turkey: Adilcevaz, AS, vol. XXIII, London.
8. *Özgüç, 1961* - Tahsin Özgüç. Altintepe II: Tombs, Storehouse and Ivories. Türk Tarih Kurumu Bazimevi, Ankara.
9. *Sevin, Özfirat, 2001* - Veli Sevin and Aynur Özfirat, Van – Altintepe Excavations Istanbul University's Contributions To Archaeology In Turkey (1932 – 2000 ), Edited by Oktey Belli, İstanbul.

Մարտոյան Գ.

## ՀԱՅՈՑ ԱՆՇԱՐԺ ՏՈՍԱՐԻ ՄԻ ՇԱՐՔ ԱՄԻՍՆԵՐԻ ՎԵՐԱՎԱՆՁՆՄԱՆ ՓՈՐՁ ՄՅԵՐԻ ԴԴԱՆ ԴԻՑԱՑԱՆԿՈՒՄ

Հայոց «Անշարժ-Սրբազան տոմար» եզրի սահմանումը տվել է Ղևոնդ Ալիշանը: Նրա կարծիքով, հայերը վաղնջական ժամանակներում շարժական տոմարին զուգահեռ գործածել են կրոնադիցաբանական տոների համար նախատեսված անշարժ տոմար, որի համաձայն, զարնանային օրահավասարը սկսվել է Արեգ-մարտ ամսից (*Ալիշան, 88*): Այս տեսակետը հետագայում պաշտպանել է տոմարագետ Հ.Ս.Բաղայանը (*Բաղայան, 12-13*): Հ.Հ.Կարագյոզյանը համադրելի է համարել Սիերի դռան դիցաբանի «Շիվիհնի աստժո ամիսը» և հայոց Արեգ ամսանունը (*Կարագյոզյան, 47, ծան. N 7*): Հետագայում այս դրույթը հիմնավորել է Ս.Գ. Հմայակյանը (*Հմայակյան, 10, 44-45, 76-77*): Հայոց տոմարի մյուս ամիսների և Սիերի դռան դիցաբանների զուգադրումները կատարելիս, ելակետ ենք ընդունել Արեգ-Շիվիհնի-մարտ համապատասխանությունը:

**ԱՐԿԻ-ՏՈՒՇԴՈՒՆԱ-ԱՎԱՐԻՎ:** Արեգի իզական զուգակիցը Տուշպուեան է, որի պաշտամունքը կապվում է Տուշպա-Վան քաղաքի հետ, ինչի մասին վկայում է նախևառաջ նրա անվանաձևը: Կարծիք է հայտնվել, որ նա արշալույսի դիցուհի է, քանի որ պատկերվել է, իբրև կանացի իրանով թռչուն, քների մեջ՝ Արևի սկավառակը (*Հմայակյան, էջ 46*): Վան քաղաքի հիմնադրումն, ըստ Մովսես Խորենացու, կապված է Շամիրամի անվան հետ (*Խորենացի, Ա, ժգ*), իսկ Շամիրամ-Սեմիրամիսը նույնացվում է միջագետքյան Իշտար-Դերկետոյին, վերջինս էլ՝ հայոց Աստղիկին (*Արեղյան, 61, Աղոնց, 88*): Դերկետոյի բնակավայրը միջագետքյան առասպելը համարում է ջրային ավազանը (*Աղոնց, 78*): Հայկական ավանդության համաձայն, Աստղիկն ամեն զիշեր լողանում էր Եփրատի (Արածանիի) ջրերի մեջ, իսկ պատանիները ձգտում էին տեսնել նրա մերկությունը:



նը (*Արվանձույանց, 48*): Մեր կարծիքով, պատանհներն իրականում գիշերով Եփրատի ջրերի մեջ Վեներա մոլորակի արտացոլանքն են տեսել, քանի որ հայոց մեջ Աստղիկը Վեներայի մարմնավորումն էր (*ՆԲՅԼ I, 320*): Սակայն Աստղիկը ծագում է նաև այգաբացին, ուստի պատահական չէ, որ բիսյանական Տուշպուեան պատկերվել է որպես արշալույսի դիցուհի՝ թևերի մեջ կրելով Արևը:

Ահկի ամսվա մասին Վանական Վարդապետից հայտնի է հետևյալը. «... ի յառնել գետոց և թուլանալ ձեան, ահ է ասեն մարդոյ ամենուրեք»: «Ահեկան» և «ահեակ» բառերը գրաբարում ձախի իմաստն են արտահայտում: Կապվել են ամենայն վնասակարի հետ: Հայկազյան բառարանը դրանք բացատրում է «չար, անարգ, վատթար, վնաս, մոլորեալ» նշանակությամբ (*ՆԲՅԼ, 30-31*): Հետևաբար, բացի վարարող գետի (Եփրատի) հետ կապվող Աստղիկ-Տուշպուեա լուսավոր աստվածուհուց «Ահկիի» մեջ հասկացվել է նաև ինչ-որ չար սկիզբ կրող էություն, որի մասին ոչինչ չի ավանդվել, և որը սակայն իր հետքը թողել է այս ամսանվան մեջ: Կենդանաշրջանի համաստեղություններում, որոնց հիման վրա հնում արեգակնային տոմարն է կազմվել, այդ էությունը կարող էր լինել Ցուլը, որը սովորաբար, մեր վիշապաքարերի վրա պատկերվում է իբրև զոհաբերված կենդանի՝ ռունգերից հորդացող ջրի վարար շիթերով: Ապացուցված է, որ շուներական «Գիլգամեշ» էպոսում 7 կումով Եփրատի ջրերը ցամաքեցնող «Երկնային ցուլը» Ցուլ համաստեղությունն է, որը հունվար ամսին իր գագաթնակետին հասնելով, «սպանում է» Տիգրիս և Եփրատ գետերի համարժեք Ջրոս համաստեղությանը՝ նրան իջեցնելով անդրաշխարհ (հորիզոնից ներքև), իսկ ապրիլ ամսին «սպանվում է» Առյուծից, երբ վերջինս է շարժվում դեպի իր գագաթնակետը (*Դավթյան, 171-172*):

Չի բացառվում, որ հայոց մեջ Ահկի ամիս ասելով, ոչ միայն Եփրատ գետի հետ կապված Աստղիկ-Տուշպուեա դիցուհին է հասկացվել, այլև ձախակողմյան վնասակար բնույթ կրող «սպանված» Ցուլ համաստեղությունը, որի ռունգերից առատորեն թափվող ջուրը կարող է աղետների պատճառ լինել:

*ՄԱՐԵՐԻ-ԱՌԻԻ-մայիս*: Ահկի-մայիս ամսին հայոց անշարժ տոմարում հաջորդում է Մարերին, որի մասին Վանական վարդապետի «Տարեմուտում» ասված է. «Ամիս հայոց՝ ըստ անշարժ տոմարի

ամենատ մայիսի (որպես ամիս մարեաց կամ թխելոյ հաւուց). մարերի յորժամ թաւանան մայրիք տերևօք և ոստօք և լինին որպես մայր թռչնոց և գազանաց» (*ՆԲՅԼ, II, 224*): Հետևաբար, «Մարերի» ասելով, ըստ հայոց անշարժ տոմարի, հասկացվել է մի կողմից էգ թռչունների («մարեաց») և հավքերի («հաւուց») թուխսի, մյուս կողմից էլ՝ մայրի ծառերի տերևների և ոստերի թավանալու ամիսը, ուստի, որոնք որպես մայրական գիրկ են ծառայել թռչունների և գազանների համար:

«Հավ(ք)երի ամիս» իմաստն անգեմ աչքով տեսանելի է Միերի դռան դիցացանկում՝ Աուի անվան մեջ, որն անմիջապես հաջորդում է Տուշպուեա-Ահկիին: Ըստ մեզ, կարդացվել է «Հավի» կամ «Ավի»: Թռչուններն «ավ ու չըվ(ող)» ձևով արտաբերվում են նաև Գեղարքունիքի որոշ տեղական խոսվածքներում, իսկ «ավչի» բառը հայոց ամսական լեզվում որսորդ է նշանակել, թերևս, «հավք խփող» իմաստով:

*ՄԱՐԳԱՅ-ԱՐԴԻ-հունիս*: Վանականի «Տարեմուտում» Մարգացի մասին ասվում է. «Անուն ամսոյ հայոց, ի դէպ եկեալ վայելչուն և մարգաց կամ մարգագետնոյ. զի ըստ անշարժ տոմարին անկանի յաւուրս յունիսի. Մարգացն, որ է ժամանակ ածելոյ գմարգս՝ որ ի դաշտս և ի հովիտս իցեն, յայգետտանս և ի բուրաստանս» (*ՆԲՅԼ, II, 219*): Այս ամսի դիմաց Միերի դռան դիցացանկում համապատասխանաբար արձանագրված է Աուի-Ավի-մայիսին հաջորդող Արդի դիցանունը: Ըստ մեզ, հայերեն «արտ» բառն է, որը գրաբարում ռունցել է հող, անդաստան, ագարակ իմաստները: Ավանդված է, օրինակ՝ «Վարեցին արտս և տնկեցին այգիս» (*ՆԲՅԼ, I, 375*): Իսկ մարզը նույնպես հասկացվում է այգու՝ խոտավետ, ծաղկավետ վայրի իմաստով, ինչպես, որ ասվել է գրաբարում. «դաշտ խոտաւետ, ծաղկավետ. վայր ջրարբի» (*ՆԲՅԼ, II, 217*): Եւ իսկապես, Մարգաց-հունիս ամսին արտերը՝ մարգերը, մարգագետինները վայելչատես, փարթան և ծաղկավետ են դառնում, ինչպես և նշել է Վանականը: Այս ամիսը պետք է որ մարմնավորած լինի արտերի ու մարգերի հովանավոր բիսյանական Արդ(տ)ի դիցուհին:

*ՀՐՈՏԻՑ-ԱՅԱ-հուլիս*: Հրոտից ամսանունը տոմարագիտական գրականության մեջ սովորաբար կապվում է հրի, կրակի հետ (*Աղայան, 68*): Ավելի ստույգ բացատրություն է տալիս Վանականի



«Տարեմուտը»։ «Յրոտիցն ըստ դրութեն է. զի հուր է ոտիցն (որպես յուլիս), որ այրէ ի ներքուստ ի վեր ջերմութի արեգականն» (*ՆԲՂԼ, 143*)։ Այսինքն Յրոտիցը հուլիսի ջերմակլիմայական դրութեան բարկ արևի հետ կապված ամիս է, որը մարմնավորող աստվածությունը պատկերացվել է հրե ուղբերով։ Նա քայլել է գետնի վրայով և այրել բուսականությունը։ Իրականում էլ հուլիս ամսին խոտածակույթը սկսում է դեղնել, չորանալ և խանձվել։ Կարծես, իրոք, դրան հրեղեն ուղբեր են դիպել։ Այս ամսին Միերի դռան դիցացանկուն համընկնում է Արդի-Մարգաց-հունիսին հաջորդող Աիա աստվածուհին, որի անունը պետք է որ ընթերցված լինի՝ Այա, ինչպես, որ առաջարկել է Գր. Ղափանցյանը (*Ղափանցյան, 48*)։ Այան շումերաքթական Ութու (Շամաշ)-Արևի կինն էր, որին աղբյուրներում մշտապես ուղեկցում է «Այա»՝ հարս մակդիրը (*MHM, II, 552*)։ Ըստ երևույթին, հայտնի է եղել նաև Վանի թագավորությունում։ Յայոց մեջ Յրոտիցն Այա դիցուհու նման արևային մի էություն է ընկալվել և տեղ է գտել Վանա ժայռի օրացույցում։

**ՆԱՎԱՍԱՐԴ-ՍԱՐԴ-օգոստոս**։ Օգոստոս ամսին բաժին ընկնող հայոց անշարժ տոմարի Նավասարդ ամսանունը, ըստ հայտնի ստուգաբանության, կազմված է իրանական *nava*-նոր և *sard*-տարի բաղադրիչներից (*ՀԱԲ, III, 435-436*)։ Միերի դռան դիցացանկուն նշված է աստվածուհիների շարքում, իրանականից անկախ ձևով, «սարդի» բաղադրիչով, որն անմիջապես հաջորդում է Այա-հուլիսին։ Ազաթանգեղոսը Նավասարդին հիշել է «ի ժամանակի դիցն ամանորաբեր...» ձևով (*Ազաթանգեղոս, 836*)։

Հնում ժամանակը սերտորեն կապված է եղել լուսնին, որի փոփոխություններով են չափել ամիսն՝ իր շաբաթներով և օրերով (*ՀԱԲ, I, 157-158*)։ «Ամանոր»-ի «նոր» արմատը, բացի իր ուղղակի իմաստից, զրաբարում հասկացվել է նաև լուսնի՝ նորալուսնի նշանակությամբ (*ՆԲՂԼ, II, 441-442*)։ Ամանոր՝ նշանակել է լուսնային տարի կամ Տարելուսին, որով օրացուցային հաշվարկներ են կատարվել, ըստ երևույթին՝ լուսնաարեգակնային տոմարի համապատասխան։

Կարծիքներ կան, որ «սարդ»՝ տարի հասկացությունը հնում կապված է եղել նաև թելարտադրությամբ հայտնի սարդ միջատի հետ (*Բրուտյան, 228*)։ Իսկ «կյանքի թել» հասկացությունն անմիջականորեն ժամանակի հետ է առնչվում։

**ՅՈՒՌԻ-ՍԻՆՈՒՒՄՐԴԻ-սեպտեմբեր**։ Յուրի ամսին Կենդանաշրջանում համընկնում է Կշեռք աստեղտունը։ Այստեղ է գտնվում աշնանային օրահավասարի կետը՝ սեպտեմբերի 23-ը։ Համաստեղությունը պատկերացրել են կշեռքի երկու հավասար մծարների նման կարծես, դրանք համապատասխանում են ցերեկվա և գիշերվա հավասար տևողություններին։ Յայոց աղթարական նշանների շարքում Յուրին համապատասխանում է Կշեռքի նկարը՝ աստվածուհու տեսքով, որի զգեստի վրա աստղեր են պատկերված։ Աջ և ձախ կողմերում կշեռքի մծարներն են, որոնց մեջ լուսնի երկու հավասար մանրիկ կա։ Նրան համապատասխանող ամսանուն-դիցանունը Վանա ժայռի վրա ընթերցվում է Ծինուխարդի ձևով, բայց հավանական է ընթերցման լինի Սինուխարդի՝ Միջագետքում մեծ համբավ ունեցած Սին լուսնի աստծո անունից։ Ինչ վերաբերում է «արդ(ի)» արմատին, ապա խիստ տարածված է հայերենում և ունի «ձև, կարգավորություն», ինչպես նաև «սարք» նշանակությունները (*ՀԱԲ, I, 306*)։ «Երջիմիս բովանդակությունը տեսնում ենք նաև կշեռքի մեջ, որը ոչ միայն սարք է, այլև արդարության խորհրդանիշ։ Իսկ «արդարություն»-ի արմատը դարձյալ «արդ»-ն է։

**ՍԱՀՄԻ-ԻՃՍԱՐԻ-հոկտեմբեր**։ Վանականի «Տարեմուտում» գրված է «Սահմի, զի գնայ հարաւային և գայ հիւսիսային (հողմ) և դարձեալ իմաստունք արք սահմանեն զտունս իւրեանց առ ի գալ ծմեղայնոյն» (*ՆԲՂԼ, II, 688*)։ Ուստի, Սահմի-հոկտեմբեր ամիսը հին տոմարագետները կապել են Յուսիսային քանու մուտքի հետ և նրան բաժին հանել երկնային համապատասխան աստեղտունը, իբրև ծմեղվա մախազալստյան նշանակ։ Իրականում էլ հոկտեմբերը նշանակորվում է հյուսիսային սառը քամիների ուժգնացմամբ։

Սահմիի աստեղտունը, ըստ հայոց անշարժ տոմարի, Կարիճն է, որին միջնադարյան աղթարական նշանների շարքում համապատասխանում է ծալապատիկ նստած աստվածության պատկերը։ Նա իր երկու ձեռքում երկու կարիճ է բռնել։

Միերի դռան դիցացանկուն Յուրի-Սինուխարդիին անմիջապես հաջորդում է Սահմիին համապատասխանող Իպխարի աստվածը։ Այսպես է նրա անունն ընթերցվում ներկայումս, սակայն Գր. Ղափանցյանը տեսակետ է առաջ քաշել, որ դիցանունը գրելիս, փոքրգրողը շփոթել է «իշ» և «իպ» սեպախմբերը՝ դրանց նման լինելու պատճառով։ Ուստի, հավանական է, որ անունն իրականում հնչած լինի Իշխարի ձևով, որն Իշխարա աստվածուհին է (*Ղափանցյան,*



49). հայտնի է եղել նաև էշխարա, Ուժխարա անուններով՝ շումերական, ուգարիթյան, խուրիական և էլամական աղբյուրներից: Նրա խորհրդանիշը կարիճն է և Կարիճ համաստեղությունը (*MHM*, 595-596):

Վանականի հիշատակած հյուսիսային քամին առասպելաբանորեն համադրելի է օձի կերպարին, ինչպես, որ հունական դիցաբանության մեջ էր հյուսիսային քամուն մարմնավորում Բորեաս օձակերպ աստվածը (*Грејвс, 15, 16*): Հավանական է, որ հին հայոց տոմարագետները («իմաստուն արք») հյուսիսային քամիով սահմանել են Կարիճ աստեղտունը՝ օձի կամ վիշապի բնույթով: Այդպես է կատարվել, թերևս, այն պատճառով, որ Կարիճի ամենամոտ հարևանը երկնքի Հյուսիսային կիսագնդում Օձ աստեղտունն է, իսկ ավելի հյուսիսում՝ Վիշապը: Երրորդ օձի կամ վիշապի անվանակոչությունը աստղային երկնքի այս հատվածում շփոթության տեղիք կտար:

«Սասնա ծռեր» էպոսում կա Չարբախա Քամի, Չարբահար Քամի կամ ավելի հաճախ ճարպախար Քամի կոչված մի դև, որը Բաթմանա Բուղա անվանվող մեկ այլ դևի հետ Մարութա վանքի պահպանն է (*ՄԾ, 257-258, 333*): Երկուսով էլ ոչ այն է չար, ոչ այն է բարի էություններ են: Կապվում են սահմանի հետ: Մտրա Մելիքի հրամանով պետք է սպանեն Դավթին, բայց երբ հասնում են Բաթմանա կամրջին, որը մի տեսակ սահման է Մտրա և Սասնա աշխարհների միջև, անցնում են վերջինիս կողմը: Էպոսում «գողորմիների» շարքում հիշվում են նաև ճարպախար Քամին և Բաթմանա Բուղան (*ՄԾ, 251*):

«ճարպ» բառն, ըստ Հր. Աճառյանի, հայ մատենագրության մեջ, բացի իր ուղղակի իմաստից, գործածական է եղել նաև «գեր», «պարարտ» նշանակությամբ (*ՀԱԲ, II, 192*): Իսկ «խար»-ն արարատյան բարբառում որդ է նշանակում: Վաղարշապատում գրառված մի հեքիաթում խարն ամեն անգամ ուտում է այգու վարդը (*ԳԺԳ, 507*): Հայ հին մատենագրությունից պահպանվել է նաև «խարամանի» բառը, որ «չար օձ» է նշանակում (*ՆԲԴԼ, I, 930*): ճարպախար Քամու բնույթը հասկանալու համար հարկ է, թերևս, նրա անունը բացատրել «պարարտ, գեր օձ» իմաստով: Նրանից էլ, ըստ երևույթին, ծագել է Երևանի Չարբախ շրջանի աղավաղված անունը: Չարբախում է գտնվում Թեյշեբախի ամրոցը, որտեղից մինչև Էջմիածին ընկած դաշտը բիսյանական սեպագրերում հիշատակվում է իբրև «Կուռալիմի հովիտ» (*Արտյոնյան, 352*): Կուռա կամ Կուռառ աստ-

վածությունը Ս.Գ. Հմայակյանի կարծիքով, համադրելի է իրանական Աժի Դահակա վիշապին (*Հմայակյան, 51, 53-54*):

Բիսյանական Իշխարի աստվածուհու անունը, որն, ըստ հերթականության, համապատասխանում է Կարիճ համաստեղությանը, հավանական է ընթերցել որպես «իժ» և «խար» բաղադրիչներից բաղկացած մի կազմություն, որը խորհրդանշել է Կարիճ համաստեղությունը և օձաբնույթ հյուսիսային քամիների մուտքը մեր լեռնաշխարհ: Իժխարին ամսանուն-դիցանուն է, իսկ Կուռառն, թերևս, նրա համաստեղություն-աստվածությունը:

### Գրականություն

1. *Արեղյան Ս.*, Երկեր, հտ. Է, Եր., 1975:
2. *Ագաթանգեղայ* պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1914:
3. *Աղոնց Ն.*, Հին հայոց աշխարհայացքը («Հայրենիք» ամսագիր, դեկտեմբեր), Բոստոն, 1926:
4. *Ալիշան Ղ.*, Յուշիկք հայրենեաց Հայոց, հտ. I, Վենետիկ, 1869:
5. *Աղայան Է.Բ.*, Ակնարկներ հայոց տոմարների պատմության, Եր., 1986:
6. *Բաղայան Հ. Ս.*, Հայոց տոմարի պատմություն, Եր., 1976:
7. *Բրուտյան Գր.*, Օրացույց հայոց, Մայր աթոռ Ս. Էջմիածին, 1997:
8. *Դավթյան Ա.*, Աստղային առասպելների համակարգեր Գիլգամեշ էպոսում («Նորք» ամսագիր, N 2), Եր., 2002:
9. *Կարազյոզյան Հ.Հ.*, Ուրարտական աղբյուրները Հայկական լեռնաշխարհի և հարևան պետությունների մասին («Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա», հտ. I, Եր., 1981:
10. *ՀԱԲ = Աճառյան Հր. Հ.*, Հայերեն արմատական բառարան, հտ. I, III, Եր., 1971, 1977:
11. *Հմայակյան Ս.Գ.* Վանի թագավորության պետական կրոնը, Եր., 1990:
12. *ՀԺԳ = Հայ ժողովրդական հեքիաթներ*, հտ. II, Եր., 1959:
13. *Դավանցյան Գր. Ա.*, Ուրարտուի պատմություն, Եր., 1940:
14. *ՆԲԴԼ = Նոր բառգիրք հայկազեան լեզուի*, հտ. I, II, Եր., 1979, 1981:
15. *ՄԾ = Սասնա Ծռեր*, հտ. Ա, Եր., 1936:
16. *Խորենացի = Սրբոյ հօրն մերոյ Սովսեսի Խորենացոյ պատմութիւն Հայոց*, Թիֆլիս, 1913:
17. *Սրվանձտյանց Գ.*, Երկեր, հտ I, Եր., 1978:
18. *Арутюнян Н. В.*, Б, айн, л, (Урарту), Ер. 1970.
19. *Грејвс P.*, М, фы Древней Грец, , , М., 1992.
20. *MHM = М, фы н Ꞇоdов м, р Ꞇ 2. I, II, М. 1991, 1992.*



*Խաչատրյան ժ., Կանեցյան Ա.,  
Կարապետյան Ի. (ՀԱԻ)  
Թրախնա Ջ. (Լեչչո, Իտալիա)*

### ԱՐՏԱՇԱՏԻ 2003-2004թթ. ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ\*

80-ական թվականների սկզբին Արտաշատի հարավ արևմտյան հարթավայրային հատվածում հարթեցումներ կատարելիս, ավերվել էր անտիկ բաղնիքի երկրորդ հատակը և քանդվել հիպոկաուստի սյուները: Այդ մասին մեզ տեղեկացրել է գյուղի հովիվը և բերել սկավառակաձև աղյուսները: Նույն ժամանակ, շինարարության համար այդ տարածքից բերված քարերի մեջ գտնվեց բնական չափերի մարդու մարմարե արձանի ազդրի մաս (բարձր. 32սմ), որը պատկանում է մ.թ.ա. 1դ. և, հավանաբար, բերված է Փոքր Ասիայից, կրաքարե մի քանի տորածև խարիսխ և պատի շարի առանձին քարեր:

2003թ. բաղնիքի գտնվելու վայրը որոշելու նպատակով մանրագին հետախուզվեց տեղանքը, սակայն բաղնիքի շինության հետքերի բացակայության պատճառով աշխատանքները տեղափոխվեցին հարթավայրի հարավ-արևմտյան հատված, ուր Արաքսից մոտ 100-150մ հեռավորության վրա, թափված քարերի տակ նկատվում էին մեկ ուղղության վրա կրաքարե շարվածքի հետքեր:

Ստուգումները գերազանցեցին մեր սպասելիքները: Թափված տձև քարերը հեռացնելուց հետո, 70սմ խորության վրա բացվեց կրաքարերի երկրորդ շարքը (երկ. 5մ): Շարվածքի ուղղությունը արևելք արևմուտք է:

\* Աշխատանքները կատարվում են Իտալիայի Լեչչեի համալսարանի և ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի միջև կնքված համագործակցության պայմանագրի շրջանակներում

Կառույցի հյուսիսային դրսի երեսը բացելու և դրա ինչ լինելը պարզելու նպատակով շարվածքի առջև դրվեց 4մ լայնությամբ խրամատ, որի խորացման և դեպի արևելք և արևմուտք ընդարձակման միջոցով հաջորդաբար բացվեցին մյուս շարքերը: Պատի լայնությունը բացելու նպատակով աշխատանքներ կատարվեցին կառույցի ներսի մասում բարձրացող քարե լիցքի ուղղությամբ: 1,5մ խորանալով պարզեցինք, որ պատը միաշար հենապատ է, իսկ լիցքը արված է դրա կառուցման միջոցին: Պատի քարերի ճակատները մշակված են եզրերը նեղ ժապավեններով հարթեցման, իսկ կենտրոնը ուռուցիկ թողնելու տեխնիկական հնարով, որը ճարտարապետական գրականության մեջ հայտնի է «ռուստիկ» տերմինով: Այս տեխնիկայով մշակված քարերը պատին տալիս են հոծության զգացողություն, իսկ լույսի և ստվերի խաղը գեղատեսիլ տպավորություն: Քարերն իրար հետ ամրացրել են «ծիծեռնակի պոչ» հիշեցնող («ծիծեռնակապոչ») փորված բների մեջ նույն ձևի փայտեր ագուցելու միջոցով: Նման կապերի կիրառությունը Հայաստանում հայտնի է հելենիստական շրջանից:

2004թ. ստորին երեք շարքերի մակարդակին 3,5մ խորության վրա բացվեցին հենապատին կից տարբեր չափերի բազալտ քարերով և կավե շաղախով կառուցված զուգահեռ և ուղղահայաց պատեր: Շարունակվեց նաև դեպի արևմուտք և արևելք հենապատի մաքրման աշխատանքները: Արևմտյան հատվածում բացվեց պատի վերին իններորդ շարքը: Պատի բարձրությունն այդ հատվածում 4,2մ է: 10մ առաջնալուց հետո հենապատն ընդհատվեց անհավասար շարվածքով: Այսինքն, այն ավերվել է և հետագայում ամրացնելու համար արանքները լրացվել են բազալտե քարերով: Հենապատի պահպանված մասի երկարությունը արևելյան անկյունից կազմեց 28,3մ:

Քանդված հատվածի ստորին երեք շարքերի մակարդակին, հյուսիս-արևելք քիչ թեթևությամբ կցվել է բազալտե խոշոր խորանարդաձև որմնաքարերով և սալերով կառուցված մի պատ: Վերջինիս վրայից հայտնաբերվեց պղնձե փոքրիկ մի դրամ, որը խիստ քայքայված վիճակում է:

Հյուսիսային պատի արևելյան կողմում մաքրվեց անկյունը և արևելյան պատը: Վերջինս բաղկացած է չորս շարքից (լայն. 2,5մ),



որից արտաքին երեքը հյուսիսային պատից 2,3մ առաջանալուց հետո ընդհատվում են, չեն պահպանվել: Դեպի հարավ չորս շարքը անկյունից 8մ վրա, նոր հարթակի հյուսիսային հենապատը կառուցելիս քանդվել է: Նոր հենապատի ցուլը կառուցված է նույն եղանակով, ինչ որ հյուսիս-արևմտյան անկյունի վերոհիշյալ թեք պատը, այսինքն բազալտե խոշոր գանգվածներով ու սալերով, որի վրա բարձրացվել է հին հենապատերից վերցված, մի շարքից բաղկացած կրաքարերով: Արևելք արևմուտք ձգվող նոր հենապատի արտաքին երեսը (ռուստիկում մշակումով) կրկին հյուսիսային կողմում է, բացված երկարությունը հավասար է 10,6մ:

Ստորին շերտերից դուրս է գալիս անտիկ դարաշրջանին վերաբերող նյութեր, որոնք ցայտուն աղերսներ ունեն Արտաշատի վերին քաղաքի պեղումներով ձեռք բերված նյութերի մեջ: Դրանք են քիվի եռանկյունաձև բավական մեծ բեկորը հարդարված ատամնավոր, ձվաձև և դրանց վերևով ձգվող բայց վնասված բարձրաքանդակ գարդերով, Գառնիի տաճարի ռելիեֆների մանրությամբ մշակված կրաքարերը, աղեղնավոր գոտիներով իրար միացած քառաթև վարդակներ կրող և այլ գարդերով հարդարված, կրաշաղախից պատրաստված շատ բեկորներ: Հատկապես նշանակալից են արևելյան հենապատից 3,98մ հեռավորության վրա բացված միջնադարյան պատի շարվածքում գտնված, կրաքարե տորածն ամբողջական (չափերը 56x56սմ, պլինտի բարձր. 27սմ, գլանի տր. 43սմ, ընդ. բարձ. 48սմ) և բեկորային խարիսխները, ատտիկյան խարիսխը (բարձր. 43սմ, ստորին մասի տր. 51սմ, վերին մասի տր. 48սմ), քանդակազարդ սալը, հարթ և մատնեքավոր իրանով սյուների գլանների բեկորները: Պեղումների միջոցին գտնվել են պատերի ծեփի բազմագույն բեկորներ, որմնանկարների հետքերով, խճանկարի հատակի սվաղի բեկոր, կնքադրոշմների մախապատրաստուկ գնդիկներ, շինարարական և կենցաղային խեցեղեն:

Այսպիսով ձեռք բերված այս ողջ տվյալների նախնական քննարկումը, թույլ է տալիս ասելու, որ բացվում է մի ընդարձակ հարթակ (21,8x10,7մ), որը կառուցված է Արտաշատ մայրաքաղաքի հարավ-արևմտյան ծայրամասում, Արաքս գետի աջ ափին բարձրացող, ժայռոտ բլրակին կից: Հարթակի պահպանված բարձրությունը կուտակված լիցքի հետ մեկտեղ, 6,5-7մ է, սակայն այն պետք է, որ ավելի

բարձր եղած լիներ բլրակի մակարդակին հավասարվելու համար: Թե դիրքի ընտրությունը, թե չափերը, թե կառուցողական առանձնահատկությունները հուշում են, որ հարթակը բարձրացվել է խիստ նպատակային, վրան ինչ-որ համալիր կառուցելու համար: Այն պիտի, որ մոնումենտալ, հասարակական կարևոր համալիր լիներ, որը երևում է հարթակի պեղումների միջոցով հայտնաբերված, վերը ներկայացրած ճարտարապետական և հնագիտական տվյալներից:

Ըստ որում, այս նյութերի մեջ առանձնանում են ավելի վաղ մ.թ.ա. II-III դդ. նյութեր՝ տորածն խարիսխներ, հարթ մակերեսով սյան գլանի բեկորը, «ծիծեռնակապոչ» բներով կապերի կիրառումը, քարերի արտաքին երեսների «ռուստիկ» մշակումը, հելենիստական գունազարդ խեցեղենը և այլն: Այսինքն հարթակն իր համալիրով կառուցվել է Արտաշես I-ի կողմից: Եվ քանի որ սկզբնական շրջանում քաղաքը զբաղեցրել է միայն բլուրների տարածքը, իսկ այս հարթակը իր համալիրով քաղաքի պարիսպներից դուրս է եղել, հարց է առաջանում արդյո՞ք այն Մովսես Խորենացու հիշատակած, քաղաքից դուրս, ճանապարհին կառուցած Ապոլոն-Արեգ-Միհրի տաճարը չէ՞:

Մ.թ.ա. I – մ.թ. II դ. քաղաքը ընդարձակվելու և հարթավայրային մասը յուրացնելու ժամանակ<sup>2</sup> վերակառուցումներ և լրացումներ են արվել և համալիրի տարածքում: Ամրացվել է հարթակի արևելյան հենապատը, կառուցվել են տարբեր նշանակության շինություններ, որոնց տանիքները ծածկված են եղել պեղումներով ձեռք բերված բազմատեսակ կղմիդրներով (39,5-46x61 և 39-45x60սմ) կալիպտերներով, որոնց ինտերյերները ծեփված են եղել բազմագույն սվաղով և որմնանկարներով, իսկ հատակները՝ ծածկված են եղել կաթնագույն կրաշաղախի հիմքի վրա շարված եռագույն (սև, կարմիր, մարմնագույն) խճանկարով: Կենցաղ են մտել բաղնիքներ, որոնց հիպոկաուստի սկավառակաձև և ուղղանկյուն աղյուսների, գլանաձև և ուղղանկյուն հենակների, ջրամատակարարման և հեռացման

<sup>1</sup> Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, քնն. բնագ. և ներածութիւն Մ. Արեղեանի և Ս. Հարութիւնեանի, Եր., 1991, II, 49:  
<sup>2</sup> Zores D. Khachatrian, Artaxata, Capitale dell'Armenia antica (II sec. A.C. - IV sec. D.C.) Ai piedi dell'Ararat, Artaxata e l'Armenia ellenistico-romana, a cura di Antonio Invernizzi, Torino, 1998, p. 99-100.



խողովակների, պատերը և հատակը ծածկող աղյուսների գյուտերը խիստ առատ են:

Հայտնաբերված խեցեղենի ընտրանին իր տեղական և ներմուծված տեսականիով ևա շատ խոսում է: Տեղական խեցեղենը ութի դուրգի վրա գեղեցիկ ձևավորած, գունազարդ երեքնուկաձև շուրթով սավորներ, կարասներ են: Ներմուծված ամֆորիսկների, գավաթների, ունկվենտարիաների, ապակե սրվակների գյուտերը, որպես օձանելիքների և անուշահոտ յուղերի տարաներ, խոսում են ոչ միայն արտաքին աշխարհի հետ ունեցած առևտրական կապերի, այլև դրանց տաճարային ծառայությունների հետ ունեցած կապի մասին: Այս տեսանկյունից հատուկ նշելու է տեղական արտադրության միջին չափերի, լայնաբերան անոթի բեկորը: Այն հարդարված է ուղիղ շուրթից ներձկունով իջնող ուսին դրված ուղիղ և պարանահյուս գոտիներով և առյուծագլուխ ծորակով: Առյուծի գլխիկը պատկերված է բաց երախով-հեղման անցքով, աչքի խոռոչները, քթանցքներն ու ականջները իրականացրած են ակոսներով, իսկ բաշը՝ փորագրմամբ: Այս անոթը, ճառագայթազարդ մեծ սկուտեղը և ճարտարապետական շատ տարրեր կապելով արևի, աստվածային հերոսի և քազավորի պաշտամունքի հետ, որը շատ բնորոշ էր Առաջավոր Ասիայի<sup>3</sup>, ինչպես և Հայաստանի համար, կարելի է հիմնավորել հարթակի վրա տաճարի գոյության հնարավորությունը:

Հարցադրումները, գիտական ենթադրությունները շատ են և դրանց ճշգրտումը հնարավոր է հետագա պեղումների ընթացքում:



Բացված հարթակների հենապատերի ընդհանուր տեսարան

<sup>3</sup> Мифы народов мира, Энциклопедия. т. 2, М., 1988, с. 41-42





Հարթակի հյուսիսային հենապատը, կից պատերով



Արևելյան հենապատի շարվածքի մի հատված




Հարթակի արևելյան և հետագայում կառուցված հյուսիսային հենապատը





Կավե կաթսայի վերին մասը առյուծազուլուխ ծորակով



Անտիկ շրջանի կղմինդր

Խաչատրյան ժ. (ՀԱԻ)

## ԱՐՏԱՇԱՏՈՒՄ ԲԱՑՎԱԾ ՀԱՏՈՒԿ ԾԵՍՈՎ ԹԱՂՈՒՄ

2003թ. Լուսառատ գյուղի հյուսիսային ծայրամասում, 1979թ. բացված ուրարտական առանձնատնից 20մ հարավ, ջրագիծ անցկացնելու ժամանակ, ավերվել էր կավե սարկոֆագի մեջ կատարված մի թաղում: Մեզ են հանձնվել կոտրված սարկոֆագի բեկորները, ոսկյա, շատ բարակ շեղանկյունաձև երեք թիթեղ, կարոսի եռատամ ոսկյա երկու տերև, կավե մեկ կանթանի խոհանոցային գավաթ, արծաթե հայելու և ապակյա երկու սրվակների բեկորներ: Մեզ հաջողվեց պարզել սարկոֆագի դիրքը՝ հյուսիս-հարավ: Այն դեպի ոտքերն աստիճանաբար նեղանում է, ունի ուղղահայաց պատեր (բարձր. 35սմ), հարթ հատակ (երկ. 180սմ, զլխի մասում՝ լայն. 45սմ, ոտքերի մասում՝ 25սմ): Պսակը դրսից եզերված է ատամնավոր զարդերով: Սարկոֆագը ծածկված է եղել թրծած հարթ աղյուսներով (հաստ. 4-5սմ): Կմախքի ոսկորները գրեթե չեն պահպանվել, բացի մի քանի ատամներից և առանձին փոքր ոսկորներից: Հաջողվեց որոշել հանգուցյալի սեռն ու տարիքը, այն եղել է 30-35 տարեկան կին<sup>1</sup>:

Սա Արտաշատից հայտնաբերված ոսկյա պսակով երկրորդ թաղումն է: Առաջինը հայտնաբերվել է Խոր Վիրապի բլուրների արևմտյան կողմում գտնվող ցածր բլրակի վրա: Դամբարանը կիսով չափ փորված էր ժայռի մեջ, ուր տեղադրված էր փայտե դագաղը<sup>2</sup> (դամբ. N84):

Կավե դագաղների մեջ թաղելու սովորությունը նորություն չէ Հայաստանում: Այն հայտնի է ուրարտական և հելենիստական շրջանում<sup>3</sup>: Սակայն դրանք իրենց ձևերով և չափերով տարբերվում են ուշ

<sup>1</sup> Որոշել է մարդաբան Ռ.Սկրտչյանը:

<sup>2</sup> Ժորես Խաչատրյան, Արտաշատ II, Անտիկ դամբարանադաշտեր, Երևան, 1981, էջ 30, 38, 43-47, տախտ. XXI-3, 6-8, նկ. 59, 9; 52, 1-7, 10:

<sup>3</sup> С. Есаян, А. Калантарян, Позднеурартское погребение Ошаканского могильника, ИФЖ, 1976, N3, с. 269-275; Արտաշատ II, էջ 33:



անտիկ շրջանի կավե սարկոֆագներից: Արտաշատի, Վաղարշապատի, Սևանի ավազանի պեղումները վկայում են, որ մ.թ. III-IV դարերում կարասային թաղումները մասամբ փոխարինվում են կավե դագաղներով: Արտաշատում այդ շրջանի կավե դագաղներով թաղումներ հայտնաբերվել են խոր Վիրապ տանող ճանապարհի ծախեզրին («B» համալիր), բլուրներից արևմուտք, ցածրադիր բարձունքի վրա<sup>1</sup> (դամբ. N70-72): Արտաշատի սարկոֆագները և դրանցում կատարված թաղումները նման են Հայաստանի մյուս վայրերից հայտնաբերվածներին: Դրանք չունեն հաստատուն կողմնորոշում: Դիակները թաղված են մեջքի վրա, թևերը կողքերից երկարած դիրքով: Այսինքն, թաղման ձևերում փոփոխություններ են տեղի ունեցել և ըստ այդմ էլ պատրաստվել են նոր տիպի դագաղներ: Հայաստանում կավե սարկոֆագները տարածում են ստանում մ.թ. III դ. կեսերից: Դրանք կարող էին պատրաստվել հատուկ վառարաններում: Կավե սարկոֆագներն արտադրել են տարբեր չափերի, տարբեր հասակների համար: Կավե սարկոֆագների արտադրության արհեստանոցներ կարող էին լինել խոշոր քաղաքներում և քաղաքատիպ ավաններում, որտեղ դրանց համար վաճառահանման շուկա կար: Այդ են վկայում Վաղարշապատի կավե դագաղների ծածկի սալերի վրայի նշանները, որոնք հավանաբար արհեստանոցի նշաններն են<sup>2</sup>:

Ոսկյա շատ բարակ թիթեղից պատրաստված շեղանկյունները ակոսով բաժանված են երկու եռանկյունների (երկ. 5,5սմ, լայն. 3,5սմ): Շեղանկյունաձև երեք շատ բարակ ոսկյա թիթեղներով հռոմեական թաղում հայտնաբերվել է Արևմտյան Հայաստանից՝ Պաղնիկ Օրենիի պեղումներից<sup>3</sup>: Շեղանկյունաձև թիթեղներով պսակներ շատ հազվադեպ են հանդիպում: Ծծծելու եղանակով արված շեղանկյուններից կազմված զարդաշղթայով է հարդարված Գեղադիրի N5 քարե սարկոֆագից հայտնաբերված արծաթյա, օղակաձև ականջօղը, փորագիր շեղանկյունի զարդեր են արված Սիսիանի իշխանական դամբարանից:

<sup>1</sup> Արտաշատ II, էջ 19:

<sup>2</sup> Ժ.Ղ. Խաչատրյան, Ռ.Ս. Թորոսյան, Նորահայտ նյութեր Վաղարշապատի հյուսիս-արևելյան դամբարանադաշտից, ԼՀԳ, 1976, N5, էջ 99 և հտ., էջ 102, ծան. 15, տախտ. III, 1; Արտաշատ II, էջ 37:

<sup>3</sup> R.P. Harper, Pağnik Oreni, Excavation, 1969, Keban Project, 1969, Activities, Ser. N4, Ankara, 1971, p. 95, pl. 65, 1.

քանի ոտքի ապարանջանների<sup>1</sup> մակերեսին:

Արտաշատի սարկոֆագից հայտնաբերված իրերից մեզ են հասել կարոսի ոսկյա երկու տերև, որոնցից մեկն ավելի լայն է (պահպ. մասի երկ. 2,7սմ է, լայն. 2,5սմ), քան մյուսը (երկ. 3,3սմ, լայն. 2,3սմ): Դրանց վրա նկատելի են բարակ ակոսներով նրբորեն արված երակները: Թաղման ժամանակ պսակ կապելու, ակնակալներ և շրթնակալներ դնելու այս սովորությունը արևելամիջերկրածովյան և առաջավորասիական ծագում ունի, որովհետև ամենահին գյուտերը, որոնք վերաբերում են մ.թ.ա. III-II հազարամյակներին, կատարվել են այդ շրջաններում<sup>2</sup>: Ենթադրվում է, որ այն առաջացել է հանգուցյալի դեմքը դիմակով ծածկելու ծիսական սովորությունից<sup>3</sup>:

Թաղման պսակով, ակնակալներով ու շրթնակալներով թաղումներ Հայաստանի հանրապետության տարածքում հելենիստական և ուշ անտիկ շրջանի հուշարձաններում, բացի Արտաշատից, Պաղնիկ Օրենիից, այլ հնավայրերի դամբարաններում չեն հանդիպում: Ուստի մենք ենթադրել էինք, որ այս սովորությունը Հայաստան է թափանցել Սիրիայից և Փոքր Ասիայից, մ.թ.ա. I դարում, Տիգրան II-ի կողմից այստեղ գաղթեցված բնակչության միջոցով: Այլ պատկեր է նկատվում Հայաստանի հարավ-արևմտյան շրջանի անտիկ դամբարաններում, որտեղ դրանք ավելի հաճախ են երևան գալիս: Դա սիրիական և փոքրասիական շրջաններին ավելի մոտ գտնվելու արդյունք է:

Խերսոնեսում այդ ծեսով թաղումների թիվը 70-ից ավելի է: Դրանք հանդիպում են մեծ մասամբ ընտանեկան թաղումներում և ունևոր քաղաքացիների դամբարաններում: Այսինքն տվյալ ծեսը բնորոշ է եղել վերնախավին: Գիտնականները համակարծիք են այն հարցում, որ ակնակալները, շրթնակալները փոխարինում են ավելի վաղ շրջանի դիմակներին, որովհետև ավելի մատչելի<sup>4</sup> են: Սակայն,

<sup>1</sup> Жорес Хачатрян, Художественные изделия из серебра эллинистического времени, Второго Международного симпозиума по армянскому искусству, Сб. докл., том I, Ереван, 1978, с. 241, рис. 57, 1.

<sup>2</sup> Արտաշատ II, էջ 43:

<sup>3</sup> Արտաշատ II, էջ 43:

<sup>4</sup> A.B. Орешников, Несколько замечаний о древностях, найденных в с. Парутино в 1891г., "Древности", Труды Московского археологического общества, 1894, с. 8; П.Н. Шульц, Мавзолей Неаполя Скифского, Москва, 1953, с. 63.



տարակարծիք են այդ ծեսի նշանակության հարցում: Ենթադրվում է ծածկելով դեմքը, 1) աշխատում էին փրկել այն քայքայումից, 2) հանգուցյալի նկատմամբ ունեցած վախից 3) դրանք կոչված էին հանգուցյալին մեկուսացնել մարդկանցից, որպեսզի վերջիններս չվախենան, այնուհետև, 4) ծառայել են որպես չար ուժերից ու ոգիներից պաշտպանող թախսմաններ:

Այսպիսով ուղեկցող նյութերից և թաղման ծեսից դատելով, կարելի է ենթադրել, որ կավե սարկոֆագում թաղված կինը, առանձնատան տիրոջ կինն է, որը կամ եղել է օտարերկրացի, որին թաղել են իրենց ազգային ծեսերին համապատասխան, կամ ազդեցության արդյունք է: Հնարավոր է Հայաստանի վերնախավի որոշակի մասը նդուներ է թաղման այդ ծեսը:

Ուշագրավ են ապակե սրվակները: Գնդաձև, Արտաշատի վերոհիշյալ սրվակի պսակի ձևը բնորոշ է փոքրասիական համաժամանակյա խեցեղենին, որը խոսում է դրա փոքրասիական ծագման մասին: Ինչ վերաբերում է կավե մի կանթանի խոհանոցային զավաթին, ապա այն իր ձևով և մշակումով բնորոշ է I-II դդ. խեցեղենին և հաճախ է հանդիպում Հայաստանի անտիկ դարաշրջանի հուշարձաններում:

Արծաթե հայելիից մեզ է հասել մի բեկոր, կամաչ ժամգով: Հայելիները առնչվում են արդուզարդի հետ, պաշտամունքային նշանակություն են ունեցել և կապված են եղել անդրշիրիմյան աշխարհի հետ և հաճախ են հանդիպում անտիկ դամբարաններում: Արտաշատի դամբարանի հայելին, հավանաբար, եղել է օվալաձև և ունեցել է պոչ: Այդ ձևը լայն տարածում է ստացել մ.թ. առաջին դարերում<sup>1</sup>:

Այսպիսով, Արտաշատի նորահայտ կավե սարկոֆագը հարստացնում է մեր գիտելիքները Հայաստանի թաղման ձևերի ու ծեսերի վերաբերյալ:

<sup>1</sup> Гарни V, с. 101.



Կավե սարկոֆագի մնացորդներ





Ոսկյա ճակատակալի շեղանկյունաձև քիթեղներ  
և կարոսի եռատամ տերևներ



Կավե գավաթ

Քոչարյան Գ. (ՀԱԻ)

ՏԻՐԻ ՊԱՇՏԱՍՈՒՆՔԻ ՎԱՂԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ

Հայ իրականության մեջ (գրավոր աղբյուրներում, ազգագրական նյութերում, տեղանուններում) պահպանված տվյալների համեմատական վերլուծությունը՝ հնդեվրոպական մշակույթի համատեքստում, բավարար հիմք է տալիս համալրել և ամբողջացնել Ազաթանգեղոսի հիշատակած Տիր/Տիր աստվածության դիցաբանական կերպարը<sup>1</sup>: Եզրահանգումը մեկն է-վերականգնված կերպարի ա-կունքները վաղնջական են, բխում են հնդեվրոպական նախա-մշակույթից:

Այժմ ներկայացնենք Տիրի պաշտամունքի վաղեմությունը հավաստող երկու գրավոր վկայություն. ա) կուտիական ցեղերի՝ Ք.ա. III հազարամյակով թվագրվող արքայացանկի վերջին արքայի *Տիրի-կան* (Ք.ա. 2109 - ?) անձնանունը<sup>2</sup>, բ) խուռական Առապիսա պետության<sup>3</sup> դիվանի՝ Ք.ա. XVդ. թվագրվող Նուզիի աքքադական սեպագիր սալիկների վրա արձանագրված <sup>d</sup> *Tir-an-na* աստվածացված ծիածանը<sup>4</sup>:

Ըստ ուսումնասիրողների՝ կուտիները հնդեվրոպական ցեղեր են և նրանց արքաների որոշ անձնանուններ բխում են դիցանունե-

<sup>1</sup> Տե՛ս Գ. Քոչարյան, Դվին ամրոց-սրբավայրը Հայոց դարձի նախօրեին, Հայոց սրբերը և սրբավայրերը, Ե., 2001, էջ 289 - 296, *նույնի*, Տիր/Տիր աստվածությունը «Հայոց մեծաց» սերնդաշարքում, ԼՅԳ, 2004, N2, հրատարակման ընթացքում է:

<sup>2</sup> *Э. Бикерман, Хронология древнего мира (Ближний Восток и антач-ность)*, М., 1975, с. 181.

<sup>3</sup> Առապիսա պետությունը գտնվում էր Միջագետքից հյուսիս-արևելք, Ջագրոսի նախալեռների սահմանի վրա:

<sup>4</sup> Տե՛ս *I.J Gelb., P. M Purves. and A.A Macrae., Nuzi personal names, vol. LVII, Chicago, 1943, p. 267:*



րից<sup>1</sup>: Ակնհայտորեն դիցանունից է բխում նաև *Տիրիկան* անձնանունը: Աստծո սրբազան հանգրվան-կացարան է *Տիրիկան* լեռնագագաթը՝ Կոտուր-Չագրոշյան լեռնաշղթայում<sup>2</sup> (հմմտ. Տիրի կատար < Տիրինկատար լեռնագագաթը Տիր աստծո մեհյանով՝ Հայկական Տավրոս լեռնաշղթայում)<sup>3</sup>: Նույն տարածաշրջանում *Տիրիկան* էր կոչվում Տիր-Տիշտրային ձոնված տարեմուտի «Տօն ջրոցը»<sup>4</sup>: Իսկ հայոց մեջ *Տիրկան* էր կոչվում «Տիր դից ընծայուած» Տիրական գոտին՝ ծիածանը<sup>5</sup>, որի հետ նույնանուն է Նուզիի սալիկների աստվածացված ծիածան՝ *Tir-an-na* –ն: Սրանց բոլորի համար ընդհանրական «լեռ – ջուր – ծիածան» սրբագործված շարքը աստվածային բանաձև է և բավարար հիմք՝ *Տիրիկան* անձնանունը դիցանունից, իսկ վերջինս էլ՝ *Տիր/Տիրից*<sup>6</sup> բխեցնելու համար:

<sup>1</sup> Կուտիները դեռևս Ք.ա. XXIV դարից հիշատակված են Չագրոսի հյուսիսարևմտւթում, աշխարհագրական մի տարածքում, որն ուսումնասիրողների կողմից ընդգրկվում է հնդեվրոպական նախալեզվի-նախամշակույթի տիրույթի շրջանակում. *Т. В. Гамкрелидзе, Вяч. Вс Иванов.* Первые индоевропейцы в истории: предку тохар в древней Передней Азии (Вестник древней истории, 1989, N 1, с. 14-34, 37-38, տե՛ս նաև *Ռ. Փալանջյան*, Չագրոսի նախալեռների հնագույն ժողովուրդների մասին: Չեռագիր, որից օգտվելու համար մեր երախտագիտությունն ենք հայտնում հեղինակին:

<sup>2</sup> Տե՛ս *Թ. Խ. Հակոբյան, Ստ. Տ Մելիք-Քախչյան.*, *Հ. Խ Բարսեղյան.*, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 5, Ե., 2001, էջ 104:

<sup>3</sup> *Ա. Ղանայանյան*, Ավանդապատում, Ե., 1969, էջ 74, N 195:

<sup>4</sup> *М. Бойс,* Зороастризм. Верования и обычаи, М., 1987, с. 77, 90, *Ջ. Ր. Րussell,* Zoroastrianism in Armenia, Cambridge, 1987, p. 292.

<sup>5</sup> *Ղևոնդ Ալիշան*, Հին հավատք կամ հեթանոսական կրոնք հայոց, Վենետիկ, 1895, էջ 119: Տիր-ծիածան իմաստաբանական կապի մասին մանրամասն տե՛ս *Գ. Քոչարյան*, Տիր/Տիր աստվածությունը «Հայոց մեծաց» սերնդաշարքում:

<sup>6</sup> Տիր/Տիր դիցանունը ստուգաբանելիս՝ էդ. Աղայանը այն համարում է բնիկ հայ. բառ, բխեցնելով Հևս \*dei- «փայլել, շողալ, լուսավորել, երևալ» արմատի \*diur-, \*dir- ձևերից, և եզրակացնում, որ այն «նախապես նշանակել է ընդհանրապես աստված»: Նույն արմատահիմքից բխած ձևերի «աստված», «երկինք», «օր»(հայ. «տիւ») իմաստներում դիտում են «լուսավոր աստվածային երկնքի» պաշտամունքային հետք հնդեվրոպական միասնության շրջանակում: Այս առումով ուշագրավ է, որ Ժ. Դյունեզիլը գերմ-սկանդ. Tiwaz, Ziu, Ty'r (> h.ե. \*dyu-կամ \*deiwo-) դիցանունը ևս վերագրում է լեզվական հնագույն շերտին: Նա հնարավոր է համարում, որ այդ անունը կրող աստվածությունը սկզբնապես եղել է երկնքի աստված, հավանաբար, գերագույն աստված (*Տ. Աղայան*, Ակնարկներ հայոց տոմարների պատմության,

Այսպիսով, ներկայացված երկու վավերագրերի տեղեկատվության համադրումը հաստատում է *Տիր/Տիր* աստվածության պաշտամունքի ծագման՝ տեսականորեն մեր բացահայտած վաղեմությունը, որի terminus post quem non պետք է համարել Ք.ա. III հազարամյակը:

Ե., 1986, էջ 61, *Գ. Բ. Ջահուկյան*, Լեզվական նոր տվյալներ հայոց նախաքրիստոնեական կրոնի և հավատալիքների մասին, ՊԲՀ, 1992, թիվ 1, էջ 15, *Ջ. Дюмезиль*, Верховные богу индоевропейцев, М., 1986, с. 145-146, 155):



### ՄԻ ՊԱՇՏԱՍՈՒՆՔԱՅԻՆ ԲՈՒՅՄԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի խեժատու բույսերի թվում կա մեկը, որի անունը բացահայտում է նրա ծխական նշանակությունը: Դա վայրի պիստակենին է կամ խնկենին (*Pistacia mutica*): Աճում է Փոքր Ասիայում, հյուսիս-արևելյան Թուրքիայում, Ղրիմում, Անդրկովկասում, Իրանում: Ապրում է մինչև 1000 տարի: Խնկենու խեժը անուշաբույր է և օգտագործվում է որպես խունկ: Այն պարունակում է բարձրորակ եթերայուղ, որը կիրառվում է օժանելիքի արտադրության մեջ: Պտուղներից ևս ստացվում է եթերայուղ:

Չագրոսի լեռնահովիտներում խնկենին օգտագործել են նեոլիթյան ժամանակաշրջանից: Կալաթ-Չարմոյի պեղումների ժամանակ հայտնաբերվել են խնկենու ածխացած պտուղներ: Ուրմիա լճից հարավ, Հաջի Ֆիրուզ Թեփե բնակավայրի (մ.թ.ա. 5400-5000թթ.) պեղումներից հայտնաբերված կավե անոթի մեջ խաղողի գինու նստվածք է եղել, որին խառնած էր խնկենու խեժ (*Archaeology, July-August, 1998, p. 33*): Եվ այսպես, առ այսօր հայտնի հնագույն խաղողի գինին ուներ խնկենու խեժի բուրմունք:

Անտիկ գրականության մեջ խնկենու յուղից օժանելիքի պատրաստման հնագույն հիշատակությունը վերաբերվում է Հայաստանին: Մ.թ.ա. 401թ. Հայաստանով նահանջող հույները Տելեբոաս գետից, որը նույնացվում է Արածանիի ձախակողմյան վտակ Մեղրագետի հետ, շարժվեցին Սշո և Մանազկերտի դաշտերով: Այստեղի բնակչությունը պատրաստում էր յուղի շատ տեսակներ, այդ թվում դառը նշի և խնկենու յուղեր: Կար նաև դրանցից պատրաստված մեռոն (*Anab., IV, IV, 13*): Այս վայրերը մ.թ. Ռ. հայտնի էին ամոնի արտադրությամբ (*ՊԲԳ, 2002 N1*): Ուշագրավ է, որ է. Գրանտովսկին "Անաբասիս"-ի այս հատվածի կապակցությամբ հիշում է ամոնը (*Э. Грантовский, Ранняя история иранских племен Передней Азии,*

*M. 1970, c. 285-286*): Իրոք, ընդհանրություններ կան. ոչ մեծ չափերի ծառ, դեղնավուն ծաղիկներ, ողկույզաձև պտուղներ: Երկուսն էլ ճնշիչ ազդեցություն էին թողնում նյարդային համակարգի վրա: Պիոսկորիդեսը գրում է, որ խունկի տեսակներից մեկը կոչվում էր "ամունիտուս": Այն սպիտակ էր և տրորելիս մազտաքի հոտ էր արձակում: Չի բացառվում, որ միջին դարերում Հայաստանի և Սիրիայի սահմանամերձ շրջաններից որպես օժանելիքի հումք արտահանվող սպիտակ մազտաքը (*Сайдана, N 1000*) իրականում խնկենու խեժն էր, քանի որ մազտաքի ծառը աճում է Միջերկրական ծովի ափերին: Պարզվում է, որ հնուց ի վեր Առաջավոր Ասիայում օգտագործվող խունկը հիմնականում պիստակենինների խեժերից էր: Ասիական արքաները մեծ նշանակություն էին տալիս խնկենու աճեցմանը (*Theophr. Hist. plant. IX, IV, 8, Pl. NH, XII, 56*):

Մ.թ.ա. VI դարից Իրանում հայտնի են kund արմատով տեղանուններ: Գրանտովսկին բացահայտել է դրանց կապը սանս. kunda, kundarua (խունկ), հայերեն "կնդրուկ", պարսկերեն kundur (խունկ) բառերի հետ, նկատելով, որ Իրանում այդ բառով սկզբնապես անվանում էին պիստակենու տեսակները և նրանցից ստացված խունկերը: Նույն ստուգաբանությունն է տրվում նաև մ.թ.ա. 820 և 714թթ. ասորեստանյան տարեգրություններում հիշատակված Ուրմիա լճի հյուսիսում գտնվող Խունդուր և Վերին ու Ներքին Խունդուրաններ տեղանուններին, որոնք նույնացվում են հայկական Կոտոր տեղանվան հետ (*E. Herzfeld, Archaeological History of Iran, London, 1935, p.19, Э. Грантовский, ук. соч., с.193, 283-285*):

Հին Իրանում պաշտվել են Կունդա աստվածը և Կունդի աստվածուհին: Նրանց գլխավոր ֆունկցիաներից էր մոգությունը, գուշակությունը, իսկ նրանց պաշտամունքը էքստատիկ բնույթ ուներ: Գնդկաստանում kunda էին կոչում Վիշնու աստծուն: Կունդա աստծու պաշտամունքը առկա է եղել նաև հին Հայաստանում: "Կունդ"-ը հայոց գերագույն աստծու՝ Արամազդի, մակդիրը կամ անուններից մեկն էր ("Կունդ ոմն Արամազդ" – Խոր. I, L.U.) (*Э. Грантовский, ук. соч. с. 289, 291*):

Kund արմատով հատուկ անուններ վկայված են ոչ իրանական միջավայրում ավելի վաղ ժամանակաշրջանից, քան դրանք հայտնի են Իրանից: Աշուր-դան II թագավորի տարեգրությունում (մ.թ.ա. 934-



912թթ.) հիշատակվում է Կադմուխի թագավոր Ku-un-di-ip...-e-ն: - ip վերջավորությունից դատելով Ի. Գելբը համարում է այս անունը խուռիական, միաժամանակ մատնանշելով kunt արմատով հատուկ անունների առկայությունը Նուզիում (*I. Gelb, Hurrians and Subarians, Chicago, 1944, p.82*): Մ.թ.ա. VIII-VII դ.դ. Կունդու տեղանունը արձանագրված է Կիլիկիայում (*M. Gough, Anazarbus, AnSt, 1952, vol.2, p.91-92*): Սալմանասար III-ը հիշատակում է Կունմուխի (Կունմագենե) թագավոր Կունդաշպիին: Խեթերենում կա kuntarra բառը, որը մեկնաբանվում է որպես "սրբավայր" (*H. Hoffner, An English-Hittite Glossary, RHA, 1967, t. XXV, Fasc.80, p.80*): Սուպպիլուլիումաս I-ի (մ.թ.ա. 1380-1346թթ.) տարեգրությունում հիշատակվում են Կունտիյա լեռները Պալա երկրում: Պալան տեղայնացվում է Արևելա-Պոնտական լեռնաշղթայից հարավ, Սատաղի հարևանությամբ (*B. Хачатрян, Восточные провинции Хеттской империи, Ер., 1971, с.69-73*): Ուշագրավ է, որ այդ տարածքում, մի փոքր հարավ, հին հայկական Անի-Կամախն էր, Արամազդի պաշտամունքային կենտրոնը: Մ.թ.ա. XIVդ. խեթական մի տեքստում շատ հետաքրքիր տեղեկություն է պահպանվել Կունմախայում, որը նույնացվում է հետագա Անի-Կամախի հետ, տեղի ունեցող ծիսակատարության մասին: Այստեղ նկարագրվում են երեք բարձրաստիճան անձանց նկատմամբ Կունմախայի մոտ գտնվող անտառում գիշերը սև մոգության ակտի իրականացման մանրամասները, որի նպատակն էր հիշյալ երեք անձանց մահը: Ա. Քոսյանը մեկնաբանում է այս տեքստը որպես ապացույց Կունմախայում անդրաշխարհին առնչվող պաշտամունքի առկայության մասին, հիշելով այդ կապակցությամբ հին հայկական Անի-Կամախում հայոց արքայական դամբարանի գոյության փաստը: Խեթական մեկ այլ գրառում պատմում է Կունմախայում գտնվող տաճարում կատարված գուշակության մասին, որի արդյունքները կարևոր նշանակություն ունեին խեթական թագավորի համար: (*Ա. Քոսյան, Անի-Կամախը խեթական դարաշրջանում, ՊՔՀ, 2002, N3*): Եվ այսպես, "Կունդ" անվանումը մատնանշում է հին հայկական Արամազդ աստծու կապը մոգության, գուշակությունների հետ: Ստացվում է, որ առնվազն մ.թ.ա. II հազ. կեսից նրա պաշտամունքային կենտրոնը իր այդ ֆունկցիաներով հռչակված է եղել: Շատ հնարավոր է, որ Կունմախայի անտառը, որտեղ կատարվում

էին սև մոգության հետ կապված արարողություններ, խնկենիների պուրակ լինելը, քանի որ հին հայկական ժամանակաշրջանում այդ վայրը Արամազդի պաշտամունքային կենտրոնն էր, որի "Կունդ" անվանումը ցույց է տալիս, որ խնկենին նրա խորհրդանիշն էր: Հայտնի է, որ Լիդիայի մայրաքաղաք Սարդեսից դուրս գոյություն ուներ խնկենիների սրբազան պուրակ (*Theophr. Hist. plant, IX, IV, IV*): Միաժամանակ գիտենք, որ Սարդեսից դուրս գտնվում էին լիդիական արքաների դամբարանները (*Her., I 93*): Համանմանորեն Անի-Կամախում թագավորների հանգստարանն էր:

Օվիդիոսի մոտ մի առասպել է պահպանվել խնկի ծառի առաջացման մասին: Աքեմենյան թագավորը մի աղջիկ ուներ Leucothoe անունով: Արևի աստվածը սիրահարվում է աղջկան և բռնի ուժով տիրանում: Երբ արքան իմանում է այդ մասին, խիստ զայրանում է և աղջկան կենդանի թաղում հողում: Արևը ճառագայթներով բացում է հողը և աղջկան ցողում է ցեկտարով: Սակայն նրան կենդանացնել չի հաջողվում, և փոխարենը հողից բարձրանում է խնկի ծառը (*Met., IV, 190-255*): Այս պատմությունը կարելի է դիտել որպես Աքեմենյան թագավորների կողմից կատարվող ծես: Հայտնի է որ նրանք անդրաշխարհի աստծուն զոհաբերություն էին կատարում, զոհերին ողջ թաղելով հողում (*Her., III, 35, VII, 114*): Պլուտարքոսը գրում է մի շատ հետաքրքիր ծեսի մասին. մոգերը սանդի մեջ մանրացնում էին օմոնի կոչված բույսը, կանչելով անդրաշխարհի աստծուն և խավարի ուժերին, ապա այն խառնում էին զոհաբերված գայլի արյան հետ և թափում էին մի այնպիսի տեղ, որտեղ երբեք արև չէր ընկնում (*De Iside et Osir., 46*): Այս օմոնին իրավացիորեն նույնացնում են ամոնի հետ (*Э. Грантовский, ук. соч., с. 286*): Այն վայրը, որտեղ երբեք արև չի ընկնում, հավանաբար, գետնի տակն էր և այս արարողությունը հիշեցնում է Օվիդիոսի պատմած առասպելը խնկի ծառի մասին:

Մեծ Հայքի Դարանաղի գավառում, Անի-Կամախի հարևանությամբ գտնվում էր սպիտակափառ Բարշամինայի տաճարը Թորդանում: Եթե Արամազդին կոչում էին "բոլոր աստվածների հայր", ապա Բարշամինան Ազաթանգեղոսի երկի հունական տարբերակում նույնացված է Հոեա աստվածուհու հետ (*Ա. Տեր-Ղևոնդյան, Ծանոթագրություններ, Ազաթանգեղոս, Պատմություն Հայոց, Եր. 1977, էջ 176, Գ.Հակոբյան, Սեփյանների կործանման և հայոց դարձի պատ-*



մության մանրամասներ, Հայոց սրբերը և սրբավայրերը, Եր. 2001, էջ 146-148): Այն հանգամանքը, որ Տիգրանը Միջագետքից է բերել Բարշամինայի արծանը, հիմք չի տալիս այս աստվածությանը վերագրել միջագետքյան ծագում, ինչպես որ հայկական մյուս աստվածների արծանները Հունաստանից բերելը դեռ չի խոսում նրանց պաշտամունքի հունական ծագման մասին: Եվ դժվար թե Մեծ Հայքի կրոնական կենտրոնում գտնվել հայկական առասպելներում որպես հայերի հակառակորդ հանդես եկող ասորեստանցի Բարշամի սրբավայրը: Փաստորեն Բարշամինան աստվածների մայրն էր և հավանաբար, Արամազդի կինը: Բարշամինայի "սպիտակափառ" մակդիրը կարելի է համեմատել խնկի ծառ դարձած *Leucothoe*-ի անվան հետ, ինչպես Արամազդի "Կունդ" անունը մատնանշում է նրա կապը խնկենու պաշտամունքի հետ: Հատկանշական է, որ Հին Իրանում Կունդա աստվածն ուներ իր կանացի գուգընկերը՝ Կունդի աստվածուհին: Այս գույգի հիմնական ֆունկցիաներից էր գուշակությունը, իսկ խունկ ծխելը մեծ դեր է կատարել գուշակությունների ժամանակ:

Նավասարդի տոնակատարության ժամանակ առանձնահատուկ նշանակություն ուներ հայոց թագավորի կողմից խունկ ծխելու արարողությունը (*С. Лисициан, Старинные пляски и театральные представления армянского народа, Ер. 1972, т.2, с.19-21*), որը հավանաբար կապված էր Արամազդի պաշտամունքի հետ, քանի որ Բագավանում, որտեղ տոնում էին նավասարդը, եղել է նրա պաշտամունքային կրակը և զոհասեղանը:

Առաջավոր Ասիայում կոսմ արմատով հատուկ անունների տարածման աշխարհագրությունը և ժամանակագրությունը չի հաստատում *Kunda* աստծու և նրա խորհրդանիշ խնկենու պաշտամունքի իրանական ծագման է. Գրանտովսկու վարկածը:

*Սահակյան Ա. (Մատենադարան)*

**ԵՐՎԱՆԴՅԱՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ ՀԻՄՆԱՐԿԵՔԻ  
ՊԱՇՏԱՄՈՒՆՔԱՅԻՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ  
(Երվանդակերտ, Դրասխանակերտ,  
մ.թ.ա. III-II դդ.- ըստ Մ.Խորենացու)**

1. Մովսես Խորենացու «Հայոց պատմության» (այսուհետ Մ.Խ.) 2-րդ գրքում Երվանդ թագավորի 4 կառույցների մասին պատմող ԼԹ-ԽԲ գլուխները աչքի են ընկնում մի քանի ներքնագրային հակասություններով:

ա) ԼԹ գլուխը՝ «Յաղագս շինուածոյ Երուանդաշատ քաղաքի», պատմելով նոր մայրաքաղաքի տեղի ընտրության և շինության մասին, կիսատ է մնում, որովհետև ավարտվում է միայն միջնաբերդի ամրացման տվյալներով՝ ոչինչ ըստ էության չասելով բուն քաղաքի մասին:

բ) Խ գլուխը՝ «Թէ որպէս շինեաց զԲագարան քաղաք կոռց», պատմելով անվտանգության նպատակներով առանձին հոգևոր կենտրոնի շինության մասին, նշում է. «Նման իւրոյ քաղաքին շինեաց քաղաք փոքր»: Ինչո՞վ է նման յուր քաղաքին, որը նախորդ գլխի Երվանդաշատն է, եթե վերջինս նկարագրված է միայն միջնաբերդով: Այսինքն, դարձյալ ոչինչ ըստ էության չի ասվում, միայն կեղծ տպավորություն է ստեղծվում, որ կուռքերը ամրացվում են ավելի փոքր չափի միջնաբերդում, ինչը հակասում է համաժողովրդական պաշտամունքի վայրի վերաբերյալ Երվանդյան ծրագրին:

գ) ԽԲ գլուխը՝ «Վասն ձեռակերտին, որ կոչի Երուանդակերտ», կարծես ինչ-որ ծանոթ նյութի շարունակություն լինի, որին և ակնարկելով՝ ասում է. «Եւ այսպիսի գեղեցկութեան դիր անբթթելի իմն գոգ-



ցես ի բարձրաւանդակ թագաւորանիստն զհայեցուածս ունի»: Ասինքն՝ ըստ էութեան նկարագրված քաղաքը անթարթ հայացքով նայում է ինչ-որ թագավորանիստ բարձրավանդակի, որի մասին թեկուզ ոչինչ չի ասվում, բայց հասկացվում է, որ հենց դա է նախապես ծանոթ նյութը, որի պատմությունը սկսվել է ԼԹ գլխում և ընդհատվել:

դ) Մ.հ. -ի վերականգնած բնագրից երևում է, որ մեզ հասած «Պատմության» գլխակարգը հեղինակային չէ, կազմվել է IX-X դդ. ընթացքում, և որ ԽԲ գլուխը եղել է ԼԹ-ի շարունակությունը՝ որպես մեկ միասնական համագամնալի պատում Երվանդի քաղաքի կառուցման մասին: ԼԹ և ԽԲ գլուխները որպես մեկ ամբողջություն կարդալու դեպքում վերանում են վերոնշյալ ներբնագրային հակասությունները: Մասնավորապես, լուծվում է Երվանդի անունով երկու քաղաքների ընկալման ու տեղադրման տարօրինակ խնդիրը, երկուսի փոխարեն ստանում ենք մեկ մայրաքաղաք՝ անվան երկու տարբերակով (-շատ և -կերտ):

2. Բնագրագիտականից զատ հիշյալ թյուրընթերցումից առաջ են եկել նաև հնագիտական հակասություններ Երվանդի մայրաքաղաքի երկատման և երկու քաղաքների տեղադրման հարցում:

Այն, որ հայագիտությունը Մ.հ. բնագրի թյուրընթերցման արդյունքում կարող էր մեկ քաղաքից ստանալ երկուսը և ջանք թափել գտնելու երկրորդի տեղը, երևում է նաև Երվանդի կառուցած մյուս քաղաքի՝ Բագարանի օրինակով: Սոտավորապես նույն «ճակատագրական» ընկալման հետևանքով այս քաղաքից անկախ է մնացել Դրասխանակերտը, որը ևս հնագիտության մեջ արժանացել է իրարամերժ տեղադրումների:

ա) Մես II-ԼԹ, Խ, ԽԱ, ԽԲ գլուխներում պատմվող Երվանդյան շինարարական աշխատանքներին հաջորդում է այսպիսի տեղեկություն. «Ձայս ամենայն գործեցեալսն Երուանդայ (այսինքն՝ Երվանդակերտ-Երվանդաշատը, անտառը, Բագարանը) պարգև է մեծն Տրդատ մարդկան ազգին Կամսարականաց, որպես մտերմաց և արեան կցորդաց ազգին Արշակունեաց, զոր յիրում տեղուցն պատմեսցուք» (II-ԽԲ):

բ.) Բացելով վերոնշյալ տեղը՝ կարդում ենք. «(Տրդատը)... տայ նմա (Կամսարին) ժառանգութիւն զմեծ դաստակերտն Արտաշիսի, որ այժմ ասի Դրասխանակերտ և ըզգաւառն Շիրակ, որպէս ազգականի

ըրում և մտերիմ հարազատի... յաւելու և այլս պարգևս (Արշափրին) զքաղաքն Երուանդայ և զնորին գաւառն մինչև ցկատար ծորոյն մեծի... Իսկ Արշափր առաւել սիրեալ զգաւառն՝ յիր անուն կոչէ Արշարունիս, քանզի յառաջ Երասխաձոր կոչէր» (II-Դ):

Համադրումից պարզ է դառնում, որ Տրդատը նախ նվիրում է Կամսարականներին Երվանդի կառուցած Բագարանը՝ Շիրակ գավառով, ապա՝ օրեր անց նվիրում է Երվանդաշատ-Երվանդակերտը՝ Արշարունիք գավառով (անտառը չի նշվում առանձին՝ գավառի մեջ մտնելու կամ հետագայում վերացած լինելու պատճառով): Մեջբերումներից միանշանակ երևում է, որ Բագարանին համապատասխանում է Դրասխանակերտը, որը կոչվում է նաև «Արտաշեսի մեծ դաստակերտ»: Վերջին որակումը նպատակ ունի նախ հավաստելու Արտաշես արքայի ժառանգորդ Տրդատի սեփականատիրական իրավունքը այդ քաղաքի հանդեպ, ուստի և՛ նվիրատվության վավերականությունը, ապա հիշեցնելու, որ երբ Արտաշեսը զրավեց Երվանդի հոգևոր կենտրոնը՝ սպանելով քրմապետ Երվազին, նրա գանձերը բաժին հանեց մարական զորքը ուղարկող պարսից արքային, նրա 500 ծառաներին բաժին տվեց Սմբատ զորավարին, իսկ քաղաքը բնականաբար պահեց իրեն, թեկուզ վերջինիս մասին հատուկ չի նշվում (II-ԽԸ): Այսպիսով՝ Շիրակի կենտրոնը Բագարանն է, որն էլ Արտաշեսի մեծ դաստակերտ Դրասխանակերտն է, դրա համար էլ Դրասխանակերտը Շիրակ գավառի հետ միասին է զուգորդվել Երվանդաշատին ու նրա գավառ Արշարունիքին՝ կազմելով գավառ-գավառակենտրոն զույգեր:

3. Դատելով հին անվանաձևից՝ Դրասխանակերտ, պետք է ենթադրել, որ նրա հիմնադիր Երվանդը իր աշխարհիկ մայրաքաղաքը ևս սկզբնապես կոչել է նման ձևով՝ Երվանդակերտ, որին հետո կոչել են նաև -շատ տեղանվանակերտ ածանցով, ինչպես Արտաշատ, Ջարիշատ, Աշտիշատ ևն:

Մես պատմածից երևում է, որ Երվանդ վերջին թագավորը երկու մայրաքաղաքների կառուցումն ու անվանումը կատարել է միասնական մտահղացմամբ, նույն ծրագրի շրջանակում, մեկն իբրև հոգևոր կենտրոն, մյուսն՝ աշխարհիկ, ընդ որում, մեկը մյուսին նման, բայց չափերով տարբեր:



Միս և այլ տվյալների հիման վրա հայագիտության մեջ վերականգնվել է Երվանդի աստվածային բնույթը.

ա) Երվանդն ամպրոպային աստված և երկնքի ու երկրի գլխավոր տիրակալ է:

բ) Ունի երկվորյակ եղբայրներին հատուկ հրաշալի ծնունդ (Երվանդ-Երվազ):

գ) Անվան ստուգաբանումն իբրև հնդեվր. Պեր-Յեր (Ս.Յարուբոնյան), իբրև 'արագ' (Յյուլբշման), իբրև հարստության տիրող (Ա.Փերիխանյան) նշում են դիցազնական գծեր:

դ) Երվանդի և Նանե դիցամոր (Նանայ) անուսնական զույգը ծնվում է ամպրոպային վիշապամարտիկ Վահագնը (Ս.Պետրոսյան):

ե) Երկվորյակներից մեծի հատուկ մշակութակերտ բնույթը (Ս.Պետրոսյան), անտառի տնկումը, վայրի կենդանիների բազմացումը մայրի ծառերը և Ծննդոց անտառ անվանումը ակնարկում են առասպելաբանական արարչությունը:

զ) Հայաստանում գտնված Արտաշիսյան սահմանաքարերի արձաններն արձանագրություններում Արտաշես թագավորին տրված «Երվանդական» մականունը ընկալվում է իբրև դիցազնական, աստվածային ծագման:

է) Ղեռևս Արամազդից առաջ Հայաստանի գլխավոր աստված տեր, հայր եղած Երվանդը, որից սերվել է թագավորական և քրմական տոհմը, ի շարս թվարկված հատկանիշների ունեցել է նաև «հրեղեն հայացք», «աչկունք-արեգակունք»:

Երվանդյան կրոնապաշտամունքային համակարգում շեշտված Աչքի առասպելության մնացել են որոշակի հետքեր.

է-1) Ըստ Միս-ի՝ Երվանդի քաղաքի հատակագծում պատկերված էր «աչք», որի կառուցվածքային բաղադրիչներն էին՝ բիր, բուրդակ, արտևանունք, հոնք, ծնոտներ՝ շրթերով, ի վերջո՝ անթթելի հայեցվածք: Մ.իս.-ի համար աչքի նկարագրությունը ունի միայն ոճական փոխաբերական արժեք, որովհետև նա չի նկատել հայկական ավանդույթում պահպանված առասպելաբանական մյուս կողային տվյալները:

է-2) Երվանդն ուներ զորեղ աչք, որով լուսաբացին պայթեցնում էր որձաքարե վեներ (Ասողիկի կողմից վկայված Երվանդաքար

անվանումը ակնհայտորեն պետք է ընկալվեր որպես քաղաքի ավերակ):

է-3) Երվանդի անվան (հին ձևը՝ Երեւանդ) հնչական անագրամատիկ տարբերակները ակնարկում էին ամպրոպային գլխավոր աստծո հատկանիշներ (հեր-հայր, երիվար-ծի ունեցող, երևացող):

է-4) Քրմական մեկնաբանության ազդեցությամբ «Երվանդ» անվան հունական տառադարձումը ընկալվել է որպես նրա յուրօրինակ թարգմանությունը՝ Օրոնտես, որ հայերեն նշանակում է Տեսանողը:

«Աչքի» առասպելության այս և այլ հետքերը օգնում են հասկանալ, որ հելլենիստական Հայաստանի թագավոր-աստվածը երկրի աշխարհիկ և հոգևոր կենտրոնները հիմնել է իր անունով ու նմանությամբ, այսինքն՝ «աչք» նշող անունով և «աչքի» տեսքով, քանի որ Երվանդյան առասպելա-ծիսական համատեքստում աչքը ուներ որոշակի հմայական նշանակություն:

Եվ իրոք, Երվանդը, որպես թագավոր, իր աշխարհիկ մայրաքաղաքը կոչեց Երվանդակերտ, իսկ ի՞նչ կոչեց, որպես աստված, իր հոգևոր մայրաքաղաքը, մի՞թե Բագարան:

Ս.իս.-ի նշած Բագարանը ակնհայտորեն հետագա ժողովրդական նկարագրական անվանում է (ինչպես Դիցարան, Սրբավայր), որն էլ ինքը մոտավոր ճշտությամբ ստուգաբանում է: Նման ոչ պաշտոնական անվանում կարող էր տրվել ոչ թե իր բուն կրոնա-պաշտամունքային միջավայրում, այլ նրան հաջորդած նոր մշակութային փուլում, որպիսիք են Արտաշիսյան կամ քրիստոնեական շրջանները:

Թեև Բագարանը կրկնում է աշխարհիկ կենտրոնի հիմնարկեքը, ճիշտ կլինի ասել, որ աշխարհիկն է կրկնում հոգևորին: Վերջինս նույն կերպ («նման իւրոյ քաղաքին») հատակագծվում է իբրև, աչք՝ և անվանվում արդեն ուղղակի իմաստով՝ որպես ազդու, շանթող հայացքի տեր աստծո քաղաք, մոտավորապես ինչպես՝ արեգ-ակնակերտ:

Նման կրոնա-իմաստաբանական չափանիշին կարող է բավարարել «Դրասխանակերտ» տեղանունը, որը ստուգաբանվում է որպես իրան.\* drs «հայացք» - \* hvan «արև» > միջին պրսկ. \* dars-xvan > հայ. Drasxan (Ա.Փերիխանյան)

«Դրասխանը» ոչ թե Երվանդ-թագավորի, այլ Երվանդ-աստծո գլխավոր հատկանիշներից է, նրա, այսպես կոչված, քրմական-վար-



դապետական մակդիրը, որով էլ կոչվում է նոր հոգևոր մայրաքաղաքը:

Այն Երվանդակերտի հետ միասին IX դ. 20-ական թթ., որպես գանձագին հողեր, ստացան Բագրատունիները: Նրանք իրենց թագավորական իշխանության օրոք Դրասխանակերտը դարձրին առաջին մայրաքաղաք, որտեղից էլ քիչ ավելի ուշ հնարավոր դարձավ ընտրել նոր կաթողիկոս՝ Դրասխանակերտից, հանձին պատմիչ Հովհաննեսի (IX դ. վերջ):

Այսպիսով, Երվանդ թագավորը կառուցում է ոչ թե չորս, այլ երկու քաղաք՝ Երվանդակերտ (= Երվանդաշատ) և Դրասխանակերտ (= Բագարան):

Այսպիսով, Երվանդ թագավորը կառուցում է ոչ թե չորս, այլ երկու քաղաք՝ Երվանդակերտ (= Երվանդաշատ) և Դրասխանակերտ (= Բագարան):

Մանասերյան Ն.  
Միրզոյան Լ. (4հ)

Կենդանիների անունը	Կենդանիների անունը	Կենդանիների անունը	Կենդանիների անունը	Կենդանիների անունը
Կենդանիների անունը	Կենդանիների անունը	Կենդանիների անունը	Կենդանիների անունը	Կենդանիների անունը

### ՄԱՆՐ ԳԻՇԱՏԻՉ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՈՍԿՐԱՅԻՆ ՄԱՑՈՐԴՆԵՐԸ ՀՅՈՒՄԻՍ-ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՂՎԱԾ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻՑ

Հայաստանի հյուսիս-արևմտյան հատվածի հնագիտական հուշարձաններից հայտնաբերված գիշատիչ կենդանիների մնացորդների գերակշռող մասը բաժին է ընկնում մանր գիշատիչներին: Դրանք են աքիսը (*Meles meles L.*), կզաքիսը (*Martes foina Erxl.*), աղվեսը (*Vulpes vulpes L.*) և խայտաքիսը (*Vormela peregusna Gueld.*): Այս կենդանիների ոսկրային մնացորդները հայտնաբերվել են Բենիամինի, Շիրակավանի, Լոռի Բերդի, Հոռոմի և Արթիկի տարբեր ժամանակաշրջաններին պատկանող հուշարձաններից<sup>1</sup>: Չնայած հնագիտական հուշարձաններում սրանց սահմանափակ քանակին, այնուամենայնիվ, այս կենդանիների ոսկրային մնացորդները մեծ հետաքրքրություն են ներկայացնում ժամանակային մեծ դիապազոնի ընթացքում գիշատիչների ֆաունայի և դրանց կմախքի մորֆոլոգիական փոփոխականության մասին պատկերացում կազմելու առումով:

Ոսկրային մնացորդները ներկայացված են հիմնականում զանգոսկրով և ստորին ծնոտներով, հազվադեպ՝ պոստկրանիալ կմախքի հատվածներով: *Սոյուսակ 1*-ում ներկայացված են աքիսի, կզաքիսի, աղվեսի և խայտաքիսի ոսկրային մնացորդների թիվը և առանձնյակների քանակը Հայաստանի հյուսիս-արևմտյան հատվածի վերոհիշյալ հուշարձաններից:

<sup>1</sup> Հայտնում ենք մեր երախտագիտությունը ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի աշխատակիցներին, ինչպես նաև այլ կազմակերպությունների ներկայացուցիչներին՝ ոսկրաբանական նյութերի տրամադրման համար:



Աղյուսակ 1. Աքիսի, կզաքիսի, աղվեսի և խայտաքիսի ոսկրային մնացորդների և առանձնյակների թիվը՝ հյուսիս-արևմտյան Հայաստանի հուշարձաններից

Հուշարձան	Աքիս (Meles meles L.)		Կզաքիս (Martes foina Erxl.)		Աղվես (Vulpes vulpes L.)		Խայտաքիս (Vormela peregusna Gueld.)	
	1	2	1	2	1	2	1	2
Բենիամին	3	1	3	1	14	8	-	-
Շիրակավան	1	1	3	1	-	-	-	-
Լոռի Բերդ	-	-	11	2	50	6	-	-
Հոռոմ	2	1	7	2	2	2	1	1
Արթիկ	1	1	-	-	-	-	-	-

1 – ոսկրային մնացորդների թիվը

2 – առանձնյակների թիվը

Հարկ է նշել, որ գտնված ոսկրաբանական նյութի պահպանվածությունը ոչ միշտ է թույլ տալիս անցկացնել լիարժեք մորֆոմետրիկ (չափումնաբանական) ուսումնասիրություն: Պեղումներից հայտնաբերված մանր գիշատիչների և ՀՀ ԳԱԱ Կենդանաբանության ինստիտուտի ռեցենտ ոսկրաբանական հավաքածուի նույն գիշատիչների կմախքի տարրերի հիմնական մորֆոլոգիական պարամետրերի համեմատության արդյունքում ստացված հակիրճ պատկերը՝ Աղյուսակ 2-ում (ներկայացված թվերը չափերի միմիմալ և մաքսիմալ սահմաններն են):

Ինչպես երևում է աղյուսակից, և՛ գանգի և՛ պոստկրանիալ կմախքի տարրերի հիմնական մորֆոլոգիական պարամետրերը<sup>1</sup> ժամանակի ընթացքում մեծ փոփոխություն չեն կրել: Ինչ վերաբերվում է չափսերի որոշ շեղումներին, ապա դրանք կարելի է բացատրել անհատական փոփոխականության երևույթով:

Աղյուսակ 2. Կիսաբրածո (ուրֆոսիլ) և ժամանակակից (ռեցենտ) առանձնյակների կմախքի որոշ տարրերի հիմնական մորֆոլոգիական պարամետրերի համեմատությունը

	Աքիս (Meles meles L.)		Կզաքիս (Martes foina Erxl.)		Աղվես (Vulpes vulpes L.)		Խայտաքիս (Vormela peregusna Gueld.)	
	Սուրֆոսիլ	Ռեցենտ	Սուրֆոսիլ	Ռեցենտ	Սուրֆոսիլ	Ռեցենտ	Սուրֆոսիլ	Ռեցենտ
<b>Գ ա ն գ</b>								
Գանգի հիմքային երկարություն	104.0-108.0	103.5-110.0	73.0-76.0	73.5-75.0	-	-	51.5-57.0	58.5
Առամնաչարի երկարություն (C – M <sup>1</sup> )	30.0-30.0	30.0-31.0	25.0-25.0	24.0-24.5	-	-	13.0-15.0	15
M1-ի երկարություն	10.5-11.0	10.0-11.5	8.0-8.0	8.0-8.2	-	-	4.5	4.5
Մաստիղայինություն	56.5-62.0	55.5-56.0	41.5	37.5-39.0	-	-	30.5-35.0	33.5
<b>Ս տ ո ռ ի ն ծ ն ո տ</b>								
Աղար առամների երկարություն (M <sup>1</sup> – M <sup>2</sup> )	21.0-21.0	19.0	12.5-14.0	13-13.3	25.0-28.0	25.5-26.0	-	-
Օնոտի բարձրությունը M <sup>1</sup> -ի մոտ	14.0-15.0	13.5	8.5-11.0	8.5-9.0	11.5-12.3	11.0-12.0	-	-
<b>Ու ս ո ս կ ր</b>								
Ընդհանուր երկարություն	101.0	88.0-98.5	64.5-67.0	66.3-67.0	-	-	-	-
Դիաֆիզի միմիմալ լայնություն	9.0	7.5-8.5	5.0-5.0	4.8-5.0	7.5-8.0	8.5-8.5	-	-
<b>Ճ ա ճ ա ն չ ո ս կ ր</b>								
Ընդհանուր երկարություն	-	-	62.0	64.0-64.8	-	-	-	-
Coronoid processus-ի լայնություն	-	-	7.0	6.5-7.0	-	-	-	-
<b>Ա գ դ ռ ո ս կ ր</b>								
Ընդհանուր երկարություն	-	-	-	-	138.0	135.0-140.0	-	-
Դիաֆիզի միմիմալ լայնություն	-	-	-	-	10.0	9.5-9.5	-	-

<sup>1</sup> Չափումներն անց են կացվել ըստ Ա. Ֆոն դեն Դրիշի մեթոդիկայի:



Манасерян Н.  
Мирзоян А (ИЗ)

## КОЛЛЕКЦИИ СУБФОССИЛЬНЫХ МЛЕКОПИТАЮЩИХ

Формирование коллекции субфоссильных млекопитающих лаборатории зоологии позвоночных животных Института зоологии НАН РА происходило в результате поступления фаунистического материала из раскопок археологических памятников с территории Армении для определения. Черепа и элементы посткраниального скелета позвоночных животных из поселений, погребений, крепостей и городов, с целью дальнейшего изучения характера и сущности изменений остеометрических признаков, после видового определения сохранялись и к настоящему времени накопился уникальный по сохранности, видовому разнообразию и временному диапазону материал, на основе которого создан коллекционный фонд субфоссильных животных, населявших территорию Армении в историческом прошлом. Благодаря широкой кооперации с археологами коллекционный фонд постоянно пополняется. Очевидна необходимость обработать накопленный материал, сделать его доступным для специалистов териологов, палеонтологов и археозоологов.

На данном этапе:

1. Создана эталонная остеологическая коллекция, используемая для диагностики видов по костным остаткам. Определенные до вида костные остатки млекопитающих (каждая кость маркирована тушью с обозначением памятника и порядковым номером кости) расположены в 4 открытых стеллажах и 8 шкафах (для геологических образцов) с 15 ящиками (2 комнаты на 1 этаже института).

В первой комнате в деревянных ящиках на открытых стеллажах разложены наиболее хорошо сохранившиеся образцы из раскопок памятников IV, III тысячелетий до н.э. Во второй комнате костные остатки животных сгруппированы анатомически; черепа и нижние челюсти некоторых млекопитающих (лошади, коровы, медведи, зубры, олени, овцы), а также рога оленей – расположены на полках открытых стеллажей; черепа зайцев, собак, лис и элементы посткраниального скелета, а также фрагменты костей редких видов расположены в ящиках, на которых указано место и время раскопок.

В общей сложности из многотысячной массы костей животных определено, *систематизировано* и предложено к сохранению более 10 тысяч образцов скелета млекопитающих (10542 анат. ед.) из 48 археологических памятников: поселений, погребений<sup>11</sup> и городов с хронологическим диапазоном энеолит – средневековье (см. таблицу).

Материал представляет надежную основу для изучения животноводства и охоты у племен, населявших территорию Армении на протяжении длительного исторического периода.

Среди остатков диких млекопитающих из исследованных памятников установлено 23 вида. Охота на некоторые из них практиковалась, видимо, очень широко, тогда как другие виды добывались сравнительно редко. Что касается животноводства у древних племен, достаточно отметить, что уже в конце IV – начале III тысячелетия до н.э. поселенцам были известны все основные виды современных домашних животных: крупный рогатый скот, овца, коза, свинья, лошадь, осел, верблюд, собака, кошка. Одни из этих видов были широко распространены, многочисленны и играли важную роль в хозяйстве, другие встречались лишь на ограниченных территориях, в небольшом количестве и роль их практически оказывалась ничтожной.

<sup>11</sup> Памятники эпохи бронзы и раннего железа Лчашен и Лори Берд включают 89 и 38 погребений соответственно.



Видовой состав субфоссильного костного материала в  
коллекциях Института зоологии

Вид	Русское название	Местонахождение
<i>Lepus europaeus</i> Pallas.	Заяц русак	Верин Навер, Карашамб, Двин.
<i>Castor fiber</i> L.	Бобр	Шенгавит, Охмик.
<i>Canis lupus</i> L.	Волк	Ехегис, Мохраблур.
<i>Canis aureus</i> L.	Шакал	Севан, Арташат.
<i>Canis familiaris</i>	Собака	Хатунарх, Техут, Мохраблур, Кети, Шенгавит, Мецамор, Ширакаван, Лчашен, Артик, Айриван, Севан, Цамакаберд, Бениамин, Верин Навер, Нор Армавир, Арташат.
<i>Vulpes vulpes</i> L.	Лисица	Техут, Мохраблур, Шенгавит, Лчашен, Талин, Бениамин, Нор Армавир.
<i>Ursus arctos</i> L.	Бурый медведь	Цамакаберд.
<i>Martes foina</i> Erxl.	Каменная куница	Ширакаван, Талин, Лчашен.
<i>Mustela nivalis</i> L.	Ласка	Верин Навер, Шенгавит
<i>Vormela peregusna</i> G.	Перевязка	Шенгавит, Кети, Мастара, Аргштихинили, Севан.
<i>Meles meles</i> L.	Барсук	Артик, Цамакаберд, Арташат, Лчашен, Шамирам.
<i>Lutra lutra</i> L.	Выдра	Ахкала
<i>Felis sp.</i>	Дикий кот	Двин
<i>Equus caballus</i> L.	Лошадь	Енгиджа, Адаблур, Мохраблур, Шенгавит, Джуджеван, Мецамор, Аревик, Карнут, Ором, Ширакаван, Кети, Айриван, Севан, Цамакаберд, Бениамин, Талин, Верин Навер, Эребуни, Кашатах, Кучак, Тауш, Лори Берд, Джогаз, Охмик, Тмбадир, Киранц, Катнахпюр, Сисиан, Лчашен, Двин, Капс, Иджеван, Норабац, Арташат.
<i>Equus hemionus</i> Pall.	Кулан	Мохраблур, Шенгавит, Мецамор, Тейшебаини, Бениамин.
<i>Sus scrofa</i> L.	Кабан	Мохраблур, Шенгавит, Гарни, Ширакаван.
<i>Sus scrofa domestica</i>	Домашняя свинья	Адаблур, Бениамин, Шамшадин, Эребуни, Тауш, Джогаз, Арташат, Охмик, Апаран, Айгедзор, Лчашен, Двин.
<i>Camelus sp.</i>	Верблюд	Цамакаберд, Двин.
<i>Capreolus capreolus</i> L.	Косуля	Хатунарх, Адаблур, Шенгавит, Бениамин, Эребуни, Тмбадир.
<i>Alces caucasicus</i> Ver.	Лось	Айрум.

Вид	Русское название	Местонахождение
<i>Cervus elaphus</i> maral O.	Олень	Адаблур, Бениамин, Шамшадин, Эребуни, Тауш, Джогаз, Арташат, Охмик, Апаран, Айгедзор, Лчашен, Двин
<i>Gazella subgutturosa</i> Gul	Джейран	Мецамор, Ширакаван, Талин, Катнахпюр, Норабац.
<i>Capra aegagrus</i> Erxl.	Безоаровый козел	Жданово, Джуджеван, Гарни, Айриван, Карашамб.
<i>Capra hircus</i>	Коза домашняя	Хатунарх, Мохраблур, Шенгавит, Гарни, Джуджеван, Мецамор, Аревик, Жданово, Арташат, Ширакаван, Кети, Аруч, Айриван, Севан, Цамакаберд, Бениамин, Талин, Шамшадин, Айгеван, Тауш, Лори Берд, Джогаз, Карашамб, Катнахпюр, Сисиан, Лчашен, Иджеван, Коси Чотер, Артик, Нор Армавир.
<i>Ovis orientalis</i> Gmelin	Армянский муфлон	Мохраблур, Шенгавит, Гарни, Джуджеван, Мецамор, Жданово, Талин, Тауш, Лори Берд, Карашамб, Тмбадир.
<i>Ovis aries</i>	Овца домашняя	Хатунарх, Цахкунк, Адаблур, Мохраблур, Шенгавит, Гарни, Мецамор, Аревик, Ширакаван, Кети, Аруч, Айриван, Севан, Цамакаберд, Бениамин, Талин, Шамшадин, Айгеван, Тауш, Лори Берд, Джогаз, Карашамб, Охмик, Тмбадир, Киранц, Катнахпюр, Сисиан, Лчашен, Двин, Коси Чотер, Артик, Нор Армавир, Верин Навер
<i>Bison bonasus caucasicus</i> Sat.	Зубр	Севанский бассейн-Айриван, Шоржа
<i>Bos primigenius</i> Boj.	Дикий бык	Шамирам.
<i>Bos taurus</i>	Бык домашний	Практически во всех памятниках
<i>Buffalo</i>	Буйвол	Айриван

2. Создана информационная база, которая позволяет всем заинтересованным специалистам пользоваться остеологическими данными. Сведения о видовом составе, распределении, структуре древних популяций и морфометрических особенностях охотничьих видов могут быть использованы для прогноза изменений рецентных териокомплексов, решения проблем восстановления численности и реаклиматизации отдельных видов. Историческая динамика морфологических признаков в субфоссильных популяциях может быть использована для решения проблем внутривидовой систематики.



Коллекционные материалы рассчитаны также на студентов, изучающих курс зоологии позвоночных животных, зоологов, морфологов и археологов, сталкивающихся с необходимостью определения млекопитающих.

Результаты исследований могут быть использованы археологами и историками для реконструкции быта, культуры и степени развития хозяйственной деятельности в древних городах и поселениях.

Мы выражаем искреннюю признательность за финансовую поддержку, Армянскому национальному научно-образовательному фонду (ANSEF).

Благодарим археологов разных ведомств за предоставление материала.

Հակոբյան Ն. (ՀԱԻ)

## ԴՎԻՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԹԱՂԱՄԱՍԻ 1990-1993, 1999թթ. ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Դվինի Կենտրոնական թաղամասն զբաղեցնում է միջնաբերդից արևմուտք ընկած հատվածը: Թաղամասն իբրև առանձին վարչական միավոր ձևավորվել է IV դ. վերջերին և V դ. երկրորդ կեսում: Այս ժամանակներից էլ սկսվել է թաղամասի կառուցապատումը. կառուցվեց Մայր տաճարը, միանավ բազիլիկ եկեղեցին, V-VI դդ. պալատական հուշարձանախումբը՝ հայրապետանոցն իր կից կառույցներով, հետագայում՝ VII դ. կաթողիկոսական պալատը, և այլ հասարակական շինություններ: Վաղարշապատից Դվին տեղափոխվեց Հայոց Հայրապետական Աթոռը:

1990թ. պեղումներն շարունակվեցին V-VI դդ. պալատական հուշարձանախմբից արևմուտք ( -e-21, -h-21, -g-21 և -f-21 քառակուսիներ), խնդիր ունենալով ավարտին հասցնել դեռևս 1979թ. այս հատվածում բացված շինության պեղման աշխատանքները, հեռացնել IX և հետագա դարերում իրականացված անկանոն կառույցների մնացորդները, որոնք խաթարում էին V-VII դդ. շինարարական հորինվածքների կառուցողական կերպը (նկ. 1):

Ատրուշանի հատակի մակարդակից մոտ 0.5մ խորանալիս, -e-21 քառակուսում բացվեց մոխրաշերտ, վառված ծղոտի մնացորդներով: Մոխրաշերտն հեռացնելիս երևաց գլաքարերով շարված և կավե շաղախով պատած հատակ: -g-21 քառակուսում գլաքարե հատակը մաքրելիս, արևելյան հատվածում սկսեցին նշմարվել 1979թ. պեղված աստիճանի մյուս շարքերը: Մոտ 3մ խորության վրա բացվեցին սանդղաթի յոթերորդ և ութերորդ աստիճանները՝ կանոնավոր, լավ թրծած աղյուսաշարերով: Պեղումների արդյունքում բացվեցին սանդղաթի թվով իննը աստիճանները (նկ. 2), իսկ 10-րդը կամ առաջինը



1979թ. իբրև գերեզման հեռացվել էր ուշ շերտերի մնացորդները:



Նկար 1

Դատելով սանդղավանդակի չափերից և խորությունից (մոտ 3.5մ), կարելի է ենթադրել, որ այն պատկանել է երկհարկ խոշոր մի շինության, որը հավանաբար կառուցվել է VIIդ. սկզբներին և ավերվել է մինչև IXդ.:

Ներքին աստիճանները բացելիս նկատելի էր կենդանական (հատկապես մանր եղջերավորների և թռչունների) ոսկորների մնացորդներ: 9-րդ աստիճանը նստած էր կավե ամուր հարթակի վրա: Վառված ոսկորների և մոխրաշերտի ներկայությամբ գտնվեց կարմիր փայլաներկով, յուրահատուկ հորինվածքով ջրամանի կափարիչ, որը պատկանել է ատրուշանին:<sup>1</sup> Համաձայն զրադաշտական հավատքի «հանգանակի», օրը մի քանի անգամ ջրով ցողում էին

<sup>1</sup> Aram Kalantarian, Niura Hakopian, Aghavini Djankocian, Korioun Ghafadarian, Armenisehe und Sasanidische bau tatigkeitin Dvin. Archaeologische mitteilungen aus Iran. band 25, 1992, Berlin. tab. 17.

տրբազան տարածքը, իսկ այրված մոխիրն ու կենդանիների, թռչունների ոսկորները թաղում շրջակայքում՝ իբրև սուրբ մասունքներ:<sup>1</sup>



Նկար 2

Վերին շերտերում առկա են V-VIդդ. բնորոշ բլթակավոր գավաթների բեկորներ, VIII-IXդդ. կավանոթների բեկորներ, ապակե ա-

<sup>1</sup> Мэри Бойс, Зороастрийцы. Верования и обычаи, М., 1987, с. 10, 12, 76, 79, 135; И.В.Пак, Мифы древнего и раннесредневекового Ирана, С. Петербург-Москва, 1998, с. 16.



նոթների նրբակերտ օղակաձև ունկեր, գունազարդ ապակե գավաթները՝ արաբերեն գրության հետքերով:<sup>1</sup>

-d-20 քառակուսում շարունակեցինք հեռացնել IX և հետագա դարերի աղյուսաշեն (հում) շինությունների մնացորդները: Դրանք բերագանցապես կավակերտ փոքր սենյակներ են, ջրահեռացման երեքով, կառուցված մինչև երկրաշարժը: 1մ խորանալիս այստեղ բացվեց խճի շերտ, գույնով և քարատեսակով նման եկեղեցուց հարավ-արևմուտք ընկած V-VIIդդ. պալատական հուշարձանախումբը՝ ծածկող խճաշերտին, առաջացած Ա.Գրիգոր եկեղեցու վերջին վերանորոգման (VIIդ. սկիզբ) աշխատանքների ժամանակ:

1992թ. աշխատանքներն ընթացան առավելապես Ա.Գրիգոր եկեղեցուց արևելք: Մշակութային շերտն այստեղ սկսվում է XV-XVIIդդ. թաղումներով: Շերտի հզորությունը մոտ 2.4մ է, թաղումներից մոտ 1.15մ խորության վրա սկսվում է սպիտակ խճի շերտը (30սմ) նստած մոխրաշերտի վրա (10սմ): Մոխրաշերտին անմիջականորեն հաջորդում է խճի երկրորդ՝ շիկավուն շերտը (60սմ): Այսպիսով առաջին շերտը XV-XVIIդդ. թաղումներ են, երկրորդը՝ VI-IXդդ. մշակութային շերտը, (բնորոշ խեցեղեն և ապակե գտածոներ) և երրորդը՝ ուշ բրոնզ-վաղ երկաթի մշակութային հզոր շերտը, սփռված ողջ տարածքով (սև փայլաներկով խեցատներ, մուգ մոխրագույն խոշոր կարաս ճգմված վիճակում, կենդանակերպ ունկերի, սև փայլեցրած սափորների առկայություն և այլն): Վաղ միջնադարյան մշակութային շերտն այստեղ անմիջականորեն նստած է վաղ երկաթի շերտերի վրա՝ բացառելով եկեղեցուց արևելք մշակութային մյուս դարաշրջանների շերտերի գոյությունը:

1993թ. աշխատանքները շարունակվեցին Ա.Գրիգոր եկեղեցու արևելյան հատվածում՝ եռանավ բազիլիկի պատերի հիմքերը բացելու նպատակով:

Վաղ բազիլիկ տաճարի հիմքերը հյուսիսային և հարավային պատերի արևելյան հանգույցում, ուր Ավագ խորանն է, ընդհատված են:

<sup>1</sup> Գ.Ս.Ջանփոլադյան, Դվինի միջնադարյան ապակին IX-XIIIդդ., ԳԳԳ 7, Երևան, 1974, էջ 12: Ա.Ա.Քալանթարյան, Դվին I, Կենտրոնական թաղամասի պեղումները 1964-1970թթ., Երևան, 1976, էջ 92, նկ. 30: Կ.Գ.Ղաֆադարյան, Ա.Ա.Քալանթարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները (1973-1980թթ.), Երևան, 2002, էջ 198-199:

նույն ընդհատումը նկատվում է և արևելյան խորանի հարավային և հյուսիսային վերջնամասերում: Ավագ խորանն արտաքուստ բազմաթիվ է՝ բնորոշ IV-Vդդ. բազիլիկ տաճարներին:

Հիմքում ընդհատված են և հարավային ավանդատան արևելյան և հարավային պատերը: Հիմքերի խորությունն այս հատվածներում 2-2.5մ է, դրանք քանդված չեն հետագա կառուցումների ժամանակ, այլ հարթեցված են, ունեն կանոնավոր շարվածք, քարերը լավ եղկված են, նստած ավազի շերտով ծածկված, կավով լավ տոփանած հարթակի վրա:

Ընդհատված հիմքերի ուղղությամբ բացակայում են եկեղեցու վաղ պատերի մնացորդները: Եկեղեցու հատակագծային պատկերն ամբողջացնող ներկայիս պատերը, ընդհատված պատերի հատվածներում հետագա վերանորոգումների արդյունք են: Դրանք դրված են ուղղակի մայր հողի վրա և իրենց հաստությամբ, քարանյութով ու կառուցողական կերպով տարբերվում են նախնական շինության շարվածքից:

Եկեղեցին հյուսիսային ավանդատուն չի ունեցել: Կարծեցյալ ավանդատան տեղում վաղ միջնադարյան և մ.թ.ա. առաջին հազարամյակի մշակութային շերտերի մեջ վերևից իջնող որևէ հետք չի նկատվում:

Վերակառուցման է ենթարկվել և արևելյան բազմանիստ խորանը, որի հարավային և հյուսիսային միստերը ձևափոխվել են, դրվել ավելի ներս՝ աբսիդին շեշտված պայտի տեսք տալու նպատակով: Ներքուստ բացվել է խորանի պատը մոտ 2.5մ խորությամբ: Աբսիդը հիմքերից շարված է երկրորդական օգտագործման քարերով, որոնց վրա տեղ-տեղ նկատելի են կարմիր և սև ներկերի մնացորդներ, պատերի շարվածքում առկա են քարեր, կապերի համար արված փոսիկներով: Հնարավոր է, դրանք չեն պատկանել եկեղեցու սկզբնական շինությանը, այլ եղել են ավելի վաղ:

1999թ. աշխատանքներն ընթացան եկեղեցուց հարավ-արևմուտք (-a-21 և -b-21 քառակուսիներ): Վերին շերտը հեռացնելիս հողի մեջ հանդիպում էին նյութեր, բնորոշ IXդ. (թեյնիկաձև, քթիկավոր ճրագների, հասարակ և ջնարակապատ), ջրատար փողրակների, ծածկի կղմինդրի բեկորներ և այլն: XV-XVIIդդ. թաղումներից մի քանիսն ունեին հետաքրքիր կառուցվածք. քարաշար (3 շարք),



կանոնավոր շարվածքով, հատակները հարթեցված և տոփանած, աճյունափոսերը քառանկյուն և երկարավուն, մեղ հատվածքով: Թաղումներից առավել ուշագրավը երկուսն էին, որոնք իրենց ուղղվածությամբ և կմախքի դիրքով հավանաբար ոչ քրիստոնեական են:

Բացվեց -b-19, -b-20 քառակուսիներից դեպի -b-21 քառակուսու տարածք ձգվող հզոր պարսպատի մի հատված, կառուցված խոշոր քարերով և փուլ եկած եկեղեցու պատերի լիցք-շաղախով: Պարսպատը կառուցվել է 894թ. երկրաշարժի և եկեղեցու լիովին ավերվելուց հետո:

**Գտածոներ:** Կավե կճուճները հիմնականում բեկորային վիճակում խոհանոցային գործածության առարկաներ են. մրապատ, լայնափոր, ուռուցիկ իրանով, երբեմն գնդաձև, մեղացող բերանով, հարթ հատակով, հարդարված փորագիր գծաքաշ ալիքավոր կամ շեղակի ձգվող գծագրողներով: Խեցին վարդագույն է, լավ թրծած, կավը մանրահատիկ: Բեկորներից մեկը կրում է ականջաձև ունկ-գարդ՝ բնորոշ VIII-IXդդ.: Այդ են փաստում մեծաքանակ բաղդատելի օրինակները Դվինի նախորդ տարիների պեղածո նյութերում, որոնք IXդ. վերջերից արդեն չեն հանդիպում խեցեղեն առարկաների հարդարանքում: Առանձնակի ուշադրության արժանի է մանրակերտ մի կճուճ, գտնված տեղամասի հորերից մեկում: Այն հորինվածքում գնդաձև է, ցածրադիր (բարձր. 12սմ), կոր վզով, լայն բերանով (տր. 14սմ), դուրս փռված պսակաշուրթով, բոլորշի, հարթ հատակով (տր. 7.5սմ): Երկու կողմերում կրում է ականջաձև ունկեր, ծայրերում՝ գամեր հիշեցնող բլթակներ՝ մման մետաղե կաթսաներին: Իրանին երեք տեղով կրում է մշաններ. † սլաքի (երկու տեղով) և N (հավանորեն հունարեն), գուցե և վարպետի նշան:

**Քրեղանները** փոքրաթիվ են, մի մասը ջնարակապատ: Դրանցից մեկը դուրս փռված պսակով շուրթի բեկոր է, հյուսթեղ կամաչ հենքով, որի վրայով իբրև գարդ սահում է գալարվող ցողունների շղթան՝ զարդարված տերևներով: Երկրորդ բեկորը դարձյալ շուրթ է, դեպի դուրս փռված պսակով, վառ դեղնավուն հենքով, զարդարված գալարվող ցողունազարդի շղթայով (շագանակագույն), ծածկված փարթան տերևակալած շիվերով:

Մյուս օրինակը խոշոր, սաղր մակերեսով քրեղանի իրանի բեկոր է, դեղնա-կանաչավուն հենքով, ծաղկազարդ դաշտով: Ծաղկազարդերը շրջանակված են բաց շագանակագույն ջնարակած շրջաններով: Դրսից բաց դեղնավուն ջնարակապատ հենքի վրայով սահում են գծաքաշ ժապավեններ և կետազարդեր:

**Գավաթները** հասարակ և ջնարակապատ են, բեկորային: Անջնարակ նրբախեցի օրինակներից մեկը հարդարված է փորագիր բուսական և երկրաչափական զարդերով: Երկրորդ օրինակն ուռուցիկ իրանով ջնարակապատ դրսից և ներսից, միագույն, հյուսթեղ, մուգ կանաչ գավաթի բեկոր է:

Երրորդ բեկորը նրբախեցի է, կաթնավուն հենքով, հարդարված կապտաշագանակագույն ջնարակով, բուսական և երկրաչափական զարդաձևերով:

Քրեղանները և գավաթները թվագրվում են IXդ.:

**Սափորներ,** ներկայանում են երկու օրինակով. առաջինը ուռուցիկ տանձաձև իրանով ջրամանի բեկոր է, մերքուստ վառ կարմիր, արտաքուստ կարմրավարդագույն: Շուրթից ներքև անցնում է գծագրող գոտի, ապա սև թանաքով արաբերեն անընթեռնելի գրություն: Գրությունն իր գրելաձևով հիշեցնում է 1986թ. նույն տարածքում գտնված խոշոր սափորներին, որոնք իրաններին և բռնակներին կրում էին արաբերեն մաղթանքի արձանագրություններ և թվագրվում էին IXդ.:<sup>1</sup>


**Ճրագներ** հայտնի է մեկ ամբողջական օրինակով, արտաքուստ մրապատ, քթիկը մի փոքր կոտրված, վերաբերում է թեյնիկաձև քթիկավոր ճրագների դասին: Ունի դեպի դուրս փռված ժապավենազարդ շուրթ, բռնակ՝ կիսաղեղի տեսքով:

**Խփեր, կափարիչներ.** Խփերից առաջինը գտնվել է տեղամասի հորերից մեկում, մասամբ թրի է: Ունի բոլորշի հորինվածք, կենտրոնում՝ խողովակաձև, վերջույթում շրջանաձև բռնակ: Անզարդ է: Խեցին բաց դեղնավուն, մրապատ: Թվագրվում է IXդ.:

<sup>1</sup> *Ն. Գ. Չակոբյան*, Դվինի կենտրոնական թաղամասի պեղումները, ՀՍՍՀ-ում 1985-86թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջանի հիմնադրույթներ, Եր., 1987, էջ 61: *Aram Kalantarian*, Dvin, Histoire et archeologie de la ville medievale; Paris, 1996, pl 67.



Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում երկրորդ խուփը (տր. 34.5սմ, բարձր. 24սմ), որը մակերեսի ողորկությամբ, փայլաներկով բոլորովին տարբեր է մինչ այժմ մեզ հայտնի մանթոնի առարկաներից (նկ. 3): Պատրաստված է որոշակի կերտված շի առարկաներ ծածկելու համար: Արտաքուստ ունի վառ կարմիր գույն, խոր շրջանաձև կերտվածք, մի կողմի վրա ելուստաձև ունի: Կափարիչի իրանը կենտրոնական հատվածում շուրջանակի գտնվում է ուռուցիկ ժապավենաձև զարդը, իսկ կենտրոնում վեր է բարձրանում վերջույթուն շրջանաձև բռնակը՝ հարթ մակերեսով: Կափարիչը եզերված է դեպի դուրս փռվող շուրթով, գտնված



Նկար 3

ժապավենազարդով: Ունի սասանյան ծագում: Թվագրվում է V-VI դդ.:

*Քարե առարկաներից* հետաքրքիր է մոխրագույն պորֆիրիտից, շրջանաձև իրանով, կարճ պատերով, ուղիղ կտրված շուրթով, կողերից մեկի վրա ուղղանկյունաձև ժապավենատեսք ունկով սկահակը (տր. 21սմ, բարձր. 7.5սմ): Սկահակի ողջ իրանը հարդարում են փորագիր խաչերն ու շեղանկյունիները, հարդարված շրջան-կետ զարդերով: Շուրթից ներքև և նստուկից վեր անցնում են գծաքաշ փորագիր գոտիներ՝ հարդարված կրկին շրջան-կետ զարդերով: Քարե սկահակներ և գավաթներ կենտրոնական քաղամասում հայտնի են և նախորդ տարիների պեղումներից:<sup>1</sup>

Պարանք թվագրվում են IX դ.:

<sup>1</sup> Ա.Ա.Քալանթարյան, Դվին I, էջ 72, նկ. 25-7:

Ղարիբյան Ի.  
Չակոբյան Չ. (ԵՊՀ)


### ԲԶՆԻԻ 2003-2004 թթ. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Բջնի հնավայրը գտնվում է համանուն գյուղի մերձակա հրվանդանների վրա՝ Հրազդանի երկու ափերին: Դեռևս 1929թ. այստեղ հնագիտական ուսումնասիրություններ է կատարել Հայաստանի հնությունների պահպանության կոմիտեի արշավախումբը, հայտնաբերելով վաղ հայկական և անտիկ դարաշրջանի նյութական մշակույթի մնացորդներ: Հնավայրը վաղուց ի վեր հայտնի է միջնադարյան զրավոր աղբյուրներից և առաջին անգամ հիշատակված է Ղազար Փարպեցու մոտ: X դարից նրա պատմությունը կապված է Պահլավունիների նախարարական տան հետ: XI դարում Բջնին հայ մշակավոր գիտնական ու քաղաքական գործիչ Գրիգոր Մագիստրոսի տիրույթն էր, XV դարում այն հիշատակվում է որպես անառիկ բերդ. XVII դարում կաթողիկոսը վերանորոգում է բնակավայրի գլխավոր եկեղեցին:

2003թ. ԵՊՀ-ի արշավախումբը ձեռնամուխ եղավ մաքրումների, պահպանական աշխատանքներին, ինչպես նաև պեղումների ամրոցի տարածքի երկու տեղամասերում: Ավելի քան 20 տարի առաջ բացված միջնաբերդի կենտրոնագմբեթ եկեղեցու ներսը մաքրվեց կուտակված աղբից, իսկ տեղաշարժված կամ շեղված ճարտարապետական մանրամասները կրկին բերվեցին պահանջված դիրքի:

Պեղավայրի առաջին տեղամասում ամրոցի ստորին դարավանդի արևմտյան եզրին, բացվեցին հյուսիս-հարավ ձգվող չորս գույգ քառակուսիներ. առաջին քառակուսիների շարքը (A, B, C, D յուրաքանչյուրը 5x5մ մակերեսով) հարևանում էր պարսպին, զբաղեցնելով կենտրոնական կիսակլոր աշտարակների միջև ձգվող գոտին: Երկրորդ շարքը (E, F, G, H) կից էր առաջինին արևելքից (գծ. 1):





ՔՐԱԿՆԻ ԿՈՒՐՈՒՄՆԻ ԿՆՏԱԿ  
2003 թ. 06.02.07

Գետնի մակերևույթից մոտ 0.7մ ներքև սկսվեց մշակութային շերտը՝ պարզունակ կառույցների ցանցով: A-E կից քառակուսիներում բացվեց մի սենյակ՝ 100-110սմ լայնությամբ պատերով: Վերջինիս կից՝ B և C քառակուսիներում բացվեց մի այլ սենյակ, որի համար որպես արևմտյան պատ ծառայում էր բուն պարիսպը: Պեղավայրի, պարսպին կից կենտրոնական սենյակը պատկանում է ամրոցի կյանքի վերջին փուլին:

2003-ին բացվեց երկու շինարարական հորիզոն: Նշված շինություններից և կից բակից գտնված նյութը գերազանցապես XV-XVIIդդ. թվագրվող խեցեղեն է: Ամրոցի կյանքի այս վերջին շրջանը լուսաբանող հնագիտական նյութը հարստացվեց ոչ միայն ջնարակած խեցեղենի, կավե մեծ ու փոքր տարալի հավաքածուով, այլև մետաղյա իրերով և ճարտարապետական մանրամասներով: B քառակուսում պարսպի ներսի երեսը մաքրելիս բացվեց թշնամուն հեռահար զենքով հարվածելու լուսամուտ – կրակակետ:

D քառակուսում կրկին բացվեց ամրոցի կյանքի վերջին փուլին վերաբերող մանրամաս՝ ձեռքի պարզունակ հրանոթի համար օգտագործվող փոքր գնդակ-արկեր, որոնցով գնդակոծվել էր Բջնին ուշ միջնադարում:

Բջնու միջնաբերդի վերին հարթակի արևմտյան եզրին բացված չորս քառակուսիներում (A, B, C, D) բացվեցին մի առանցքի վրա շարված փոքր սենյակներ. պահեստներ և արտադրական կառույցներ, որոնց արևմտյան եզրով ձգվում էր ընդհանուր պատը: Պեղավայրի մի թևում բացվեց (քառ.C) թոնիր, սրա մեջ իջեցված կարաս, միջանցիկ անցքով քարի սալ (քառ.D), հավանաբար հեղուկ թորելու համար, իսկ հակառակ թևում թոնիրով մի սենյակ (քառ.A): Նյութը նախապես կարելի է թվագրել XV-XVIIդդ.: Այստեղ էլ, ստորին հարթակի նման, կախելի է նկատել երկու շինարարական հորիզոն, որը հատկապես լավ է երևում C քառակուսում՝ երեք իրար հաջորդող դարավանդների տեսքով:

Ստորին հարթակի պեղումներից գտնվեց վաղմիջնադարյան մոնումենտալ շենքի քանդակազարդ քիվ:

2004թ. ստորին հարթակի բոլոր քառակուսիներում բացվեց XIII-XIVդդ. վերաբերող հորիզոնը: Պարսպին կից երկու քառակուսիներում (B, C) տարածվում էր կավակերտ տոփանված հատակ՝ ծածկ-



ված կրաշաղախով, որն իր եզրաքարերով հանդերձ հիշեցնում է հնձան: Այստեղից գտնվեցին երկաթից պայտ, մատնոց, ապակե ուլունքի բեկոր:

Հյուսիսից այս արտադրական կառույցին կից սենյակում բացվեցին 0.5-0.55մ խորությամբ հինգ թոնիրներ: Հատակին թափված շինարարական մնացորդների, այրված գերանի միջավայրում գտնվեցին մշակված տուֆից խորանարդ, 17x17x3սմ չափի մի քանի թրծած աղյուսներ, թոնրի խուփ, երկաթե կեռիկ և շքագամ: Պարսպին կից դեպի ամրոցի հարավային հատվածը ձգվում էր մի սալահատակած միջանցք՝ ցածր քարի շեմքով, որ պայմանականորեն վերագրում ենք «միջին» շինարարական հորիզոնին կամ XIII-XIVդդ: Պեղավայրի հարավային կեսում, սրանից մոտ 30-35սմ ներքև, բացվեց «ստորին» հատակը, որի մի հատվածում սալերով խնամքով ծածկված էր ջրահեռացման կավածեփ առվակոսը. վերջինս ձգվում էր դեպի պարիսպի մեջ կառուցած կրակակետը, որն այս հորիզոնում այլևս չէր ծառայում իր հիմնական նպատակին: Այս հատակի երկու թոնիրների կողքին գտնված խեցեղենի մեջ ջնարակած բեկորները համեմատաբար քիչ են, զիջելով դաջազարդ և կետազարդ մնուշներին:

Ամրոցի շերտագրությունը պարզելու նպատակով կրակակետի առաջ փորվեց 1մ<sup>2</sup> մակերեսով շուրֆ, որը խորացվեց, առայժմ 2մ. այդտեղից գտնվեցին հասարակ ու ջնարակած խեցեղեն, կանթավոր սպիտակ սափորի բեկոր, մեխ, քարից ուլունքներ: Պարիսպը ներսից սվաղված էր կրաշաղախով:

Ամրոցի վերին հարթակի վրա՝ արևմտյան եզրին շարունակվեց գլխավոր դարպասից հարավ ձգվող հատվածի ուսումնասիրությունը՝ պարսպի վրա բացված մի գծի վրա շարված չորս՝ 5x5մ քառակուսիներում, որոնք բացահայտեցին նրա կառուցվածքը: Պարիսպը կառուցված էր փոխադրահայաց շարված միջնորմերով, որոնց միջև գոյացած վանդակները լցվել էին մեծ քարերով ու ամրացվել կավի շաղախով: Այս զանգվածի մեջ ջնարակած անոթների բեկորների կողքին գտնվեց փայլեցված մակերեսով անտիկ խեցեղենի երկու մնուշ:

Հաշվետու ժամանակում ամրոցում բացված երեք շինարարական հորիզոնները վերաբերում են XV-XVII, XIII-XIV և XI-XIIդդ.:

Ամրոցի հարավային հրվանդանը հետախուզելիս, թալանված վաղերկաթեդարյան դամբարաններից մեկի խցի վրա գտվեցին խաչքարի ստորին մաս և քառակող կոթողի հատված, հավասարաթև խաչով կոթող, իսկ մի այլ դամբարանի վրայից՝ օբսիդիանից տեղանիս նետասլաք:

Բջնուց Ալափարս տանող ճանապարհին՝ մշակովի դաշտերում, խաչի Դոշ բլրի վրա, գետնի մակերեսին ամենուր փռված էին խաչքարի մեծ ու փոքր հատվածներ, տուֆից արձանագիր կամարազարդ խորաններ, որոնք հավանաբար XXդ. սկզբին կործանված մեծ կոթողի մասեր էին: Այն բաղկացած է եղել XII-XIIIդդ. երկու խաչքարերից, որոնք ազուցված էին քանդակազարդ շրջանակով ու կանգնեցված մոտ 3.4x2մ մակերես զբաղեցնող, 0.9մ բարձրությամբ եռաստիճան պատվանդանի վրա:

Բջնուց հյուսիս-արևմուտք՝ սարի գագաթին, անտառակի մեջ հետախուզվեցին «Սուննաթ»-ի ավերակները, որոնք սպիտակ կրաքարից կառուցած, բազմիցս վերանորոգված վաղ միջնադարյան մատուռի լավ պահպանված հիմքեր են պարունակում՝ հետաքրքիր քառակող կոթողներով, խոյակով ու X-XIIդդ խաչքարերով: Բջնու կենտրոնում մահմեդական սրբավայրի պարսպի մեջ փաստագրվեցին երկու արձանագիր կոթողներ, առյուծների և թուխ Մանուկ հիշեցնող ռելիեֆներով:





Ամրոցի ստորին հարթակի պեղումները:



«Խաչի դռ» բլրի  
որմնափակ խաչքարի շրջանակը



«Սուննաթ» մատուռի  
բեմի քառակող կտրոզը



Քալանթարյան Ա.,  
Կանեցյան Ա.,  
Հակոբյան Ն. (ՀԱԻ)

### ՊՏՐՆԻ ԱՄՐՈՑԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ


Պտղնի գյուղի հյուսիս-արևմտյան մասում, ծովի մակերևույթից 1450մ բարձրություն ունեցող բլրի գագաթին գտնվում է մի փոքր ամրոց (մոտավոր չափերը՝ 25x70մ): Բլուրը հարավային կողմից անմատչելի է, հյուսիսային կողմից սահուն իջնում է դեպի ստորոտը, որտեղ երևում են ամրոցի պարսպապատից դուրս տեղադրված կացարանների հետքերը: Այդ կողմից ամրոցը լավ պաշտպանված է հզոր՝ մինչև 2,70մ լայնությամբ պարսպապատով: Հարավային կողմից պարսպապատերը չեն պահպանվել (Ճկ. 1, 2):

«Արմենտելի» կողմից կառուցված բջջային հեռախոսակապի կայանի հետևանքով ամրոցի հյուսիս-արևմտյան ողջ կառուցապատումն ավերվել է:

2004թ. հոկտեմբեր ամսին Հնագիտության և ազգագրության ինստիտուտի արշավախումբը պեղման աշխատանքները կատարեց, ամրոցի կենտրոնական և արևմտյան, պահպանված հատվածներում:

Ամրոցի պատերը շարված են երկկողմանի, տարբեր չափերի տեղական կոպտատաշ բազալտ քարերով՝ մանր քարի և հողի շաղախի լիցքով: Որոշ հատվածներում պատի գիծը հատող ցցված բնական ժայռերը մի փոքր հարթեցնելով օգտագործվել են որպես պատի երես:

Ամրոցի հատակագծային լուծումը պայմանավորված է տեղանքով (տես՝ գծագիրը): Պեղումներով բացվեցին իրար հաջորդող սենյակներ: Սենյակների պատերը զուրկ լինելով պատուհանների բացվածքներից, կապվում էին պարսպապատի հետ և կազմում նրա օրգանական մասը: Ամրոցը մի քանի անգամ վերանորոգվել է:



Ամրոցի հատակագիծը պեղումներից հետո



Ամրոցի հարավային եզրի փոքր սենյակը ունի սեղանածև տեսք: Սենյակի հատակը բացվել է 1-1.5մ խորության վրա և չունի դռան բացվածք:

Հաջորդ սենյակը տեղադրված է նշված սենյակից հյուսիս: Այն սկզբնական շրջանում եղել է բավականին մեծ (5-6x5.10մ) և հատակագծում ունեցել է ոչ կանոնավոր ուղղանկյան տեսք: Այստեղ ակնհայտ են հետագա ձևափոխումները, որի հետևանքով սենյակը հյուսիսային կողմից փոքրացել է՝ իր մեջ ներառելով քիչ երկարավուն սեղանածև խորդանոց: Այստեղից հայտնաբերվել են մեծ քանակությամբ խեցեղեն անոթների բեկորներ, այդ թվում՝ երկու մեծ կարասների իրանի և շուրթերի մասեր: Խորդանոցը, 1.40մ խորությամբ, չունի դռան բացվածք, ինչը հիմք է տալիս մտածելու, որ ամրոցի այս մասը, հավանաբար, երկհարկանի է և մուտքը եղել է վերևից:

Մեծ սենյակի արևելյան պատի մեջ բացվեց գետնից 20սմ բարձրության վրա տեղադրված մի խորշ, ինչպես նաև տուֆից, տնտեսական նշանակությամբ, մի կիսատաշտ: Սենյակի պեղումների ժամանակ գտնվել են մեծ քանակությամբ խեցեղենի բեկորներ:

Երկրորդ սենյակը, սկզբնական կառուցման ժամանակ ունեցել է 70 սմ դռան բացվածք, իսկ վերակառուցումից հետո միացել է մյուս սենյակներին պարիսպի երկարությամբ ձգվող միջանցքի միջոցով (4.5մ երկարությամբ):

Նկարագրված սենյակի հյուսիսային կողմում, պարսպապատերի միջև բացվեցին երկու առանձին սենյակներ, լայն միջնապատով (1.20մ): Միջնապատի կենտրոնում բացվեց 90սմ լայնքով դռան բացվածք, որտեղից 3 աստիճանով իջել են հաջորդ՝ արևմտյան սենյակ (նկ. 3): Վերջինիս արևմտյան պատի տակ հայտնաբերվել է 62սմ տրամագծով թոնիր: Դրա դիմաց, հյուսիսային կողմից ընդլայնական պատի մեջ բացվեց մի տնտեսական խորշ: Սենյակի հյուսիս-արևմտյան պատի անկյունում բացված այս խորշը սենյակի հատակի մակարդակին է, ունի 70սմ խորություն և մտնում է Արմենտելի կառուցած շինության տակ: Այդ իսկ պատճառով, խորշի կիրառական նշանակությունը պարզել հնարավոր չէրվել:

Հյուսիս-արևելյան սենյակի հյուսիսային պատը նույնպես Արմենտելի շինության տակ է մնացել և անհնարին է տարածքի չափերը որոշել: Այս տարածքում բացվեցին 20սմ հաստությամբ ոչ բարձր,

մեկ քարով շարված միջնորմներ, որոնք ըստ երևույթին ունեցել են տնտեսական նշանակություն (նկ. 4):

Ամրոցի արևելյան մասում պարսպապատի մեջ կա դռան բացվածք (90սմ) և դեպի հարավ 2 պաշտպանական պատերի միջև ստեղծված է տարածք, որը հավանաբար բակ է հանդիսացել: Նշված բակի հյուսիսային կողմում և նրան կից արևելյան մասում բարձրացող բլրակի վրա ստեղծված է 1.20մ բարձրությամբ 7x5մ մակերեսով մի հարթակ՝ երեք կողմից շրջափակված պատերով: Հարթակի վրա բացվեցին տուֆից սեղանածև և հարթ 4 տապանաքարեր՝ որոնցից ամենամեծը կենտրոնում ուներ անցք և զարդանախշեր (նկ. 5, 6): Հարթակի հյուսիսային հատվածի կենտրոնում բացվեց լավ մշակված տուֆե քարերով շարված պատվանդան (լայն.՝ 1.14մ, բարձր.՝ 0.36մ): Ինչպես պատվանդանը, այնպես էլ շրջակա հատակը ծածկված էին կրի սվաղով: Ցավոք, պատվանդանի վերին մասը չի պահպանվել, բայց նկատի ունենալով դիրքը բլրի ամենաբարձր մասում և մեծ քանակությամբ զարդաքանդակներով տուֆի բեկորների առկայությունը, կարելի է ենթադրել, որ այստեղ հետաքրքիր հոգևոր կոթողային կառույց է եղել:

Կոթողի հյուսիսային կողմում ռելիեֆն անկում է ապրում և հավասարվում ներքևի շինությունների մակարդակին: Այդ տարածքի արևմտյան մասը նույնպես ավերվել է Արմենտելի շինությունների ժամանակ, բայց նրա հյուսիս-արևելյան մասում բացվեց ևս մի վնասված նույնատիպ տապանաքար:

Բարձր հարթակից և նրա հյուսիսային մասից գտնվեցին տուֆից քանդակազարդ ճարտարապետական բազմաթիվ բեկորներ, որմնասյան խարիսխ և սյան բնի հատված (երկուսն էլ երեք քառորդ կրկնասյան տեսքով, յուրաքանչյուր սյան տրամագիծը 20սմ):

Հայտնաբերված զարդաքանդակները բազմազան են՝ հյուսածո, տարբեր վարդյակների, խաղողի ողկույզների, նռան տեսքով: Չարդաքանդակներով քարերի մեջ կարելի է տեսնել քիվի բեկորների մնացորդներ (նկ. 7):

Պեղավայրի ամբողջ տարածքից գտնվել են կավե կղմինդրների (սղեն և կալիպտեր) բեկորներ, որոնք օգտագործվել են VI-VIIդդ.: Հայտնաբերված նյութը՝ զարդաքանդակները, քիվի և կղմինդրի բեկորները թույլ են տալիս հուշարձանը թվագրել VI-VIIդդ.: Իսկ վերևի



հարթակում բացված IXդ. բնորոշ քարե ծածկասալը հավանաբար շինության վերանորոգման արդյունք է:

Պեղումների ժամանակ հայտնաբերված մեծաքանակ լավ մշակված տուֆե քարերի բեկորները հիմք են տալիս ենթադրել, որ այստեղ VI-VIIIդդ. եղել է ճոխ քանդակներով մատուռ կամ փոքր եկեղեցի, որը վերանորոգվել է IXդ.: Տուֆե այս գտածոների մի մասը, հավանաբար, պատկանում է մեմորիալ կոթողին:


Ժամանակագրական առումով խեցեղեն անոթները դասակարգվում են հետևյալ կերպ:

1. V-VIIIդդ.(կղմինդրներ, եղևնածև վերադիր զարդերով կարասների բեկորներ, կարմրափայլ փիալաներ):

2. IX-XIIIդդ. (ուկկածև կճուճների, փռված պսակով քրեղանների, փորագիր զարդերով ջնարակած անոթների բեկորներ):

3. XIV-XVIդդ. (քիչ քանակությամբ հասարակ խեցեղենի առանձին բեկորներ, կապտավուն ջնարակով թասերի մասեր):

Նյութի հնագիտական ուսումնասիրությունը ընթացքի մեջ է:



Նկ. 1. Ամրոցի ընդհանուր տեսարան հարավից




Նկ. 2. Ամրոցի տեսքը մինչև պեղումները արևմուտքից





Նկ. 3. Երրորդ սենյակը թոնիրով պեղումներից հետո




Նկ. 4. Երրորդ սենյակի արևելք ընկած տարածքի պեղումները




Նկ. 5, 6. Ամրոցի գագաթի գերեզմանատան պեղումներից





Նկ. 7. Քանդակազարդ բեկորներ




Նկ. 8. VI-VIIդդ. կղմինդրների և կարասների բեկորներ





Նկ. 9. Տուֆե խուփի և արծանագրված շուրթով կարաս



Նկ. 10. IX-XIII դարերի խփերի բեկորներ և օջախի շուրթ



## ՋՐԱՌԱՏԻ Ա. ԿԱՐԱՊԵՏ ԵԿԵՂԵՑԻՆ

Ա. Կարապետ եկեղեցին գտնվում է Հրազդան քաղաքի Ջրառատ քաղամասում (նախկինում Ռնդամալ, Ջրառատ գյուղ): ճարտարապետական հորինվածքով ուշ շրջանի եռանավ բազիլիկ է: Թաղակապ տանիքը պահում են երկշարք 6-ական փայտյա սյուները: Եկեղեցին կառուցված է կոպտատաշ բազալտ քարից: Մուտքերը, պատուհանները և անկյունները շարված են սրբատաշ քարով:

Ջրառատ գյուղի տարածքը հարուստ է տարբեր դարաշրջանների պատմամշակութային հուշարձաններով: Վաղագույն հուշարձաններից նշելի են գյուղից 1,5կմ արևմուտք «Կաթնաղբյուր» վայրում և 5կմ հյուսիս-արևմուտք Թեղենիս սարը տանող ճանապարհին տարածվող մ.թ.ա. II-I հազարամյակներով թվագրվող դամբարանադաշտերը, գյուղից 2,5կմ արևմուտք, «Կլոր դար» բլրի վրա ծվարած մ.թ.ա. VIII-VI դարերի «Դարի գլուխ» ամրոցը: Մեծ թիվ են կազմում միջնադարյան գյուղատեղիները, եկեղեցիները, խաչքարերով ու տապանաքարերով հարուստ գերեզմանոցները: Ջրագացած միջնադարի եկեղեցական և կոթողային հուշարձաններ են պահպանվել գյուղից արևելք, բարձունքի վրա տարածվող գերեզմանոցում, 2,5կմ հյուսիս-արևմուտք գտնվող գյուղատեղում՝ եկեղեցի, գերեզմանոց, 7-8կմ արևմուտք, «Մամաներ» վայրում՝ եկեղեցի, իր գավթով, գերեզմանոց՝ չորս խաչքարերով, նույն ուղղությամբ 2,5 կմ՝ XII-XIII դարի եկեղեցի, կից խաչքարերով գերեզմանոց: Ամմիջապետ գյուղի տարածքում է «Սեփոյի վանք» վերջերս նորոգված եկեղեցին, շրջակայքի X-XIIIդդ. խաչքարերով:

Ջրառատ (Ռնդամալ) բնակավայրը, չնայած իր բազմադարյան գոյության վերոհիշյալ վկայությունների, միջնադարյան գրավոր սկզբնաղբյուրներում հիշատակվում է սկսած XVIII դարի սկզբից:

Հայոց կաթողիկոս Սիմեոն Երևանցին (1763-1780), իր հանրահայտ «Ջամբռ» աշխատության մեջ սահմանելով Բջնիի վանքի «որպիսությունը» թեմի մեջ մտնող բնակավայրերի բվում, Ծաղկունք գավառում հիշատակում է նաև Ռնդամալ գյուղը:<sup>1</sup> Այն հիշում է նաև Ղ. Ալիշանը. «...ի խառնուրդս Հրազդանայ և Ջենկեայ՝ զոն հանգրուանք և շէնք մանունք, յորոց մի է Մաման: Մերձ ի խառնուրդսն առ Ջանգեալ՝ յահեկէ, ու է յելից կուսէ, մեծ աւանագետոն Հայոց Ռնտամալ իբր 120 տամբք և Ա. Կարապետ եկեղեցաւ: Առ սովաւ մնայ կիսաւեր եկեղեցին Կիւրճի Գիլիսե (Վրացի եկեղեցի կոչեցեալ յայլագեաց)»:<sup>2</sup>

Ալիշանի հաղորդումը երկու իրողություն է փաստում. բնակավայրը, հավանաբար իր մեծության և բարեշենության պատճառով բնորոշված է ավանագյուղ և մյուսը՝ գյուղում եղել է հատակագծային հետաքրքիր հորինվածքով, տեղացիների կողմից վրացական համարվող եկեղեցի:

Վրացադավան (քաղկեդոնական) վանքերի կամ եկեղեցիների առկայությունը տվյալ տարածքում անհավանական չէ: Ջրառատից ոչ հեռու, Մեղրածոր գյուղի մոտ, բարձունքի վրա կանգնած է մի եկեղեցի, որը «մերթ կոչվել է Գյուրջի քիլիսա (վրաց եկեղեցի), Ռնդամալի եկեղեցի, երբեմն էլ Թուխ մանուկ կամ նույնիսկ՝ Պղնձահանք»:<sup>3</sup> Ակներև է, որ Ղ. Ալիշանի թղթակիցը Թեժառույթի եկեղեցին թյուրիմացաբար տեղադրել է Ռնդամալի մոտ:

Գյուղի վերաբերյալ առավել հանգամանալից է Մեսրոպ Սմբատյանցի հաղորդումը: Պատմելով այս տարածքում իր շրջագայությունների մասին, նա գրում է. «...հասանք Ռնդամալ ամունով գիւղը, որ քրդերեն նշանակում է Գեղեցիկ տուն, որին և Մէլիքի գիւղ անուանեն յանուն Մէլիք Շէկոյի, որ 1830 թուին գաղթականութեան առաջնորդն է եղել ժողովրդաց Ալաշկերտից մինչև Ռնդամալ: Հան-

<sup>1</sup> Սիմեոն Կաթողիկոս Երևանցի, Ջամբռ, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Վ. Գ. Համբարձումյանի, պատմաշխարհագրական բնույթի ծանոթագրությունները և քարտեզները Գ. Մ. Բաղայանի, Երևան, 2003, էջ 398:

<sup>2</sup> Ղևոնդ Ալիշան, Այրարատ, Վեներտիկ, 1890, էջ 279-280:

<sup>3</sup> Պ. Մուրադյան, Հայաստանի վրացերեն արձանագրությունները, Երևան, 1977, էջ 113:



գատացանք Մկրտիչ քահանայի բնակարանումն, և վերջացրինք մեք հաշիւները ժողովրդոց հետ:

Գիւղը բաղկանում էր 137 տուն Գայ բնակչօք և ունէր եկեղեցի յանուն սուրբ Կարապետի, հին և անձև 1831 թուին շինած, որոյ նորոգութեան մասին ևս յորդորեցի ժողովրդոցն, ոչք և խոստացան կատարել յառաջիկայ գարնանը: Եւ կատարեցին՝ շինելով եկեղեցին»<sup>1</sup>

Սմբատյանցի տեղեկությունները կարևորվում են մի շարք տեսանկյուններից: Ջրառատցիների նախնիները գաղթել են Արևմտյան Գայաստանի Ալաշկերտ գավառից առնվազն XIX դարի 20-ական թվականներին, նրանց առաջնորդել է Մելիք Շեկոն: Վերջինիս անվան հետ է կապվում գյուղի Ս. Կարապետ եկեղեցին, որն ըստ Սմբատյանցի «հին ու անձև» էր, շինված 1831թ.: Դատելով եկեղեցու որմների և կոթողների վրա պահպանված վիմագիր տվյալներից, եկեղեցին կառուցվել է շատ ավելի վաղ՝ 1628թ., իսկ Մելիք Շեկոն ոչ թե կառուցել է նոր եկեղեցի, այլ վերակառուցել կամ նորոգել է հինը: Սմբատյանցի այցելության ժամանակ Ս. Կարապետ եկեղեցին, թերևս արդեն կիսավեր էր և հոգևոր առաջնորդը հորդորում է գյուղի բնակիչներին՝ նորոգելու եկեղեցին, ինչը և կատարվել է:

Այսպիսով եկեղեցու շինարարական ժամանակագրությունը առայսօր անցել է առնվազն երեք փուլ՝ 1628թ. հիմնադրած, 1831-ին և 1880-ական թվականներին՝ վերակառուցում կամ նորոգում:

Եկեղեցու հարավային մուտքի ճակատակալին փորագրված է կառույցի հիմնադրման վկայագիրը, համաձայն որի ՌՉԷ (1628) թվականին Աստվածատուր երեցը իր հոգու և բոլոր քրիստոնյաների փրկության համար կառուցել է սույն եկեղեցին: Չնայած վիմագրում նշված է «շինեցի», սակայն դժվար է միանշանակ պնդել, որ Աստվածատուրը հիմնել է այն: Եկեղեցու շրջապատում և պատերի մեջ ագուցված ավելի վաղ թվագրվող խաչքարերի և տապանաքարերի առկայությունը փաստում է տեղում առավել հին եկեղեցական կառույցի գոյությունը: Սակայն ակներև է, որ այսօրվա եկեղեցու հատակագծային ճարտարապետական հորինվածքը, շինարվեստը բնորոշ են XVI-XVIII դարերին:

<sup>1</sup> Մեսրոպ Սմբատյանց, Տեղագիր Գեղարքունի Տոլվագարդ գաւառի, որ այժմ էր Բայագիտ գաւառ, Վաղարշապատ, 1895, էջ 345-346:

Առնվազն XVIII դարից Ռնդամալ անվանումը, Սմբատյանցի մեկնությամբ, ծագել է քրդերենից «Գեղեցիկ տուն»: Սա, ամենայն հավանականությամբ ուշ շրջանի ժողովրդական անվանակոչում է, կապված, թերևս գյուղում (ավանագյուղ) բարեկարգ ու բարետեստների առկայության հետ:

Կարծում ենք, որ գյուղի հին՝ միջնադարյան անունն է վկայված Կեչառիսի վիմագրերից մեկում: Վանքի գավթի հյուսիսային պատին, ներքուստ, կարմրաներկով գրված է պատմաաղբյուրագիտական կարևոր նշանակություն ունեցող մի ընդարձակ վկայագիր: 1226թ. Բջնիի վանքի թեմակալ առաջնորդ, եկեղեցական հայտնի գործիչ Վանական եպիսկոպոսը Կեչառիսի առաջնորդ հայր Գամազասպի և մյուս եպիսկոպոսների հետ «սահմանեցաք ժողովուրդ Կեչառուաց սբ. Լուսաւորչին»: Սա թեմահաստատ փաստաթուղթ է, որը սահմանում է վանքին հարկատու գյուղերի ցանկը: Վիմագրում նշված մի շարք բնակավայրերի շարքում հիշված է նաև «Յոռոմտամալ» գյուղը: Ինչպես տեսնում ենք այս տեղանունը հնչյունական որոշակի աղերսներ ունի Ռնդամալ կամ Ռնտամալ գյուղանվան հետ: Յոռոմտամալ տեղանունը ստեղծվել է երկու բառարմատների միացումից: «Յոռոմ» բառը հայոց մեջ օգտագործվել է հունադավան (թերևս նաև քաղկեդոնական իմաստով), «Տամալ»-ը մեր բառարաններում մեկնված է «տանիք (ճեմելիք ի վերայ տան)», «հարթ տանիք, կտուր», լատիներեն domus-տուն, պարսկերեն՝ տամալ-տան կարասի և այլն: Նշված բացատրությունները միանգամային հարիր են թվում տեղանվանակերտ բառարմատ լինելու համար, այսինքն հարթ տանիք կամ կտուր (հարմար ճեմելու համար) ունեցող հունադավանների բնակավայր: Այս վարկածի հավաստիությունը, թերևս, կարող է կասկած հարուցել մի հանգամանքի նկատառությամբ՝ հունադավան բնակչություն ունեցող գյուղը դժվար թե ներառվեր լուսավորչական հավատի օրրան Կեչառիսի վանքի թեմին ենթակա բնակավայրերի շարքում: Չնայած հնարավոր է, որ գյուղն ավելի վաղ ունենալով այդօրինակ անվանում հետագայում՝ XIII դարում, բնակեցվել էր հայոց եկեղեցու հավատը դավանող բնակչությամբ:

Եթե այս տեղանվան առաջացման և բնակիչների դավանանքի հետ դրա առնչության հարցերը լրացուցիչ ստուգաբանությունների ու հավաստման անհրաժեշտություն ունեն (նաև մերժվելու նկատա-



ռունով), ապա Հոռոմտամալ-Ռնդամալ աղերսը մեզ միանգամայն համոզիչ է քվում:

Ջրառատի Ս. Կարապետ եկեղեցուն, նրա պատմությանն ու վիճակագրությանը մեր սույն անդրադարձը պայմանավորվեց ոչ միայն այն հանգամանքով, որ հուշարձանը մտնում է մեր մասնագիտական հետաքրքրությունների պատմաաշխարհագրական ոլորտում, այլև մի կարևոր դիպվածի առնչությամբ: Այսօրվա գյուղի հիմնադիրները հիշված Մելիք Շեկոյի տոհմի մերօրյա շառավիղները ցանկություն և նախածեռնություն են հանդես բերել վերականգնելու իրենց նշանավոր նախնու վերակառուցած եկեղեցին, բարեկարգելու շրջակայքը և գյուղում ունենալու գործող եկեղեցի: Այս գործի սկզբնավորման անհրաժեշտ նախապայման էր հուշարձանը փլատակներից և ավելորդ հողաշերտից ազատելը, այսինքն կատարել պեղման աշխատանքներ, ինչը և Հուշարձանների պահպանության գործակալության կողմից հանձնարարվեց մեզ:

2004թ. հոկտեմբեր ամսին հիմնական աշխատանքները կատարվեցին եկեղեցու հարավային և արևելյան հատվածներում: Հարավային կողմում բացվեցին պատի հիմքերը, մոտ չորս մետր լայնությամբ խրամատի մեջ: Արևելյան կողմում հեռացվեց պատի վերնամասի փլուզմամբ առաջացած հողաթումբը: Մաքրման աշխատանքների շնորհիվ հայտնաբերվեցին մի քանի արձանագրակիր տապանաքարեր: Հնագիտական գտածոները չափազանց սակավ են, հիմնականում ուշ շրջանի խեցեղեն անոթների բեկորներ:

Եկեղեցու շրջակայքում և պատերի մեջ ագուցված պահպանվել են բազմաթիվ խաչքարեր:

Առանձնակի հետաքրքրություն և արժեք են ներկայացնում եկեղեցու հյուսիս-արևելյան ավանդատան հյուսիսային պատի մեջ շարված երկու խաչքարերը, որոնք իրենց բուսական զարդամոտիվների հարդարանքով բնորոշ են IX-X դարերին: Խաչքարային արվեստի ուշագրավ նմուշ է XIII դարով թվագրվող խաչքարը, որի մի կեսը ագուցված է հյուսիսային պատի մեջ, ներքուստ, մյուսը խորանի կիսաշրջանի հյուսիսային պատի մեջ: Եկեղեցու պատերի մեջ արտաքուստ և ներքուստ զետեղված են խաչքարերի և տապանաքարերի բազմաթիվ բեկորներ:

Եկեղեցու արևելյան պատի տակ կանգուն, ընկած և տեղաշարժված վիճակում առկա են տասից ավելի խաչքարեր և մեծ թվով հարթ ու օրորոցածև տապանաքարեր: Վերջիններից մի քանիսը հարդարված են ուշագրավ կենցաղային քանդակներով և ունեն վկայագրեր: Հիշատակագրային արձանագրություններ ունեն նաև խաչքարերից մի քանիսը:

Եթե եկեղեցու արևելյան կողմի գերեզմանոցի տապանաքարերը՝ վիճագրերով և հարդարանքով թվագրվում են XVI-XX դարեր, ապա խաչքարերի մեջ կան IX-X, XII-XIII, և ավելի շատ XVII-XVIII դարերի նմուշներ: Այստեղ աչքի է ընկնում կիսամշակ քարաբեկորի մեջ ագուցված, քանդակագործական արհեստավարժ հարդարանքով խաչքարը՝ կանգնեցված տեր Սարգսի կողմից եկեղեցու կառուցման թվականին՝ 1628թ.:

Ստորև ներկայացնում ենք Ս. Կարապետ եկեղեցու պատերին և տապանաքարերի ու խաչքարերի վրա փորագրված արձանագրությունները, որոնք, հիմնականում, առաջին անգամ են ներառնվում շրջանառության մեջ:

1. Եկեղեցու հվ մուտքի բարավորին, 3 տող.  
ՇՆՈՐՀԻՒՆ ԱԾ, ԵՍ ԱԾԱՅՏՈՒՐ ԵՐԵՏ ԸՆԻՆԵՑԻ  
ՅԵԿ/ԵՂԵՅԻՍ Ի ՓՐԿՈՒԹԷ ՀՈԳՈ ԻՄՈՅ ԵՒ  
ԱՄԼԵՆԱՅՆՂ ԶՐԻՍՏՈՆԵԻՑ ԹՎԻՆՂ ՌԴԷ (1628):
2. Տապանաքարի բեկոր, ագուցված եկեղեցու հվ պատի մեջ, մուտքի վերևում, 2 տող.  
ԱԼՅՂ Ե ՏԱՊԱՆ ՏՐ ՄՈՎՍԷՄԻՆ/ԹՎԻՆՂ  
ՌԵԿ (1711):
3. Տապանաքար եկեղեցու հվ պատի տակ, 5 տող.  
ԱՅՍ Ե ՀԱՆԳԻՍ/ՏՐ ՂԱԶ/ԱՐԻՆՂ  
ԹՎԻՆՂ ՌԵԻԸ (1679):  
3. Խաչքար եկեղեցու աե կողմում, քիվին, 2 տող.  
ՍԲ ԽԱՉՍ ԲԱՐԵԽԱԲՍ ՂՈՎԿԱՍԻՆ/ԵՒ ՄԱՆԻ-  
ՇԱԿԻՆ ԹՎԻՆՂ ՌԶ (1557):
4. Խաչքարի բեկոր եկեղեցու աե կողմում, քիվին, 2 տող.  
ՍԲ ԽԱՉՍ ԲԱՐԵԽԱԲՍ ՄԿՐՏԻ/Չ ՍԱՐԿԱԲԱԶՐԻՆՂ,  
ԹՎԻՆՂ Ռ...:



*Ծանոթություն.* թվականի հատվածը եղծված է, ուրվագծվում է Ռ-ի վերին կորը: Խաչքարը բնորոշ է XVI-XVII-րդ դդ:

5. Խաչքար եկեղեցու առ կողմում, ագուցված պատվանդանին, քիվին՝ 1 տող, քիվի ստորին հատվածում՝ 1 տող, վարդյակի անկյուններում.

ՍԲ ԽԱՉՍ ԲԱՐԵԽԱԽՍ Է ՏՐ՝ ՍԱՐԳՍԻ/

ԹՎԻՍ ՌՅԷ (1628)/ ՏՐ ԱԾ ՔՍ ՈՍ:

*Ծանոթություն.* Խաչքարի վրա արձանագրված է մի ուշագրավ երևույթ. խաչաքների հատույթի ձախ ստորին հատվածում փորագրված է պարսկերեն կարճառոտ գրություն: Վերծանությամբ պարզվեց, որ կրկնված է խաչքարի կանգնեցման թվականը:

6. Տապանաքար, օրորոցածև, եկեղեցու առ կողմում, հվ միտին, կենցաղային հորինվածքի ամ մասում, 3 տող.

ԱՅՍ Է ՀԱՆ/ԳԻՍՏ ՉՈՒՔԻՆ/ԱՆԻՆ, ԹՎԻՆ/

ՌՃԻԷ (1678):

7. Տապանաքար, օրորոցածև, եկեղեցու առ կողմում, կենցաղային հորինվածքի կողերին, 3 տող.

ԹՎԻՆ/ՌՃԻԷ (1678), ԱՅՍ Է ՀԱՆ/ԳԻՍՏ ՈՉԹԱՐԴԵԿԻՆ:



Եկեղեցու հարավային հատվածը պեղումներից հետո



Եկեղեցու արևելյան հատվածը պեղումներից հետո



Պետրոսյան Յ. (ԳՄԻ)  
Կիրակոսյան Լ. (ԵՏԵԳ)  
Սաֆարյան Վ. (ԱԳԲ)

### ՀԱՆՂԱԲԵՐՂԻ ՎԱՆՔԻ 2004թ. ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

2004թ. «Երկիր» հասարակական կազմակերպության ֆինանսավորումով հնագիտական արշավախումբը (ղեկ. պ.գ.թ. Համլետ Պետրոսյան), պեղումներ է իրականացրել ԼՂՀ Քարվաճառի տարածքում՝ Հանդաբերդին կից գտնվող վանքային համալիրում:<sup>1</sup> Պեղումների հիմնական գիտական նպատակն էր աղբյուրագիտական բավարար հիմք ստեղծել՝ Վերին Խաչենի նորահայտ այս վանքային համալիրի բազմակողմանի պատմամշակութային հետազոտության համար: Գործնական նպատակն էր մաքրել համալիրի ավերակները բուսականությունից, փլուզման հետևանքով առաջացած հողի և քարի հզոր լիցքից, վավերացնել ճարտարապետորեն կարևոր բոլոր մանրամասները և հիմք ստեղծել համալիրի մասնակի վերականգնման ու ամրակայման համար:

Վանքը տեղադրված է Լևոնագետի աջ ափի երկարությամբ ձգվող անտառապատ լեռնաբազկի մի գոգավորության կենտրոնով դեպի գետը ձգվող հովտի բարձրադիր ափի եզրին, ընդարձակ բացատի հարավ-արևելյան կողմում, Հանդաբերդ ամրոցից մոտ մեկ կիլոմետր հյուսիս-արևելք: Համալիրից արևմուտք և հյուսիս փոփոխ է ընդարձակ գերեզմանոցը, արևելք և հարավ՝ լեռնալանջն ի վեր դի-


<sup>1</sup> Վանքային համալիրի նկարագրությունը տես *Կարապետյան Ա.*, Հայ մշակույթի հուշարձանները խորհրդային Ադրբեջանին բռնակցված տարածքներում, Երևան, 1999, էջ 26-31:

տելի են շինությունների և առանձին պատերի հետքեր: Խորհրդային տարիներին վանքին կից ընդարձակ բացատը ծառայել է որպես է խոտհարք: Վանքային համալիրի գրեթե կենտրոնով անց է կացվել մոտ 4մ լայնությամբ ավտոճանապարհ, որն ավերել է համալիրի համապատասխան հատվածը, լիովին բացել հիմնական խմբի կառույցների հյուսիսային հիմքերը: Դեպի մոտակա անտառները տանող ավտոճանապարհը անց է կացվել պատմական գերեզմանոցի մեջտեղով, որի հետևանքով ավերվել է մի ընդարձակ հատված, իսկ որոշ խաչքարեր ու տապանաքարեր գլորվել են ծորը:

Այսօր վանքային համալիրն իր կազմում ներառում է շինությունների երկու խումբ (նկ. 1): Դրանցից առաջինը բաղկացած է կենտրոնական եկեղեցի-մատուռից, նրան կից երկու ավանդատներից, ժամատնից, զանգակատնից, տապանաքակից (նկ. 2), իսկ երկրորդը, որը տեղադրված է առաջինից մոտ 10մ հյուսիս, մատուռից, ամրապատից և տապանաքակից: Ըստ շինարարական արձանագրության համալիրի շինությունների հիմնական մասը կառուցվել է 1276թ.՝ Դավիթ վարդապետի կողմից: Ճարտարապետական քննությունը հիմք է տալիս եզրակացնել, որ վանքը ստեղծվել է տեղում գոյություն ունեցող հին մատուռ-եկեղեցու շուրջը՝ հաջորդաբար ավանդատների, մատուռների, ժամատան և ի վերջո զանգակատան հավելման միջոցով: Փաստորեն ժամատունը նաև մի յուրօրինակ միջանկյալ ծավալ է, որն իրար է կապում իր շուրջը տեղադրված տարբեր կառույցները: Այն ընդհանուր գծերով կրկնում է հայկական ժամատուն-զավիթներին բնորոշ «կեղծ գմբեթային» ծածկի հորինվածքը, որտեղ համարյա վերացած է գմբեթի թմբուկը:

Հյուսիսային՝ առանձնակի կանգնած մատուռ-եկեղեցին հատակազծային և ծավալատարածական հորինվածքով հարում է ներքուստ խաչաձև, արտաքուստ ուղղանկյունաձև թաղածածկ փոքր եկեղեցիների տիպին: Ակնհայտ է զանգվածեղ պատերի, թաղածածկի և ներքին սահմանափակ տարածության անհամապատասխանությունը: Յուրօրինակ են հյուսիսային և հարավային խաչաթևերի մեջ ստեղծված ուղղանկյունաձև փոքրիկ ավանդատները, որոնք իրագործվել են հին, շքեղ պատկերաքանակներ կրող խաչքարերի օգտագործումով:





Նկ. 1. ՔԱՆԱԿՐ ԴԱՏԱՎԱԿՈ Մ 1:200



Նկ. 2. Համալիրի հիմնական խումբը զանգակատնով հանդերձ պեղումներից հետո. տեսքը հյուսիսից:

Կառույցների երկու խմբերն էլ արևելք - արևմուտք առանցքի մկատմամբ ունեն զգալի շեղում՝ հիմնական խումբը շեղված է  $16^{\circ}$ , հյուսիսային մատուռը՝  $22^{\circ}$ :

Վանքային համալիրը կառուցապատման նման ընթացքով ու հորինվածքով, ճեղքված և անտաշ քարերի ու կրաշաղախի օգտագործմամբ իրագործված շարվածքով, առանձին կառույցների հորինվածքում և շարվածքում պարզ և ժողովրդական ձևերի լայն կիրառումով առանձնանում է միջնադարի վանքային դասական համալիրներից: Այն առատ նյութ է տալիս մանրամասն ուսումնասիրելու համար XIII դարի երկրորդ կեսում և XIV դարի առաջին կեսում՝ Հայաստանի համար խիստ ծանր քաղաքական-տնտեսական պայմաններում մշակութային-կառուցողական կյանքի որոշ առանձնահատուկ կողմերը:

Պեղումներն ընթացել են ըստ շինությունների ծավալային-հատկագծային ուրվագծերի, իսկ ցանցային համակարգն օգտագործ-



վել է հնագիտական գտածոների վավերացման համար: Մոտ մեկ ամիս տևած աշխատանքների հետևանքով լիովին պեղվել է հյուսիսային մատուռ-եկեղեցին, նրան կից ամրապատը և տապանաբակի մի հատվածը: Կենտրոնական խմբում պեղվել է զանգակատան հիմնական մասը, հարավ-արևելյան ավանդատանը կից պատմական բակի մաքրումով բացվել է նրան հարավից կից տապանաբակի մի հատվածը՝ չորս մեծադիր սրբատաշ տապանաքարերով: Լիովին բացվել է ժամատան հարավային պատը դրսից և ներսից, հայտնաբերվել է նոր մուտք՝ հարավ-արևելյան ավանդատան հետ միացման հատվածում, ինչպես նաև հարավային պատի երկու խորշերը: Սակայն առաջին խմբի շինությունների հիմնական մասը դեռ մնում է չպեղված: Անհրաժեշտ է իրականացնել ամրակայման որոշ աշխատանքներ. ամրացնել ժամատան տանիքի փլուզվող հատվածը, ավանդատների և մատուռների թաղերը, հեռացնել ժամատան ներսում փլուզված տանիքի զանգվածները: Այս աշխատանքները նախատեսվում են կատարել 2005թ., որը հնարավորություն կտա շարունակել պեղումները:

Պեղումների հիմնական արդյունքերից առաջնային կարելի համարել XII-XIV դարերի մի շարք նոր արձանագրությունների, խաչքարերի և տապանաքարերի գյուտը: Համալիրի ողջ տարածքից հավաքվել են կղմինդրների հազարից ավելի բեկորներ, որոնք ժամանակին օգտագործվել են տանիքների ծածկի մեջ: Խիստ ուշագրավ է, որ գտնվել են նաև արձանագրագիր կղմինդրների մի շարք բեկորներ, ինչը հնարավոր է դարձնում փաստել հայերեն գրի օգտագործման տարածվածությունը նաև զուտ կենցաղային մակարդակով: Արձանագրական որոշ նորագյուտ նյութեր էլ թույլ են տալիս էլ ավելի ընդարձակել լեռնագավառի անձնանվանական համակարգը: Հատուկ նշելի է խաչքարային մի պատկերաքանդակի գյուտը, որը ներկայացնում է զինված հայ հեծյալ ռազմիկին, որը մի ձեռքում բռնել է նիզակը, իսկ մյուսով՝ գինու գավաթը (Նկ. 3.): Արցախյան խաչքարերի մի շարք քննություններով արդեն իսկ վեր է հանվել հայրենիքի համար կռվող զինյալի լայն պաշտամունքը,<sup>1</sup> և ահա այս գյուտը գալիս է վկայելու, որ այն տարածում է ունեցել նաև Վերին

<sup>1</sup> *Петросян Г. К* интерпретации группы сюжетных рельефов на хачкарах Арцаха, ИФЖ, 1997, N 2, с. 164-171. *Պետրոսյան Գ.*, Ռազմիկի կերպարը և կռվի թեման Արցախի խաչքարային պատկերաքանդակում - «Ազգ. պետություն, բանակ» գիտաժողով, Ձեկուցումների հիմնադրույթներ, Երևան, 1997, էջ 78-79:

խաչենում: Նշելի է ընդհանրապես խաչքարերի հորինվածքային բազմազանությունը: Ուշագրավ է, որ հին խաչքարերը լայնորեն օգտագործվել են որպես հարմար շինաքար՝ նրանցով շարվել կամ ամրացվել են կառուցվածքային առումով պատասխանատու հատվածները, ստեղծել պատերն ամրակայող հորիզոնական գոտիներ:



Նկ. 3. Հեծյալ ռազմիկ. խաչքար, 12-րդ դ. վերջ:

Հայտնի է, որ միջնադարյան վանքերը վարում էին սեփական ինքնաբավ տնտեսություն: Այս տեսակետից հետաքրքիր է տնտեսական կենցաղի հետ կապ ունեցող զանազան իրերի, նրանց մասերի կամ բեկորների գյուտերը: Պեղումները տվել են քարից, մետաղից, ապակուց և կավից պատրաստված մի շարք գտածոներ, որոնք զգալի չափով հարստացնում են Արցախի նյութական մշակույթի մասին մեր պատկերացումները: Մետաղյա իրերի շարքում կարելի առանձնացնել տարատեսակ բեռները, կողպեքի բանալին, ճարմանդը, ծիու պայտը (Նկ. 4): Խեցեղենի իրերի մեջ մեծ թիվ են կազմում կարասների, խոհանոցային կճուճների և թասերի բեկորները: Այս ամենը վկայում են, որ վանքն ունեցել է նաև զուտ բնակելի-տնտեսական հատված, որից վերգետնյա հետքեր, ցավոք, չեն



պահպանվել: Պեղումները տվել են նաև կայծքար հիշեցնող քարի մի քանի բեկորներ: Ուշագրավ է, որ դրանց անալիզները՝ կատարված ԳՅ ԳԱԱ երկրաբանության ինստիտուտում, վկայում են, որ, ըստ երևույթին, մենք գործ ունենք հալեցրած կայծքարի հետ, ինչը կարելի էր ստանալ միայն արհեստական ճանապարհով՝ այն էլ բարձր ջերմաստիճանի տակ:

Վանական համալիրի հետազոտական աշխատանքներն ավարտելուց հետո պեղածո իրերը կհանձնվեն պատվիրատուի կողմից ստեղծվելիք և ԼՂՀ կառավարության կողմից համապատասխան հաստատագրում ստացած թանգարանային կազմակերպությանը:



Սկ. 4. Պեղումներից հայտնաբերված մետաղյա իրերը:

Պետրոսյան Դ. (ԴԱԻ)

## ՇՈՒՇԻ ԴՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԵՏԱՋՈՏՈՒԹՅԱՆ ԴԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2004թ. մայիսին «Շուշի» ֆոնդի նախաձեռնությամբ, «Երկիր» և «Երկիր ավետյաց» կազմակերպությունների ֆինանսական ու տեխնիկական աջակցությամբ դաշտային հնագիտական դիտումների միջոցով կազմվել է Շուշիի և նրա անմիջական շրջակայքի հնագիտական հուշարձանների պատկերազարդ ցուցակն ու դրանց տեղաբաշխման նախնական քարտեզը:<sup>1</sup> Ցուցակը ներառում է պալեոլիթից մինչև XX դարի սկիզբն ընդգրկող մոտ 500 հուշարձան, ինչն էլ հնարավորություն է տալիս կանխանշել բնակավայրի և նրա շրջապատի հնագիտական հետազոտության հիմնախնդիրները:

Շուշիի հնությունների հետազոտությունը, նրանց բնութագրերի հստակեցումն ու մանրամասնումը նախ և առաջ ունի հստակ արտահայտված գիտական նպատակ: Շուշիի հին պատմության, հիմնադրման, կառուցապատման, նրա առանձին հուշարձանների էթնիկ պատկանելության խնդիրները մեկ անգամ չէ, որ հայտնվել են Ադրբեջանի զավթողական նկրտումների «հիմնավորումների» ցանկում: Եթե մինչև Շուշիի ազատագրումը տարածքի հայկական պատկանելությունը հստակորեն ցուցելու համար հայ հետազոտողները ստիպված էին բավարարվել առավելապես զրավոր աղբյուրների և

<sup>1</sup> Դուշարձանների և նյութերի բնութագրումներն ու թվագրությունները, լուսանկարները կատարել է հեղինակը: Դաշտային աշխատանքներին մասնակցել են նաև «Շուշի» ֆոնդի համանախագահ Բակուր Կարապետյանը, Արցախի պետական համալսարանի դասախոս Վարդգես Սաֆարյանը, Շուշիի պատմաերկրագիտական թանգարանի տնօրեն Աշոտ Դարությունյանը: Քարտեզի համակարգչային մշակումն իրականացրել է Ժիրայր Ավետիսյանը: Դատուկ շնորհակալություն «Երկիր» և «Երկիր ավետյաց» կազմակերպություններին՝ ի դեմս Սևակ Արծրունու և Վահրամ Գևորգյանի:



նոր ժամանակների (XVIII-XIXդդ.) իրողությունների քննությամբ, ապա այսօր կարող են լայնորեն օգտագործել հնագիտական, վիճագրական, տեղագրական բնույթի բազմաթիվ աղբյուրները, որոնք ֆիզիկապես մատչելի են դարձել միայն Շուշիի ազատագրման շնորհիվ:

Հնությունների հետազոտության երկրորդ կարևոր նապատակն է վերհանել այդ եզակի բնամշակութային համալիրի ամբողջական հիմնապատկերը և այն դարձնել քաղաքի ու շրջապատի ապագա տուրիստական-հանգստային կերպարի հիմնական ու գրավիչ բաղկացուցիչներից մեկը: Հին դամբարանների գաղտնիքներում խորամուխ լինելը պեղումներին անմիջապես մասնակից լինելու միջոցով, ակցելությունները նախնադարյան քարայրեր, վանքային համալիրներ ու ջրաղացներ, ճամփորդությունները ժայռերի մեջ փորված հին ճանապարհներով ու կածաններով՝ համապատասխան նախապատրաստվածության դեպքում, կարող են դառնալ տուրիստական հանգստի հիմնական ձևերից մեկը:

Աշխարհագրորեն Շուշիի սարահարթն իրենից ներկայացնում է տեղանքում հստակորեն առանձնացող, հարավից դեպի հյուսիս կտրուկ անկումներով իջնող կրաքարային ու ավազաքարային ապարներից կազմված բնական տափարակների մի համակարգ՝ հարավ-արևելքից, հյուսիս-արևելքից և հյուսիսից եզերված Կարկառ գետի երկու հիմնական վտակներով: Այս ժայռեղեն տարածքը զարմանալիորեն հարուստ է տարրեր ժամանակների պատկանող նյութական մշակույթի մնացորդներով: Նրա ժայռերում տեղադրված քարանձավները դեռ մարդկության պատմության վաղմջական ժամանակներում հրապուրել են նախամարդկանց, որոնք այստեղ հիմնել են իրենց կայանները: Արդյունքում, այսօր այս քարայրերի հիմնահողային նստվածքներն ունեն պալեոլիթյան կենսընթացի և, ի մասնավորի, գործիքների ու նախապատրաստուկների նշանակալից հավաքածուներ: Հիմնահողն այս քարանձավներում համարյա մնացել է անխաթար, ուստի ապագա պեղումները կարող են երևան բերել հին կայանատեղերի ու աշխատանքային գործիքների՝ նախնական, անխաթար պատկերը: Հավանական է, որ այս քարայրերի վերին շերտերը կարող են երևան բերել նաև մեոլիթյան, էնեոլիթյան և վաղբրոնզեդարյան մշակույթների հետքեր: Շատ ավելի անսպասելի

էր սարահարթի տարրեր հարթակներում բրոնզեդարյան և երկաթեդարյան մի շարք դամբարանների հայտնաբերումը՝ ի դեմս ավելի քան երկու հարյուր դամբանաթմբերի, կրոնլեխների և կուրգանների: Նախնական դիտարկումները ցույց են տալիս, որ ավելի մեծ խումբ են կազմում ուշ բրոնզեդարյան և վաղերկաթեդարյան թաղումները (մ.թ.ա. XV-Vդդ., նկ. 1), որոնք որպես կանոն ուղեկցվում են թաղման հարուստ



Նկ. 1 Դամբարանների խումբ Շուշիի մերձակայքում, մ.թ.ա. II-I հազ.:

գույքով (նկ. 2): Դա մի ժամանակ էր, երբ ընթանում էր հայ ժողովրդի կազմավորման վերջնական փուլը: Խիստ ուշագրավ է հատկապես Շուշիի հարթակի ժայռաբլուրներից մեկի վրա կիկլոպյան ամրոցի հայտնաբերումը: Այստեղ պահպանվել են հսկա քարերով շարված պարսպի, կացարանների և դամբարանների հետքեր: Ամրոցի երկրորդ, ավելի ընդարձակ պարիսպն արդեն շարված է շատ



ավելի մանր և կանոնավոր քարերով, ինչը հիմք է տալիս ենթադրել, որ այն գործել է ավելի ուշ շրջաններում: Արցախի անտառային տեղանքը, որպես կանոն, դժվարացնում է նման բերդ-բնակատեղիների վավերացումը, և այս հուշարձանը ենթակա է մանրամասն հետազոտության: Կարծում ենք, որ հիշյալ հուշարձանների ուսումնասիրությամբ՝ վերականգնվելիք պատմամշակութային կերպարը հնարավոր կդարձնի, որ հայերի կազմավորման խնդիրները, լեռնաշխարհի այս հատվածում, դրվեն լուրջ գիտական հիմքերի վրա:



Նկ. 2 Պատահական գտածո, մ.թ.ա. VI-V դդ.:

Առայժմ խիստ սակավ են ներկայացված հելլենիստական և անտիկ հուշարձանները (մ.թ.ա. III - մ.թ. III դդ.): Կարծում ենք հիմնական պատճառն այն է, որ այդ ժամանակների հուշարձանները, որպես կանոն, վերգետնյա ավելի թույլ նշաններ են ունենում: Այսուհանդերձ, կարելի է նշել՝ ուշ անտիկ խեցեղենի հայտնաբերման փաստը «Ավանի կարան» քարանձավում, նույն ժամանակի քարակղային դամբարանադաշտի առկայությունը Քարին Տակ գյուղում: Տեղեկություններ կան նաև մի քանի վայրերում կարասային թաղումների վերաբերյալ, որոնք դեռ ենթակա են ստուգման և ճշգրտման:

Վաղմիջնադարյան մշակույթը ներկայանում է երկու ընդարձակ դամբարանադաշտերով, ընդ որում, դրանցից մեկը՝ Նոր Արմենավանի

դամբարանադաշտը, դեռ 1988 թ. ենթարկվել է մանրամասն հնագիտական հետազոտության:<sup>1</sup> Ջարգացած միջնադարի հուշարձանները ներկայանում են մի քանի գյուղատեղիներով, եկեղեցական կառույցներով, խաչքարերով և տապանաքարերով, վիմագրերով: Տեղանքի հայկական պատկանելությունն ակնհայտորեն փաստելու առումով սրանք խիստ կարևոր հուշարձաններ են, և դրանց մանրամասն հետազոտությունը, արդյունքների շուտափույթ հրատարակումը առանձնակի կարևորություն ունեն: XII-XIIIդդ. վերաբերող խաչքարեր են գտնվել ինչպես բուն Շուշի քաղաքի տարածքում (Նկ. 3), այնպես էլ նրան անմիջապես հարող գերեզմանոցներում ու շրջակայքում (Նկ. 4):



Նկ. 3. խաչքարի բեկոր՝ գտնված Շուշիի բանտի տարածքից, XII-XIIIդդ.:

<sup>1</sup> Պետրոսյան Դ., Նոր Արմենավանի դամբարանադաշտը - Մշակույթ, 1989, թիվ 1:





Նկ. 4. Խաչքար Շուշիի ժայռահարթակի ստորոտում, XII-XIII դդ.:

Գաղտնիք չէ, որ Շուշիի պատմության ամենաքիչ հետազոտված և ամենաշատ վեճեր հարուցող փուլերից մեկը նրա ուշմիջնադարյան հատվածն է՝ հատկապես XVII դարը և XVIII դարի առաջին կեսը՝ ժամանակաշրջան, որը նախորդել է թուրք Փանահի Ղարաբաղ թափանցելուն և Շուշին տիրանալուն: Տասնամյակներ շարունակ իրենց ազգի զավթողական նպատակների համար «պատմական» հիմնավորումներ ստեղծող ադրբեջանցի հեղինակները Շուշիի հիմնադրումը վերագրել են Փանահին, հատուկ շեշտելով, որ մինչև նրա հայտնվելը Շուշի տարածքն անբնակ ու անկառույց մի տափարակ էր: Ինչն էլ, իր հերթին, ըստ իրենց, նշանակում էր, թե Շուշին հիմնադրվեց որպես ադրբեջանական քաղաք: Հարկ է նկատի ունենալ, որ խորհրդային տարիներին, ըստ էության, դառնալով Շուշիի տերն ու տիրակալը, ադրբեջանցիները սխստեմատիկորեն վերացրել

են կամ վերանորոգման անվան տակ «վերակառուցել» են քաղաքի հայկականությունը հիմնավորող տեղական փաստերը՝ արձանագրություններ, պաշտպանական և բնակելի շինություններ: Այս ամենը ստիպում է առանձնակի ուշադրություն դարձնել հենց հիշյալ շրջանի մշակութային փաստերի փնտրտուքներին, դրանց վերականգնման ու մեկնաբանության աշխատանքներին: Քաղաքում արդեն իսկ վավերացվել են այն տարածքները, կառույցները կամ նրանց առանձին մանրամասները, որ ենթակա են այս հայեցակետով հնագիտական, ճարտարապետական ու վիճաբանական մանրամասն հետազոտության:

Ի վերջո, Շուշիի պատմության ամենափնտենսիվ՝ XVIII դարի երկրորդ կեսի - XX դ. առաջին երկու տասնամյակների պատմամշակութային կերպարի վերականգնման համար զգալի նշանակություն ունեն նաև քաղաքի տարածքում վավերացված տնտեսական-արտադրական կառույցների ու բնակելի առանձին համալիրների հետազոտությունը:

Նկատի ունենալով վերոշարադրյալը, մասնավորաբար՝ Շուշիի հետազոտության առաջնահերթ նպատակներն ու վավերացված հուշարձանների ժամանակագրական, գործառութային ու մշակութային նախնական հիմնապատկերը, նպատակահարմար է Շուշիի և նրա շրջապատի պատմահնագիտական հետազոտությունն իրականացնել հետևյալ ենթաժրագրերի միջոցով.

1 *Շուշիի և շրջապատի հնագիտական հուշարձանների հետազոտություն,*

- 1.1 Շուշիի և շրջակայքի պատմահնագիտական հուշարձանների լիակատար ցուցակի կազմում, քարտեզագրում, լուսանկարում, անձնագրավորում:
- 1.2 Վաղ և անտիկ դամբարանների, ուշմիջնադարյան առանձին պաշտպանական կառույցների ու շինությունների պեղումների իրականացում:
- 1.3 Պեղածո նյութերի վերականգնում, հետազոտում, լուսանկարում և գրչանկարում:
- 1.4 Պեղումների արդյունքներին նվիրված գիտական շարադրանքի կազմում և հրատարակում:
- 1.5 Ծրագրի տևողությունը՝ 5 տարի:



2 Շուշիի և շրջապատի հայերեն, ռուսերեն և եվրոպալեզու վիճակագրերի հետազոտություն,

- 2.1 Վիճակագրերի տեղագրական վավերացում, հավաքում, լուսանկարում:
- 2.2 Գրչանկարների և տեքստերի կազմում:
- 2.3 Գրքի հրատարակում:
- 2.4 Ծրագրի տևողությունը՝ 2 տարի:

3 Շուշիի և շրջապատի կոթողային հուշարձանների հետազոտություն,

- 3.1 Խաչքարերի և տապանաքարերի քարտեզագրում, լուսանկարում և գրչանկարում:
- 3.2 Խաչքարերի և տապանաքարերի ծավալային-ճարտարապետական և հորինվածքների խորհրդաբանական-ինաստաբանական հետազոտություն:
- 3.3 Գրքի հրատարակում:
- 3.4 Ծրագրի տևողությունը՝ 2 տարի:

4 Շուշիի և շրջապատի արաբատառ վիճակագրերի հետազոտություն,

- 4.1 Վիճակագրերի տեղագրական վավերացում, հավաքում, լուսանկարում:
- 4.2 Գրչանկարների և տեքստերի կազմում:
- 4.3 Գրքի հրատարակում:
- 4.4 Ծրագրի տևողությունը՝ 2 տարի:

Այս հոդվածը հրատարակվել է 2003 թ. հունիսի 1-ին համարի «Հայաստանի հանրապետության համալսարանի տարեգրք»-ում, համար 1, 10-11 էջերով:

Բաբայան Ֆ.,  
ժամկոչյան Ա. (ՀԱԻ)

**ԵՐԵՎԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԻ ԲԱՑՎԱԾ  
ՍՏՈՐԳԵՏՆՅԱ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Երևան քաղաքի Հանրապետության հրապարակի ողջ տարածքում Լինսի հիմնադրամի միջոցներով 2003թ. կատարվել են բարեկարգման շինարարական աշխատանքներ: Վերին շերտը հեռացնելու ընթացքում բացվել են խոր փոսորակներ, քարե պատերի մնացորդներ, սև, կարմիր տուֆի մշակված սալիկներ, կղմինդրներ, կավանոթի բեկորներ, տուֆ քարից պատրաստված ջրատար խողովակներ:

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի հնագիտական ջոկատը՝ մասնակցությամբ Գր. Կարախանյանի, հեղինակների և Պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության գործակալության ճարտարապետ Ա. Հովսեփյանի, պեղումներ իրականացրեց տեղում: Կարճ ժամանակահատվածում հետազոտվեց բացված փոսորակներից միայն երեքը:

Հրապարակի և հարակից փողոցների ասֆալտի տակ պահպանվել էին անցյալ դարասկզբին քանդված շենքերի նկուղային հարկաբաժիններ: Դրանցից մեկը (պայմանականորեն A տարածքը) քառակուսի հատակագծով ընդարձակ կառույցի նկուղային մաս է (11x11մ<sup>2</sup>): 3.7մ բարձրությամբ, 4.4մ երկարությամբ, 0.8մ հաստությամբ ուղղաձիգ պատերի վրա պահպանվել են 0.9 և 1.1մ լայնքով պատուհաններ, որոնք ամփոփված են բարձր կամարների մեջ: Քառակուսի հատակագծով սրահի տարբեր բաժանմունքները ստեղծվել են խաչվող թաղերով ավարտվող միջնապատերի շնորհիվ (ՈՎ. 1, 2):



Չրապարակի շատրվաններին զուգահեռ 50մ դեպի արևմուտք (Ե տարածք), մոտավորապես 400մ<sup>2</sup>-ի վրա պեղվել են նմանատիպ շինություններ (նկ. 3): Վերջիններին հարավային պատերին կցված են 1մ լայնք ունեցող որմնամուկները, որոնք պահել են սենյակների մոտ 4մ բարձրություն ունեցող թաղակապ ծածկերը: Հատակը սալապատված է: Ինչպես նախորդ, այնպես էլ սույն շինությունների պատերը շարված են աղյուսի տեսքով մշակված սև և կարմիր տուֆ քարերի ներդաշնակ համադրությամբ: Պատերի վրայի կրաշաղախը պահպանված է 7սմ հաստությամբ: Կամարակապ պատուհանները տեղադրված են որմնամուկների աջ և ձախ կողմերում: Պատուհանների գոգերի դեպի ներս ընդգծված թեքությունը նախատեսված է ներսում արևի լույսի թափանցումն ապահովելու համար, հնարանք, որ հատուկ է հայկական եկեղեցական շինարարական արվեստում: Սենեկաշարերից № 4, 5 չեն պեղվել: Կիսով չափ հետազոտվել են 6 և 7-րդ կառույցները: Հասարակական և տնտեսական նպատակի ծառայող սենյակները 23մ երկարությամբ ձգվում են արևելք՝ հրապարակի ժամացույցի ուղղությամբ:

Կամարակապ, նմանատիպ շինություն բացվել է նաև «Արմենիա» հյուրանոցի շքամուտքի դիմաց, որը, սակայն ջրով լցված լինելու պատճառով հնարավոր չեղավ պեղել: Պեղված տարածքը ծածկվել է հողով և ավազով: Չրապարակում բացված կառույցները ներկայացնում են շինարարական արվեստի կարևոր ժամանակահատված, որ մեզանում քիչ է ուսումնասիրված:

Միջնադարյան աղբյուրներում Երևանը ներկայանում է իբրև գյուղաքաղաք, հատկապես վանքերին նվիրվող այգիների կապակցությամբ: Ուշ միջնադարում Երևանի մասին հիշատակում են արևմտաեվրոպական ճանապարհորդները: Ավելի մանրամասն դրանք տեղ են գտել Ֆրանսիացի ճանապարհորդ Ժան Բատիստ Տավերնիեի (1655թ.) և Ժան Շարդենի (1673թ.) մոտ, որոնք քաղաքի համայնապատկերում (նկ. 5) և հատակագծերում առանձնացել է քրիստոնյա հայերի բնակելի թաղը, երկու-երեք հարկանի քանդակազարդ քիվեր կրող, բարձր պատուհաններ ունեցող շենքերով և փողոցներով: Բուն քաղաքի կենտրոնն է եղել Շահար թաղամասը, որտեղ վաղ միջնադարից մինչև XIII-XVդդ. և ավելի ուշ՝ մինչև XXդ.

սկիզբը կառուցվել ու վերակառուցվել են ժամանակի ճարտարապետական ոճն ու ճաշակը կրող քարաշեն տներ:

Շինարարության համար օգտագործվել է տեղի բազալտը և տուֆը: Բնակիչներն այն անվանել են քավանդքար:

Մասնագիտական գրականության մեջ XV-XVIIդդ. դիտվել է իբրև հայկական ճարտարապետության, շինարվեստի անկման շրջան՝ կապված թուրքական և պարսկական տիրապետության հետ: Սակայն XVIIդ. երկրորդ քառորդից, հատկապես, Արևելյան Հայաստանում ստեղծված քաղաքական բարենպաստ պայմանների շնորհիվ հոգևոր և աշխարհիկ ճարտարապետությունը զգալի վերելք է ապրում, այդ թվում նաև քաղաքային բնակավայրերում (Կարին, Վան, Բաղեշ, Երևան, Գառնի, Ջուղա, Գյումրի և այլն): Տարանցիկ առևտրի կենտրոններում ձևավորվում է հայ քաղաքաբնակների դասը, որը բնականաբար, պետք է ապրեր ժամանակի պահանջներին համապատասխանող տներում: Նոր կառուցապատումը կատարվում էր օգտագործելով հայկական ճարտարապետության վաղ շրջանի ավանդույթները:

1679թ. ամռանը տեղի է ունենում մեծ երկրաշարժ, որի հետևանքով քանդվում է քաղաքի շինությունների մեծ մասը: Ջաքարիա Սարկավագի հաղորդմամբ հիմնահատակ են եղել բերդը պարիսպներով, եկեղեցիները, մզկիթները մինարեթներով, զեղեցկահարկ շինությունները: Դրանք, ըստ երևույթին, Տավերնիեի պատկերված շենքերն են, որոնց նկուղային սենյակները փրկվել են երկրաշարժից: Վերջինների մի մասը հետագայում մնացել են նորովի կառուցած կամ վերակառուցած տների տակ, ճարտարապետական մեկ ամբողջություն կազմելով նրանց հետ:

Հանրապետության հրապարակում բացված նկուղային սենեկաշարերից մեկն իր վրա կրում է հետագա ժամանակներում կատարված վերանորոգումների հետքերը: Քաղաքի գլխավոր հատակագծի կենսագործմանը զարկ է տրվել 1862 թվից: Ըստ նախագծի բացվել է Աստաֆեվի փողոցը (այժմ Արվյան), փողոցին զուգահեռ՝ այժմյան Մաշտոցի, Տեր-Գաբրիելյանի, Տերյանի, Նալբանդյանի և Ալավերդյանի համակարգը: Չրապարակի վրա գտնվող Դանթարի շուկան, առևտրական և արհեստավորական շարքերը, իջևանատները և այլ շենքերը քանդվել են XXդ. 20-30-ական թթ.:



երևան քաղաքի պատմության մասին կան շատ ուսումնասիրություններ: Սակայն միջնադարյան և հետագա պատմության շրջանը հնագիտական առումով քիչ է ուսումնասիրվել: Մեր աշխատանքները համարավորություն տվեցին որոշ չափով երևան հանել երևանի XVIII-XIXդդ. աշխարհիկ շինությունների ձևի և բնույթի հետ կապված որոշ մանրամասներ: Նույն շինությունների միջից և շրջապատից հայտնաբերվել են XII-XIXդդ. նյութական մշակույթի սակավաթիվ բեկորներ (ջնարակած խեցեղեն, հախճապակե անոթներ, ապակի, քարե և երկաթե աշխատանքային գործիքներ և այլն):

Հետաքրքիր էր Աբովյան փողոցով «Արմենիա» հյուրանոցի ուղղությամբ ձգվող տուֆ քարե խողովակաշարը (Նկ. 4): Տարբեր տարիներին պատահական գտնված նմանօրինակ խողովակներ պահպանվում են երևանի մի քանի թանգարաններում: Գրավոր աղբյուրները վկայում են, որ քաղաքն ունեցել է ոռոգման զարգացած ցանց. քաղաքին ոռոգման և խմելու ջուր էին մատակարարում դեռևս մ.թ.ա. VIIդ. ուրարտացիների կառուցած Թոխմախ լիճը, Դալմալի, Աբուհայաթի, Նորագյուղի և Մամռիի ջրանցքները: Վերջինս 1031-1041թթ. կառուցել է Ապիրատ իշխանը, որի մասին իր «Ժամանակագրության» մեջ հիշատակում է Մխիթար Այրիվանեցին:

Հայտնաբերված նյութի բազմազանությունը վկայում է քաղաքի անընդհատ զարգացումը այդ ամբողջ ժամանակաշրջանում: Պեղումներն անավարտ են և հետագա ուսումնասիրության կարիք ունեն:



Նկ. 1.



Նկ. 2.





Նկ. 3.



Նկ. 4.



Նկ. 5. Երևանի համայնապատկերը ըստ Շարդենի, XVIIդ.:



## ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱՊԴ	Արցախի պետական համալսարան
ԵՃՇԴ	Երևանի ճարտարապետաշինարարական համալսարան
ԵՊԴ	Երևանի պետական համալսարան
ԷԳԹ	Էջմիածնի գավառագիտական քանգարան
ԷԹ	Էրեբունիի քանգարան
ԿԻ	Կենդանաբանության ինստիտուտ
ՀԱԻ	Հնագիտության և ազգագրության ինստիտուտ
ԼՀԳ	Լրաբեր հասարակական գիտությունների
ՀՀԴ	Հայաստանի հնագիտական հուշարձանները
ՀՊԹ	Հայաստանի պատմության քանգարան
ՊԲԴ	Պատմա-բանասիրական հանդես
ՊՍԺ ԳՀԿ	Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն
ԱՊԱ	Археологические памятники Армении
ԴԱՆ	Доклады академии наук
ԵԳՄ	Ереванский государственный университет
ԻԱՅ	Институт археологии и этнографии
ԻԵ	Институт ботаники
ԻՅ	Институт зоологии
ԻՓԺ	Историко-филологический журнал
ԿՏԻԻՄԿ	Краткие сообщения Института истории материальной культуры
СNRS	Centre National de la Recherche Scientifique

## ԲՈՎԱՆԴԱՎՈՒԹՅՈՒՆ

<i>Габриелян И., Гаспарян Б., Манасерян Н., Мирзоян Л.</i> НОВОЕ ПАЛЕОЗООЛОГИЧЕСКОЕ МЕСТОНАХОЖДЕНИЕ УЙЦ-2 .....	5
<i>Երիցյան Բ., Թադևոսյան Ս.</i> ՄՈՒՇԱՎԱՆ –1 ԿԱՅԱՆԸ ԵՎ ՆՐԱ ՕԼԴՈՒՎԱՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ .....	12
<i>Гаспарян Б., Нагапетян С., Саркисян Г., Габриелян И.</i> КАМЕННЫЙ ВЕК ТАШИРСКОГО ПЛАТО .....	17
<i>Խեչոյան Ա., Գասպարյան Բ.</i> ԳԵՂԱՄԱՎԱՆ-1 ՔԱՐԱՅԻ ԺԱՅՈՒՆԿԱՐՆԵՐԻ ԳԵՂԱՐՇԵՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՓՈՐՉ .....	28
<i>Бадалян Р., Аветисян П., Ломбард П., Шатеньев К.</i> ПОСЕЛЕНИЕ АРАТАШЕН .....	34
<i>Քալումբի Դ., Բադալյան Բ.</i> ՆԵՕԼԻՏ– ԷՆԵՕԼԻՏԻՇԵՍԿԱՅԱ ԿԵՐԱՄԻԿԱ ՍԵՂԵՆԻՅԱ ԱՐԱՏԱՏԻՆ .....	42
<i>Հովսեփյան Ռ.</i> ԱՌՍԱՇԵՆԻ ՆԵՈԼԻԹՅԱՆ ԲՆԱԿԱՏԵՂԻ ԴՆԱԲՈՒՄԱԲԱՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԸ .....	51
<i>Սիմոնյան Դ., Խաչատրյան Լ.</i> ՇԵՆԳԱԿԻԹԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 2003թ. ՊԵՂՈՒՄՆԵՐԸ .....	56
<i>Թումանյան Գ.</i> ԱԳԱՐԱԿԻ ԴՆԱՎԱՅՐԻ I ՏԵՂԱՄԱՍԻ 2002թ. ՊԵՂՈՒՄՆԵՐԸ .....	60



*Геворкян А.*  
 ТОРГОВЛЯ МЕТАЛЛОМ В РАННЕБРОНЗОВОМ  
 ВЕКЕ АРМЕНИИ ..... 67

*Худавердян А.*  
 ФАКТОРЫ ВНЕШНЕЙ СРЕДЫ В ОБРАЗОВАНИИ  
 НОЗОКОМПЛЕКСОВ У НАСЕЛЕНИЯ  
 ЛАНДЖИКСКОГО НЕКРОПОЛЯ В ЭПОХУ РАННЕЙ  
 БРОНЗЫ ..... 75

*Հայրապետյան Ա.*  
 ՎԱՂ ԲՐՈՆԶԵԴԱՐՅԱՆ ՎՋՆՈՑ ԳԵՂԱՐՈՏԻՑ ..... 78

*Խանգաղյան Է.*  
 ԼՃԱՇԵՆԻ ՎԻՇԱՊԸ ..... 86

*Պետրոսյան Լ., Ենգիբարյան Ն.*  
 ԱՂԱՎՆԱՏԱՆ ԴԱՄԲԱՐԱՆԱՂԱՇՏԻ 2003 ԹՎԱԿԱՆԻ  
 ՊԵՂՈՒՄՆԵՐԸ ..... 92

*Մելիքյան Վ.*  
 ԱԳԱՐԱԿԻ ՄԻՋԻԲՐՈՆԶԵԴԱՐՅԱՆ ԽԵՑԵՂԵՆԻ  
 ԲՆՈՒԹԱԳՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ ..... 102

*Бадалян Р., Аветисян П., Смит А.*  
 СВЯТИЛИЩЕ ПОЗДНЕГО БРОНЗОВОГО ВЕКА  
 ГЕХАРОТА ..... 109

*Линдси И.*  
 ЮЖНАЯ ЧАСТЬ НИЖНЕГО КВАРТАЛА  
 ЦАХКАОВИТСКОГО ПОСЕЛЕНИЯ В ПОЗДНЕМ  
 БРОНЗОВОМ ВЕКЕ ..... 116

*Ղևեքյան Ա.*  
 ՀԱՅԱՍՏԱՆ-ԱՌԱՋԱԿՈՐ ԱՍԻԱ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ  
 ՓՈԽԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ ..... 125

*Գնունի Ա., Խաչատրյան Գ.,  
 Հմայակյան Ա., Սիմոնյան Հ.*  
 ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ԿԵՐԵՆԻ ԴԱՄԲԱՐԱՆԱՂԱՇՏԻ  
 ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ..... 133

*Պետրոսյան Ա.*  
 ՈՒՐԱՐՏՈՒԻ ԻՇԽՈՂ ՏԱՐԻԻ ԾԱԳԱՆ ՇՈՒՐՋ ..... 135

*Հմայակյան Ա., Հակոբյան Հ., Սանամյան Հ.,  
 Սիմոնյան Հ., Տիրացյան Ն.,  
 Բիշոնե Ռ., Պարմեջիանի Ն.*  
 ՍԵՎԱՆԻ ԱՎԱՋԱՆՈՒՄ 2000-2003 թթ. ԿԱՏԱՐՎԱԾ  
 ՈՒՄՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ..... 145

*Тер-Мартirosos Ф.*  
 РАСКОПКИ НА СЕВЕРНОМ СКЛОНЕ КРЕПОСТИ  
 ЭРЕБУНИ ..... 147

*Քալանթարյան Ի.*  
 ԱԳԱՐԱԿԻ ՆՈՐԱՀԱՅՑ ԺԱՅՈՒՓՈՐ ԴԱՄԲԱՐԱՆԸ ..... 154

*Մարտոյան Գ.*  
 ՀԱՅՈՑ ԱՆՇԱՐԺ ՏՈՄԱՐԻ ՄԻ ՇԱՐՔ ԱՄԻՄՆԵՐԻ  
 ՎԵՐԱԿԱՆԳՆԱՆ ՓՈՐՋ ՄԴԵՐԻ ԴՊԱՆ ԴԻՑԱՑԱՆԿՈՒՄ ..... 161

*Խաչատրյան Ժ., Կանեցյան Ա.,  
 Կարապետյան Ի., Թրախնա Ջ.*  
 ԱՐՏԱՇԱՏԻ 2003-2004թթ. ՊԵՂՈՒՄՆԵՐԻ  
 ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ..... 168

*Խաչատրյան Ժ.*  
 ԱՐՏԱՇԱՏՈՒՄ ԲԱՑԿԱԾ ՀԱՏՈՒԿ ԾԵՍՈՎ ԹԱՂՈՒՄ ..... 177

*Քոչարյան Գ.*  
 ՏԻՐԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԻ ՎԱԴԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ..... 183

*Փալանջյան Ռ.*  
 ՄԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԱՅԻՆ ԲՈՒՅՍԻ ՄԱՍԻՆ ..... 186

*Սահակյան Ա.*  
 ԵՐՎԱՆԴՅԱՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ ՀԻՄՆԱՐԿԵՔԻ  
 ՊԱՇՏԱՄՈՒՆՔԱՅԻՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ ..... 191



<i>Մանասերյան Ն., Միրզոյան Լ.</i> ՄԱՆՐ ԳԻՇԱՏԻՉ ԿԵՆՂԱՆԻՆԵՐԻ ՈՍԿՐԱՅԻՆ ՄԱՅՈՐՈՂՆԵՐԸ ՀՅՈՒՄԻՍ-ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՂՎԱԾ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻՑ .....	197
<i>Манасерян Н., Мирзоян Л.</i> КОЛЛЕКЦИИ СУБФОССИЛЬНЫХ МЛЕКОПИТАЮЩИХ .....	200
<i>Հակոբյան Ն.</i> ԴԿԻՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԹԱՂԱՄԱՍԻ 1990 -1993, 1999թթ. ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ .....	205
<i>Ղարիբյան Ի., Հակոբյան Հ.</i> ԲՋՆԻԻ 2003-2004 թթ. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ .....	213
<i>Քալանթարյան Ա., Կանեցյան Ա., Հակոբյան Ն.</i> ՊՏՂՆԻ ԱՍՐՈՑԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ .....	220
<i>Սարգսյան Գ.</i> ԶՐԱՈՍՏԻ Ս. ԿԱՐԱՊԵՏ ԵԿԵՂԵՑԻՆ .....	232
<i>Պետրոսյան Հ., Կիրակոսյան Լ., Սաֆարյան Վ.</i> ՀԱՆԴԱԲԵՐԴԻ ՎԱՆՔԻ 2004թ. ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ .....	240
<i>Պետրոսյան Հ.</i> ՇՈՒՇԻ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ .....	247
<i>Բարսյան Ֆ., Ժամկոչյան Ա.</i> ԵՐԵՎԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԻ ԲԱՅՎԱԾ ՍՏՈՐԳԵՏՆՅԱ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ .....	255
ՀԱՊԱԿՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ .....	262

ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԸ

XIII

Եյուրեր  
հանրապետական գիտական նստաշրջանի

КУЛЬТУРА ДРЕВНЕЙ АРМЕНИИ

XIII

Материалы  
республиканской научной сессии

Համակարգչային տեքստը հավաքված է ՀՀ ԳԱԱ  
հնագիտության և ազգագրության ինստիտուտում

Հրատարակչության խմբագիր՝ Ռ. Պետրոսյան  
Ձևավորումը՝ Ս. Հակոբյանի

Ստորագրված է տպագրության 2005թ.  
Տառատեսակ "Arial Armenian", "Arial LatRus",  
17 տպագրական մամուլ  
Տպաքանակը՝ 300, գինը՝ պայմանագրային

«ԳԱՍՊՐԻՆՏ» ՍՊՈՒ տպագրատուն